

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 2  
FÉVRIER  
1928  
PARIS (France)

## «ՀՍՑ ՅԵՂԱՓՈՒՆԿՆԵ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵՆՆ» ՕՐԳԱՆ

### ՆՈՐ ԱԶԴԱԿ ՄԸ

Գրտական առաջին համադումարը, որ տեղի ունեցաւ անցեալ հոկտեմբերին, իսկապէս նոր էջ մը կը բանայ այդ յետամնաց ժողովուրդի ազատագրական պայքարին մէջ:

Քիւրտերը ունեցած են, տարբեր պարագաներու տակ, ժողովներ և խորհրդակցութիւններ: Չինադադարին, երբ «Քարձրացման Ընկերութիւն» մը հիմնեցին Պոլսոյ մէջ, ծերակուտական Ապտիւր-Գատէրի հովանաւորութեամբ, թերթ մըն ալ հրատարակելով, արդէն ձև ու մարմին կառնէր իրենց շարժումը, թէ և չափազանց սահմանափակ, վախկոտ և աստուածպետական:

1925-ի գարնան ապստամբութիւնն ալ արդիւնք էր մասնաւոր ժողովի մը և կանխորոշ ծրագրի մը, բայց Շէյխ Սայիտ գահավիժեցուցող դէպքերը, ձերբակալութեան մը հետեւանդով: Անկէ ի վեր, միշտ անպակաս եղած են խորհրդակցութիւններ:

Իսկ ինչ որ տեղի ունեցաւ 1927-ի աշնան, իր նախընթացը չունի Քիւրտերու պատմութեան մէջ:

Առաջին անգամ է որ, զանազան շրջաններէ և ցեղախումբերէ պատգամաւորներ քով քովի կուգան, քաղաքական զրազիր մը մշակելու, իրենց պահանջները ձեռնկերպելու և կուտակցութիւն մը կազմակերպելու համար: Եւ առաջին անգամ է, որ Քիւրտ մտաւորականներ և զանազան յայտնի դէմքեր հանդիսաւորապէս կուխտեն կուռի և իրականացնել Քիւրտիստանի անկախութիւնը:

Տակաւին կանուխ է, ներկայացնելու համար այդ ձեռնարկին բոլոր մանրամասնութիւնները: Անհրաժեշտութիւն ալ չկայ:

Կը բաւէ ընդգծել երևոյթը, և հարեանցի յիշել կարգ մը եկտեր:

Ինչպէս ըսինք, համադումարին առաջին արժէքը՝ իր նորութեան մէջ է: Եւ իբրև սկզբնաւորութիւն կամ նախախորձ, լուրջ յոյսեր կը ներշնչէ:

Այնտեղ լայնօրէն նկատի են առնւած բոլոր այն խնդիրները, որոնք ծնունդ տւին քրտական շարժման, և հանւած են գործնական բանաձևեր: Տրած որոշումներէն դատելով, գոնէ պայքարող Քիւրտերուն համար այլ ևս զազանիք չէ թէ՛ թուրքիոյ հայ ժողովուրդին ոչնչացումէն յետոյ, կարգը կկած է քիւրտ ժողովուրդին, և բոլոր ոչ-թուրք տարրերուն: Թուրքերը կուզեն տառապէս թուրք հայրենիք ստեղծել, և այդ առաջադրութեամբ, վճռած են ոչնչացնել բոլոր արդելքները, երէկ՝ Հայն ու Յոյսը, այսօր՝ Քիւրտը, Լազը, Չէրքէզը:

Այս համոզման գալէ յետոյ, համադումարին համար դժուար չէր եղրակացնել թէ՛ արիական ժողովուրդները դատապարտուած են կորսնելու, եթէ տէր շրջան իրենց ճակատագրին, ձեռք-ձեռքի դիմադրելով դարանակայ և ջարդարար ուժին, և ստեղծելով անկախ հայրենիք:

Ուրեմն, բնական դաշնակիցներ են Քիւրտերն ու Հայերը, և միւս ոչ-թուրք, հայաձական տարրերը: Դժբախտաբար Քիւրտերը շատ ուշ հասկցան այս ճշմարտութիւնը, և այսօր երկու անգամ աւելի դժուարացած է պայքարը: Բայց և այնպէս, փրկարար է այս սթափումը:

Արդ, անկախ Քիւրտիստան մը չի կրնար իրականանալ, եթէ Քիւրտերը չարունակեն կուռի այնպէս ինչպէս մինչև հիմա, — երբեմն թուրքիոյ, երբեմն Պարսկաստանի և յաճախ Միջագետքի դէմ: Կամ իւրաքանչիւրը իր հաշտոյն:

Մեր տեղեկութեանց համաձայն, համադումարը լրջօրէն անդրադարձած է այս կէտին, և վճռած է հաստատել:

ա. Միացեալ ճակատ, անկախութեան հիման վրա:

բ. Կռիւ միայն թուրքերոյ դէմ, իբրև բուն և ոխերիմ թշնամի:

գ. Բարեկամական յարաբերութիւններ դրացի պետութեանց, մասնաւորապէս Պարսկաստանի, Միջագետքի (Անգլիա) և Սուրիոյ (Փրանսա) հանդէպ:

Այս կերպով, քիւրտ ժողովուրդի ազատագրական պայքարը կը ստանայ ամփոփ և յստակ դիմադրիժ, կապահովուի ուժերու տնտեսում, և կը փարատին շարք մը թիւրքիմացութիւններ՝ հարեւան երկիրներու մէջ:

Միւս կողմէ, մեծ չափով կը մեղմանան ներքին հակամարտութիւնները, քանի որ պայքարող Գիւրտերու ամենէն կենդանի ուժերը համախմբուած են անկախութեան տեսակէտին շուրջ: Այս հոսանքը զօրանալով, այլ ևս երկրորդական կ'ամ կրաւորական վիճակի մը կը մասնուին ներքին ինքնավարութեան կամ թուրքերոյ գերիշխանութեան կուսակից տարբերը — մեծ մասով տղէտ չէյսեր:

«Ազգային ուխտ» հռչակելէ, քաղաքական ծրագիր մշակելէ և համապատասխան կուսակցութիւն մը հիմնելէ յետոյ, քրտական համագումարը ընտրած է Կեդր.Վարիչ Մարմին մը, որ պիտի գործադրէ որոշումները:

Կլուխ մը՝ որմէ մինչև այսօր զուրկ էին Գիւրտերը, կապուած ըլլալով այս կամ այն շրջանի մեծաւորին, չէյսի մը կամ ցեղապետի մը կամքին:

Միամտութիւն պիտի ըլլար կարծել թէ՛ բոլորը անմիջապէս պիտի անդամագրուին նորակամ ազգային կուսակցութեան, կամ պիտի ենթարկուին Կեդր. Մարմնին: Այդպիսի հրաջէ՛ մեր մէջ ալ չէ կատարուած, հակառակ սնբաղգատելի յատանդիմութեան:

Բայց կորկը կազմուած է, և լուրջ ու յարատև աշխատանքով, անշուշտ ուշագրաւ ցանց մը պիտի կազմուի, իւրաքանչիւր համագումարի հետ աւելի ընդլայնելով և խորանալով: Այս տեսակէտէն մեծ յոյսեր կը ներշնչէ կուսակցութեան կանոնագիր-ծրագիրը, ուր սեղմ է

արտաուել պայմաններ դըրած են թեկնածուներուն համար:

Մնաց որ, թուրքի վրա ծրագրերնէր յղանալով չէ որ շարժում կը ստեղծուի, այլ արիւնտով մկրտուած շարժումը կը ձևակերպուի և կը դուրս սիտեմատիկ ընթացքի մէջ, համաձայն որոշ ուղեգծի մը, և ենթակայ՝ կեդրոնական ղեկավարութեան:

Ապտամարական ընդարձակ շարժումներ չկան այսօր, բայց կան գործողութեանց խարիսիներ: Մասնաւորապէս վառ է Արարատ-Բայազետի հնոցը, ուր թուրք բանակը ծանր անակնկալներու մատնեցաւ անցեալ աշնան, տալով բազմաթիւ մարդկային կորուստներ, գերիներ և թանկագին աւար՝ գէնքի և պաշարի: «Դրօշակ»-ի այս համարով իսկ հրատարակութեան կուտանք այդ կուրսներու մանրամասնութիւնները, համաձայն բոլորովին վաւերական աղբիւրի մը:

Բանի որ արիւնը կը հոսի 1925 փետրուարէն իվեր, ու քրտական անդրանիկ համագումարին շնորհիւ, կազմակերպուած ձեռք մը մէջ կը ամռնէ և՛ քաղաքական և՛ գիւնտրական պայքարը, կարելի է առանց չափազանցութեան ըսել թէ՛ իսկապէս նոր ազդակ մը կաւելնայ Արեւելքի մէջ, ճնշած ժողովուրդներու ազատութեան դատին համար:

Քիւրտ ռազմիկներն ալ կրնան վրիպիլ և տուժել: Կրնան դարհուրելի յուսախաբութեանց մատնուիլ ներսէն և դուրսէն, դաւաճանութեանց կամ գերազանց ուժերու առջև:

Ինչ փոյթ: Վիճակը ձգուած է և ուխտը կըրած: Ազատութիւն կամ մահ: Ընկերը հօրդ սպանիւն ալ ըլլայ, մէկտեղ պիտի քալես և կուրս, կըսէ Գիւրտին երդումը:

Եւ քանի որ այդ երդումը կայ, կը նշանակէ թէ արդէն պատրաստ է սերունդ մը, թուրքիան ճակատէն և կողէն խոցոտելու, հայրենիքն ու ազատութիւնը անոր արիւնոտ ժանիքներէն խլելու համար:

Պէտք է ուրախութեամբ արձանագրել քրտական անդրանիկ համագումարը, իբրև ամուր գրաւական մը յեղափոխական գիտակցութեան և մարտական ուժերու դասաւորման:

### Փ Ե Տ Ր Ի Ա Ր 18

Անոնք որ Հայաստան չեն եղած, դժուար կը հասկնան այս թւականին ամբողջ իմաստը:

Տակաւին այսօր ալ, շատերուն համար Փետրուար 18-ը տեսակ մը կարիքածախնդրութիւն» է, իշխանութեան կուր:

Եթէր ստրի է անցեր, և հարկ է նորէն ու նորէն բացատրել թէ, ինչ որ սեպի ունեցաւ 1921 փետրուար 18-ին, իսկապէս հետանք էր անհանդուրժելի, վայրենի և ընդվզեցուցիչ կարգ ու սարքի մը:

Բագէն Երեան զրկուած Ռեվկոմը, առաջին օրերուն երևութապէս հաշտարար, շուտով մոռցաւ ինքզինքը: Մոռցաւ ամէն շափ ու սահման, և ստեղծեց այնպիսի միկնուտը մը, ուր կարելի չէր շնչել:

Հայածանք և բանասիրութիւն, առանց դասակարգի, դաւանանքի և ստրիքի խարութեան: Բռնապարւում ամէնէն զազրելի ձեւով: Կեկերում և բանութիւն՝ մինչև քնտանական յարկերը: Երկրին թշուառներուն յատկաց-

լած ալիւրի և կաթի յափշտակութիւնը և արտածումը դէպի Կէրբէշան և Խուսաստան: Հազարէ աւելի հայ սպաններու իրքըսվարի աքսորը: Անոք կատարութիւն՝ բոլոր սրտիս խորը և արցունք՝ շատերու աչքին մէջ...

Եւ արեան խրախճանք բանտերուն մէջ, գիշերանց, կացինով և տապառով, հայ, ուս և թուրք դահիճներու ձեռքով:

Կը թւի թէ նորեկները իրենց խնամքին յանձնած ժողովուրդին համբերութիւնը կուզէին փորձել, մէկ օրէն միւսը մէջտեղ հանելով իրենց սարսափի ծրագիրները, և մտրակն ու կացինը շաչեցնելով աչ ու ձախ:

Փետրուար 16, փետրուար 17, — այլ ևս կասկած չկար հետապնդած քաղաքականութեան մասին:

Մեթոտիկ ճշգրտութեամբ մը պատրաստած էր ծրագիրը, — գլխատումը քաղաքական, մտաւորական, գինւորական ուժերուն: Ծրագիր մը որ իր գլխատըր գիծերով կը յիշեցնէր 1915-ի հայաշինջ սարսափները. ստոր, քինախնդիր և դաւադրական, ինչպէս իրքականը, և դրդուիչ ու գազանային, ինչպէս միւսը:

Մինչև փետրուար 16, դեռ կային լուստեսներ: Կամ խոհեմութեան, համբերութեան բարբիջն հաւատացողներ:

Բայց երբ Երևանի բանտի պարիսպներէն դուրս պոռթկաց առաջին կացինահարներու ահեղ հուզվարքը, երբ դահիճները, շմբարած՝ արեան տեսարանէն, կը պատրաստէին «ի կատար ածել» իրենց դժոխային ծրագիրը, այլ ևս վիճակը նետած էր:

Եւ մոնչեց Մեծ Համբը, շղթայակապ ժողովուրդը, փրկելով միւս մահապարտները, և ինքզինքը:

\*\*\*

Բառերն ու նախադասութիւնները անգօր են, պատկերացնելու համար այդ պոռթկումը, առնական և ահարկու:

Ազգերու պատմութիւնը զիչ է արձանագրած այդպիսի տարերային պոռթկում:

Ճրանացիներն. ունեն իրենց Պասթիլը: Բայց Ճրանոսն դարաւոր պետութիւն էր, իսկ Հայաստանը դեռ երէկ նետած շղթաները, դեռ հազիւ ոտքի կանգնելու և քայլելու փորձեր կատարած:

Ըմբոստացած՝ իր սեփական գիտակցութեամբ, իբրև գէնք ունենալով այն ինչ որ ձեռքին տակ ինկած էր, — այդ ժողովուրդը յաջողեցաւ քանրչորս ժամէն վերահաստատել իր ազգային իշխանութիւնը, լեզուապատու փախուստի մատենի վարձու ընծաւորները:

Կարճ տևեց այդ յաջողութիւնը, — անարդ, արիւնոտ լուծի մը թօթափումը: Հազիւ երկու ամիս:

Բայց ինչ որ զգաց ու տեսաւ հայ ժողովուրդը այդ օրերուն, կը տե՛կ մինչև այսօր:

Հայաստանի Հանրապետութեան հաստատումէն ի վեր, առաջին անգամն էր, որ այդ ժողովուրդը իր ամբողջ էութեամբ կը դողար, կը հեւար ազատութեան գիտակցութենէն:

Ու թերեւս առաջին անգամ էր, որ այնքան խորապէս կըմբռնէր սեփական հայրենիքի, սեփական իշխանութեան պահանջը:

\*\*\*

Եօթը տարի է անցեր, և մարդիկ ի գուր կը ճգնեն նեմացնել Փետրուար 18ի արժէքը, ռուսական դատապարտելով իրենց խիղճն ու յիշողութիւնը, վերելվար շրջելով ապացուցւած, անվիճարանելի փաստեր:

Երբ շարժումը յաղթանակով պսակեցաւ և տեսականութեան յոյսեր կը ներշնչէր, — բոլորը տէր էին անոր, բոլորը իրենց համակրանքն ու գործօն մասնակցութիւնը կը հրաշակէին, կաւեռէին ի լուր աշխարհի:

— «Մենք ալ կանք...»

Ուրիշ ընթացք առին դէպքերը: Հայաստանի ժողովուրդը նորէն ինկաւ լուծի տակ, յուսակտուր՝ աշխարհէն, և տեղի տալով ուսական թնդանութիւն առջև:

Եւ ահա — ամէկը իր պատեանը քաշած, քարոծելու համար «մեղաւոր»ը: Ուրիշ խօսքով՝ Դանակցութիւնը:

Երէկ չէին հանդուրժեր որ Դանակցութիւնը միայն վայելէ ամբողջ փառքը, իբրև՝ վարիչ ոյժ: (Եւ Դանակցութիւնը ոչ մէկ ատեն յաւակնութեան չունեցաւ իր մենաշնորհ նկատելու համաժողովրդական այդ պոռթկումը): Այսօր՝ ձախողանքէն յետոյ՝ ամէն միջոց ներքի կը գտնեն, և լալով իրենց կամկար ձեռքերը իբրև անճարակ Պիղատոսներ, կուրանան ու կը հայհոյեն...

Ինչ փոխթ: Փետրուար 18ը այնպիսի լուսաւոր կէտ մըն է մեր ժամանակակից պատմութեան մէջ, որ եթէ մարդիկը լուսն, քարերը պիտի խօսին: Եթէ ողջները ուրանան, մեռելները պիտի յիշեցնեն:

Եւ մենք վկաներու պէտք չունինք: Դատախազը՝ Հայաստանի ժողովուրդն ինքն է: Եւ եթէ կուզէք, նոյն ինքն Մոսկուսն: Որովհետև, ինչ որ տեղի ունեցաւ խորհրդային իշխանութեան վերահաստատումէն յետոյ, իբրև վարչական փոփոխութիւն և մեղմացում, ուղղակի հետեանքն էր Փետրուար 18 ի յեղափոխութեան:

Փետրուար 18ն էր, որ գրել տաւ Լենինի հռչակաւոր նամակը Միասնիկեանին, խոհեմութեան իմաստուն յորդորներով: «Հայաստանը Թուսաստան չէ»:

Բայց ինչ որ հասկան Լենինները, մինչև այսօր ալ անըմբռնելի կը մնայ Երևանի հին ու նոր մարդպաններուն:

Անոնք, ապրելով հանդերձ Փետրուար 18ի սարսափին տակ, փոխանակ զգաստանալու և իրենց լուծը տանելի դարձնելու, տարւէ տարի, և իւրաքանչիւր տարի աւելի խելազար թափով, կը ճզնեն ապացուցանել թէ միանգամ ընդ միւշտ անարժան են կառավարելու այս ժողովուրդը:

Բռնութիւն և կեղեքում, բանտ և արքայ, կազմալուծում և զինաթափում, — ահա ուղեղի մը որուն ելքը, ամէն պարագայի մէջ, տիրող իշխանութեան զօրացումը չապացու-

ցանք, այլ ատելութեան խորացումը՝ այդ նոյն իշխանութեան դէմ:

Եւ եթէ այսօր, մեր գերագոյն շահերը կը հարկադրեն խափանել ո՞րնէ ապստամբական շարժում. եթէ Դանակցութիւնը իր անխորհիւն կը փորձէ, նոր Փետրուար 18եր կանխելու համար, այդ չի նշանակիր թէ երբ և իցէ չպիտի գայ հասուցման ժամը:

Պատմութիւնը վճիռներ ունի, որոնք ժամանակի հետ կապուած չեն. մանաւանդ երբ ամբողջ ժողովրդի մը ճակատագիրն է, որ կը տատանի նժարին մէջ:

# Ա Ր Ա Ր Ա Տ Ի Կ Ռ Ի Ի Ն Ե Ր Ը

(Մի էջ քրտական շարժումներէից)

Արարատը այժմ դարձել է քրտական ապստամբութեանց օջախ:

Ապստամբական շարժումներն այնտեղ սկսեցին 1925թ. փետրու. 18-ից, իբրև հետեանք թիւրքերի կողմից գործադրուող ձերբակալութիւնների, տեղահանութիւնների և քաղաքների:

Բայցվտի նշանաւոր Շէյխ Իբրահիմին և Իսաբէկին բռնելուց յետոյ, երբ կառավարութիւնը փորձեց Իբրահիմ աղա Հսկէ թելլօին էլ ձերբակալել, վերջինս փախաւ և ապաստանեց Արարատ: Կառավարութիւնը մէկ վաշտ զօրք ուղարկեց նրան ձերբակալելու համար: Հսկէ թելլօն զիմազիբց գէնջով և սպանելով մէկին ու վիրաւորելով երեքին՝ յետ շարտեց թիւրք զինուորներին:

Սա Արարատի առաջին կռիւն էր — Արարատի փետր. 18-ը:

Երկրորդ կռիւը տեղի ունեցաւ այս դէպքից մօտաւորապէս 25 օր անցած, թիւրք ուժերը 400ից աւելի էին. քիւրդերը՝ 50 հոգի: Բախումը պատահեց ՄԵԾ ու Փոքր Մասիսների արանքում: Քիւրդերը վարժ ու ծանօթ էին տեղին, թիւրքերը՝ անսովոր ու անծանօթ: Կռիւը տեղեց մէկ օր և վերջացաւ թիւրքերի ջախջախելի պարտութեամբ: Քիւրդերից սպանեց Հսկէ թելլօի եղբայր Մամադը աղան և երկու հարուկներ, իսկ թիւրքերից՝ 300 հոգի: Քիւրդերի ձեռքն ընկան երկու լեռնային թնդանօթ, 4 թեթև զնդացիք, բաւականաչափ ռազմաթիւրք և սպանածների գէշերը: Այս անսպասելի յաղթութիւնը մեծ ողևորութիւն պատճառեց արարատցիներին, որոնք կամաց-կամաց սկսեցին հաւաքուի Հսկէ թելլօի շուրջը:

Երկրորդ յարձակողականին թիւրքերը ձեռնարկեցին այս պարտութիւնից մօտաւորապէս 20 օր յետոյ: Այս անգամ թիւրքական ուժերը հասնում էին եօթը հարզդ զինուորի, իսկ քիւրդերը 370 էին: Թիւրքերը յարձակողականը կատարեց 3 թևով. ՄԵԾ ու Փոքր Մասիսների մէջտեղից, Մոլաթանից և Զօրավայրից:

Վերջին վայրից առաջանում էր հեծելազօրը: Ընդհարումը տեղի ունեցաւ Թեպարէ և Մըխ դադաթների միջև: Ռեժերը անհաւասար էին: Թշնամու խիստ ճնշման տակ քիւրդերը զաւեցին և ամբացան թիւրք-պարսկական սահմանի կցման վայրի անտուկ դիրքերը: Կռիւը տեղեց երեք օր: Հոյս չորրորդի գիւրքեր թիւրքերը զիմեցին անակնկէլ նահանջի՝ թալանելով և վառելով իրենց ճանապարհի վրա ընկած բոլոր գիւղերն ու վրանները: Թիւրքերը զեցեցին-տարին քրդական դիւղերից մօտ 10,000 զլուխ ոչխար, 1000 զլուխ խոշոր անասուն և 500 ձի: Նրանց ձեռքն ընկան նաև նախորդ կուում իրենց թողած երկու թնդանօթները: Քիւրդերն ունեցան միայն մէկ վիրաւոր, իսկ թիւրքերը՝ 50-ից աւելի սպանած:

Այս անյարողութիւններից սկսած մինչև 1927 թ. մայիսը այլևս կռիւներ տեղի չունեցան Արարատում. թիւրքերը աշխատեցին խաղաղութեամբ, բաւակցութիւնների միջոցով կարգադրել խնդրեր: Երեք անգամ բանակցութիւններ կատարեցին, որոնք միշտ էլ վերջացան անյարող: Բոլոր առաջարկներին քիւրդերը տւին մերժողական պատասխան:

1927 թ.ի մայիսից սկսած քիւրդերը անցան յարձակման և 200 հոգիից խմբով արշաւեցին Բայազետի վրա: Յարձակումը կատարեց զիւրբով, երեք թևով: Կապի անկանոնութեան և վատ կազմակերպութեան պատճառով ձեռնարկը ձախողեց: Մի ձի կորուստ տարավ՝ քիւրդերը նահանջեցին և ամբացան իրենց քարքարուտների մէջ: Թիւրքերից սպանեց մէկ մարդ և վիրաւորեցին երեքը:

Չորրորդ յարձակողականը սկսեցին թիւրքերը 1927 թ.ի սեպտեմբերին: Յարձակումը կատարեց երեք կողմից: Մանակցում էին երկու Փրզայ և մէկ կողմը, քիւրդերից՝ 450 կուղ: Նախօրք կայացած համաձայնութեամբ պարսկներն էլ փակեցին քիւրդերի նահանջի ճամբան դէպի Պարսկաստանի սահմանը: Հէնց առաջին օրից թիւրքերին յարողեց պաշարման ռզակի մէջ առնել քիւրդերին, որոնք 12 օր շարունակ

օրհասական կուլու մղեցին: Հետզհետէ սկսեցին նեղել փամփուշտի պակասեց, բայց, յանկարծ, ամենտաղ-նապալից ու վճռական բողջին պարսկական սահմանից օգնութեան հասան սաքանցիները, իրենց երիտասարդ ցեղապետ Մուսայի գլխաւորութեամբ:

Ճարպիկ ու յանդուգն մի շարժումով սաքանցիները անցան թիւրքերի թիկունքը և անկանկար ու շեշտած հարւածներ իջեցրին թշնամու գլխին: Թիւրքերի մէջ ստով եկաւ տարերային խուճապ: Քիւրդերն օգուեցին հանդամանքից և իրենց սահմանները մաքրեցին թիւրքական ուժերից: Քիւրդերի կորուստն էր՝ սպանւած 8 մարտիկ, 2 երկխայ և 1 կին, վիրասուր՝ 9 հոգի: Թիւրքերը աւին 600 սպանւած — մեծ մասամբ զերի բռնւած ու կտորուած: Քիւրդերի ձեռք ընկան 8 մեծ ու փոքր զնդացիները, 80 ձի և ջորի, մեծ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք: Գերեցին նաև մի ալյախ հրամանատար, մի թապուրի հրամանատար, 3 իզբաշի, 2 զարիթ, Փրզա եամբերին, ալյախ եամբերին և երկու բաշ շաուշ: Գերիները մի քանի օր պահուեցին զերդ աքսորականների հետ փոխանակելու մտքով, բայց յետոյ ազատ արձակեցին:

Այս կուլից յետոյ, թիւրքերը 40 օր դերք պահեցին Արարատի դիմաց և ապա թաշւելով՝ ցրեցին Իրզիլը, Բայազէտ, Դիսանի ու Դարաբիլիսէ: Թիւրք զօրացրուից միամտելով՝ զերկուրը ենթադրեցին, թէ այլ ևս յարձակումներ չեն լինի: Բայց թիւրքերն օգուելով նրանց անհողութիւնից՝ ձեռնարկեցին հիմնադրուող յարձակողականին, որ տեղի ունեցաւ 1927թ. հոյսի. 15-ին:

Թիւրքական մի ալյախ դիշերով եկաւ պաշարեց Խորխանը և սկսեց կրակի տալ դերդը: Ժողովուրդը անակնկալի եկաւ, բայց օգուելով դիշերայ մոթից՝ փախաւ ապաստանեց մոտակայ անտառը: Այստեղ ցրիւ եկած ուժերը հաւաքեցին և 25 հոգով դիմեցին հակադրոհի: Այս անգամ խուճապի մատնեց թիւրք զօրքը: Քիւրդերը, էյուբ աղայի գլխաւորութեամբ, զեցին նրանց մինչև Լարադոյիներ: Թիւրքերը թողին 52 սպանւած: Գերի ընկաւ ալյախ հրամանատարը երեք սպաների հետ միասին, որոնք բոլորն էլ սպանեցին զիւրդերի կողմից: Քիւրդերը աւին միայն մէկ վերասուր: Քիւրդերի ձեռքն աւար անցան 3 մեծ և 2 փոքր զնդացիք, 12 ջորի և 48 սնդուկ փամփուշտ:

Առաջին հայեացքից կողմերի ուժերի և կորուստի համեմատութիւնը անհաստատելի է թուում, բայց անհերքելի փաստ է: Թիւրքերի գոհեցրը բազմապատիկ աւելի շատ են, քան զիւրդերինը: Պատճառը Արարատի անմատչելի խոչ ու խողոչներն են, ահաւոր Ժայռերն ու փոսերը, որոնց ամէն մի անկիւնը ծանօթ է զիւրդերին, մինչդեռ թիւրք գիւնորները կորուսւ են մէջը, մատնուում արսապի և հեշտութեամբ փախուում:

Քիւրք զործող անձանց մէջ կենտրոնական դէմքը Իրբահիմ աղա Հսկէ Թեյլօն է: Միւս գլխաւոր զերակաւորներն են, աստիճանական կարգով, Շէյխ Արզիւլ Գանտըրը, էյուբ աղա Խոթէն, էյուբ աղա Հսկէ Թեյլօն և Սաքանցի Մուսա աղան: Սրանք բոլորն էլ ազդեցիկ ու հեղինակաւոր մարդիկ են, և ժողովուրդը շատ է կարգաւ նրանց հետ:

Գրգռական շարժումը, ինչ և լինեն այս կամ այն ընդհարումները, արագորէն ծաւալում ու խորանում է: Քիւրդերի մէջ ուժեղանում է ստեղծութիւնը դէպի թիւրքերը և զերդ աղային դադափարի զիտակցութիւնը: Կասկածից վեր է, որ թիւրքերին շատ է զբաղեցնում զիւրդերի ընթացքը: Հէնց այն փաստը, որ անվերջ արշաւանքներ են կազմում և հազարաւոր զինուորներ շարժում Արարատի պէս, վերջին հաշուով, տեղական ընդթ կրող ապստամբութեան դէմ, ցոյց է տալիս, որ Անդորայի կառավարութիւնը ամէն կերպ աշխատում է հանդեպի աւելի և աւելի բոցավառող հրոհներ:

Հետաքրքրական է մի ուրիշ հանգամանք: Քիւրդերը ամէն կերպ խուսափում են պարսկական սահմաններում հակադեմոսական քայլեր կատարելուց. Պարսկաստանը նրանց համար բարեկամ երկիր է. զբողական հարցի լուծումը նրանք փնտրում են Պարսկաստանից զուրս: Ընդհակառակը, թիւրքերը ո՛չ մի ճիշտ չեն խնայում՝ զբողելու համար պարսիկներին զիւրդերի դէմ: Միւս կողմից, զբողում են զիւրդերին, որ խռովութիւններ հանեն Պարսկաստանում: Անզօրայի նպատակն է կուլեցնել պարսիկներին ու զիւրդերին և իր դուրեւր ապատել զբողական ցաւից: Դժբախտաբար, պարսիկ վարիչներից ոմանք էլ ենթարկում են թիւրքական պրովոկացիային և բոլորովին անտեղի կերպով հայածանքներ հանում զիւրդ աչքի ընկնող անձերի դէմ: Այդպիսիներից ոմանք այժմ բանտարկւած են Թաւրիզում և այլուր: Պէտք է սակ և այն, որ հակա-զիւրդ քաղաքականութիւն վարողները գլխաւորապէս առաջատարանցի պարսիկ պաշտօնեաներ են, որոնք ներքին համակրանք ունեն դէպի թիւրք ազգայնականները:

Արարատը զիւրդերի համար, այս պահուս, նոյնն է, ինչ որ Զէյթունը կամ Սասունն էին մեզ համար: Նա ունի ահադին դատարարական նշանակութիւն զիւրդ ժողովրդի համար: Նրա չնչով ու ջերմութեամբ հատուանում է զիւրդ ազատագրական պայքարը: Թիւրքերը նրանից վախենում են:

Ե. ՍԵՆԵԱՆ

# ՌՌԻՍ-ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Պարսկաստանի ելևմտական վիճակը (Ֆինանսներ), բնականաբար, կախումն ունի ինչպէս իր ներքին տնտեսական կեանքի կարգաւորումից, այնպէս և արտաքին առևտրի զարգացումից: Եւ որովհետև և՛ մէկ, և՛ միւս տեսակէտից երկրի զարգացումը ենթակայ է եղել և է՛լ տակաւին բազմապիսի կաշնակումների, դրանից էլ՝ նրա ելևմտային վիճակի խղճուկ պատկերը:

Մեր նիւթին չէ վերաբերում խնդրի ներքին-պարսկական կողմը շօշափել: Այսչափը ասենք միայն, որ Պարսկաստանի տնտեսական-ելևմտային վիճակը երբեք էլ հիմնովին չի բարւոգւի, մինչև որ ազգաբնակչութեան հիմնական գանձածը՝ գիւղացիութիւնը ձերբազատի — ո՛չ միայն քաղաքականապէս, այլ և տնտեսապէս: Որով՝ ինչպիսի քաղաքը, որ ցարգ արժարժուած իսկ չէ Պարսկաստանում և կազմում է ամենաթոյլ կողմը, հարկ է որ իր լուծուած ստանայ յարուստ գիւղացիութեան, որպէսզի երկիրն էլ զարգանայ տնտեսապէս և գորանայ ելևմտապէս: Պաներին ու մեծ ու փոքր աւատապետներին և ցեղապետներին քաղաքականապէս թուլացնելը և կամ մինչև իսկ չեզոքացնելը — դեռ գործի կէսն էլ չէ: Գիւղացին բաւականաչափ հող պիտի ունենայ, նրա տնտեսական մակարդակը և գնուղական կարողութիւնը պէտք է բարձրանայ, որպէսզի ի վիճակի լինի աւելի աւատօրէն էլ հարկ տալ, լեցնել պետական գանձը: Ուրիշ խօսքով՝ գիւղացիութիւնը, որ հարկատու զլխատր տարրն է երկրի, վերջինիս Ֆինանսների զլխատր աղբիւրը, իրեն համապատասխան վիճակի մէջ էլ պիտի դրել, որպէսզի կարենայ իրական պտուղով պետութեան յենարան: Այն ինչ, որ պարսկական հարադատ իրականութիւնն է, քամելով գիւղացիութեան նիւհարիկ օրգանիզմի նիւթերը մի կողմից և հարկային ծանրութիւնից ազատելով կամ թեթեւացնելով ունելով ու մանաւանդ հողատէր խաւերը միւս կողմից՝ երբեք էլ չեն բուսելի երկրի ելևմտական վիճակը: Ինչ խօսք, որ հողային և հարկային շարքերի արմատական փոփոխութեան հետ միասին՝ պէտք է որ բնական հարստութիւններ ևս մշակեն, ինչպէս նաև հազարակցութեան միջոցները զարգանան, ժողովրդի մշակութային-կրթական մակարդակը բարձրանայ, որպէսզի Ֆինանսներն էլ իրականացնեն որ առողջանան:

Թէ չէ՞ այն ամէն փորձերը, ինչ որ մինչև օրս ստաւել կամ պահատ չափերով արւել են կամ արւում են, սոսի կիսամիջոցներ են, ո՛չ աւելի:

Մահմանափակելով խնդրի մեր նիւթի՝ արտաքին և մասնաւորապէս ուս-անդլիսական հակամարտութեան շրջանակում, Մարգամ Եսաւտրի՝ օրինակով մենք տեսանք արդէն, թէ ինչպէս «Հովանաւոր» պետութիւնները հիմնում իսկ խեղդել են պարսից կողմից արւած ամէն մի փորձ՝ կազդուրելու սեփական Ֆինանսները: Աւելի լաւ վաճխան չեն ունեցել նաև բելգիացի մաք-

սային պաշտօնեաների ջանքերը այդ ուղղութեամբ: Ռուսաստանի և Անգլիայի հաշիւն չէ եկել միշտ էլ, որ Պարսկաստանը Ֆինանսապէս սեփական ոտքերի վրա կենայ. այն աստիճան, որ էմիսիայի իրաւունքն իսկ իրենը չէ եղած:

Ձի կարելի ասել, թէ դրութիւնը այդ տեսակէտից շատ բարեւաւած լինի յետպատերազմեան շրջանում: Յայտնի է, որ վերջին հինգ տարիների ընթացքում, 1922-ից սկսած, պարսից կառավարութեան հրահրով թւհրանում աշխատել է ամերիկացի ելևմտապէս-խորհրդակաշնների մի յանձնաժողով՝ Դ-ր. Միլսպայի (A. C. Millspaugh) զլխատրութեամբ:

Իր և իր գործակիցների հնգամայն գործունէութեան մասին Պարսկաստանում՝ Միլսպայի վերջերս Նիւ-Եօրքում հրատարակել է մի դիրք: Յառաջաբանում ասած է՝ թւհրանի լրագրիներէից մէկը էրենք ժամանումը Պարսկաստան նմանեցրել է բժշկի այցելութեանը հիւանդին: Որով ամերիկացի ելևմտական խորհրդակաշններին առաջադրած է եղել սկզբից՝ բուժել երկրի հիւանդոտ, ակաւաւոր Ֆինանսները:

Կարելի է ասել, թէ բուժումը իսկապէս որ տեղի է ունեցել ցանկալի չափով: Չենք կարծում: Ապացոյց՝ հողային և հարկային դրութեան բարեփոխման պակասը, որի մասին խօսք եղաւ վերը: Արդեօք պատճառն ա՛ն է, որ բժիշկը ախտաճանաչութիւնը լաւ չէ կատարել կամ գոցէ, չէ էլ կամեցել կատարել, թէ՞ հիւանդի բուժման համար պահանջուած սննդեղէնը և դեղորայքը պակաս է, —այդ թողնում ենք մի կողմը: Փաստը մնում է փաստ: Եւ, անշուշտ, այդ փաստի յարատեման մէջ ո՛չ ուտաները, ո՛չ էլ անգլիացիները վերջին յանցաւորներն են: Թէ և ո՛չ այն աստիճան, ինչ պատերազմից առաջ — ժամանակներին, փոխել են — բայց և այնպէս երբեք էլ չեն պակսել Պարսկաստանի ելևմտական անիւր մէջ խրուղ ձողերը:

Ռուսները և անգլիացիք համահաւասար չափով չէին աչքով են նայել ամերիկացի խորհրդակաշնների վրա: Բոլշևիկները նրանց մեղադրել են յետին նպատակները մէջ, «ամերիկեան կապիտալի հետախոյնները Պարսկաստանում» անասնելով: Ամերիկացիներին, սոհասարակ, մեղադրում են, թէ սրանք Պարսկաստանում ևս, ինչպէս ամենուր, «բաց դռներէ» պահանջը առաջադրելով՝ պատրաստուած են՝ իրենց սղջ հասակով նոյն այդ դռներից ներս մտնել, թէ՛ նրանք անգլիացիներին հետ միացած յանցաւոր ծրարիներ ևն որոճուած չիւսիս. Պարսկաստանի Թաւրի շուրջը: Պակաս չեն մեղադրում, ի հարկէ, նաև անգլիացիներին ու դերմաններին: Միայն իրենք է, որ սուրբ են, հետու ամէն կարգի չար մտքերից: Գա՛ւ լիցի. ինչ որ անում են՝ պարսիկ աշխատաւորները՝ սիրուց վառուած են անում:

Ինչ խօսք, որ այսուհետև էլ անգլիացիները պիտի ուժեղացնեն իրենց դժգոհութիւնը և մեղադրանքը ամերիկացիներէ դէմ, յատկապէս այս վերջին օրերէց սկսած, երբ համաձայնութիւն կայացաւ ռուսական «Նաւթային սինդիկատի» և Նիւ-Յօրքի Standard Oil-ի միջև: Ինչ տարակոյս, միամիտ լինելու չէ՛ և հաւատարմ. մի որպէ, թէ ամերիկացիները իսկապէս որ «անշահանդեր թփռչկներ են» պարզօք հիւանդ գանձի: Տարեկան 150,000 դոլլարը այցելութեան աւելի քան լաւ վճար է՝ մի փոքր կասկածի ենթարկելու համար ամերիկացիների «անշահանդերութիւնը»:

Արդե՞օք այս հիմունքներից մէկը ճակ միւտը և կամ բողբոջ միասին պատճառ են, որ պարսից կառավարութիւնը, ինչպէս, նորբաւ Հաղորդեցին թերթերը, այլ ևս չէ վերանորոգել պայմանագրերը ամերիկացիների հետ, պայմանաժամը լրացած լինելով արդէն: Պարսիկները, ինչպէս երևում է, ցանկութիւն ունեն սեփական ձեռքերի մէջ հաւաքելու իրենց Փինանսների բարելաման գործը:

Արդե՞օք ընդունակ պիտի լինեն նրանք այդ բանին: Արդե՞օք աւելի սուղի չպիտի նստեն սեփական պաշտօնանները, որոնք սովոր են, մեծից փոքր, ամենափրկելի «բաշխիչ»ին:

Այսպէս թէ յանպէս, լուր երևաց նաև այն մասին, թէ պարսից կառավարութիւնը և յատկապէս Ռիզա շահը ցանկութիւն ունեն մինչև իսկ սեփական, ազգային դրամատուռ հիմնելու: Պետական գործարների Փոնդը, որ դեռ Նազիր շահի օրերէց մնացած է մի խոշոր չափով, և որը ներկայիս 40 միլիոն թուրքմանի է հասնում, որպէս թէ մտադիր են վաճառել և ծրագրւած բանկի հիմնադրամ շինել:

\* \* \*

Մնում է մեզ խօսել Պարսկաստանի հաղորդակցութեամ միջոցների և յատկապէս ծրագրւած երկաթուղիների մասին. դարձեալ, հարկաւ, ռուս-անգլիական հակամարտութեան շրջանակում միայն:

Եթէ իսկապէս որ, դեռ մինչև օրս Պարսկաստանի Հաղորդակցութեան միջոցները մի խղճալի պատկեր են ներկայացնում, եթէ ներկայիս էլ, ինչպէս դարեր առաջ, երկրի նահանգները և շրջանները մեծ մասով գուրկ են մնում Հաղորդակցութեան ժամանակակից միջոցներից ու դեռ այսօր էլ ուղտերի ու դրասներից քարտանները լրակատար փթթման մէջ են շահնահաների օրհնած երկրում, — դրանում մեղաւոր են մանաւանդ անգլիացիք և ռուսները, որոնք փոխադարձ հակամարտութեամբ ի չիք են դարձրել ամէն մի փորձ՝ այդ ուղղութեամբ երկիրը առաջադիմութեան ուղիի վրա դնելու: Մերթ մէկը, մերթ միւտս: Երբեմն էլ՝ միասնաբար: Եւ այսպէս, աւելի քան 70-75 տարիներից է վեր:

Այսպէս, դեռ ևս 1870-ական թւականներին անգլիացի բարոն Ռեյտերը—բրիտանական հեռագրական ժամօթ դործակալութեան հիմնադիրը — յարողել էր՝ ժամանակի Նաորէզդին շահից մենաշնորհ ստանալ, հիւսիսից—հարաւ ձկնկեր երկաթուղագիծով կապուից ծովը Պարսից ծոցի հետ կապելու համար: Մենաշնորհը պարունակելիս է եղել ուրիշ կէտեր ևս, դրանց թւում՝ երկաթուղային մի շարք երկրորդական ճիւղեր:

Սակայն, ի՛նչ արին առւանքը: Երբ Նաորէզդինը Պետերբուրգի վրայով Եւրոպա է ճամբորդելիս եղել, շահին Հարկադրել են, որ յետ առնի անգլիացիներին տւած մենաշնորհը: Ու այդպէս էլ եղել է:

Տարբեր ճակատադիր չեն ունեցել ռուսների փորձերը ևս՝ ձեռք բերելու երկաթուղային մենաշնորհներ: Այդ անգամ էլ անգլիացիներն են եղել խուրդի դեր ստանձնողները: Ամերիկացիները համամասն փորձեր էլ երկու ստիւնները միասնաբար են խանգարել միշտ:

Միակ բացառութիւնը կազմեց Առլա-Թարիզ գիծը: Դեռ 1890-ին առնւած մենաշնորհը հազու. 25 տարի յետոյ իրականացնել կարողացան ռուսները: Այն էլ հարց է՝ արդե՞օք Թարիզը երկաթուղու երես պիտի տեսնէր, եթէ պատերազմը վրայ հասած չլինէր, ուր անգլիացիները, արդէն, որպէս դաշնակիցներ և կուտղներ ռուսների հետ կողքի չէին կարող աշխարայ արդիւններ հանել Առլա-Թարիզը երկաթուղագիծի դէմ, մասնաւանդ որ նա գրեթէ բացառապէս պատերազմական նպատակների պիտի ծառայէր: Իսկ գրեալ ընդհանուր էին ռուսների և անգլիացիների համար:

Յայտնի է նաև, որ ռուսները Առլա-Թարիզ գիծից մի ճիւղ էլ անցկացրին մինչև Շարաֆխանէ՝ Ուրմիոյ լճի եզերքներ: Պատերազմի միջոցին նոյն ռուսները մի նեղ-գիծ երկաթուղի էլ շինեցին Շահ Ռուսթից (Նախի-Շևանի շրջան) մինչև Այաշկերտ ու դէպի վան՝ անցկացնելով պարսկական Հողի վրայով (Մաքուի շրջան). ինչ խօսք, այս անգամ առանց իսկ մենաշնորհ խնդրելու կարիքն զգայու: Վերջապէս, Կնդելի-Ղազզին-Թեհրան խնդիրները ևս, ինչպէս նաև Թեհրանը Բաղդատի հետ կապող առևտրական ճամբան, որ շատ բանուկ է այսօր և Պարսկաստանի հարաւը՝ Միջագետքի և աւելի հեռուները տարածուող երկիների հետ կապ պահող զլլխաւոր երակն է, դրանք ևս պատերազմից Պարսկաստանին մնացած իրական ժառանգութիւնների շարքում են:

Յետպատերազմեան շրջանում և մասնաւանդ վերջին երկու-երեք տարիներում նոր փայլի մէջ է մտել երկաթուղային խնդիրը Պարսկաստանում, ինչպէս մի շարք ուրիշ Հարցերում, այս խնդրում ևս Ռիզա շահը կարողացել է ըստ երեւոյթի ռուսների և անգլիացիներին հակամարտութիւն ո՛ւ ճ միայն չեզօքացնել, այլ և օգտագործել սեփական երկրի նպատակները համար:

Այս անգամ խնդիրը այնպէս չէ գրւած՝ Ռուսաստանի՞ն երկաթուղային մենաշնորհ, թէ՞ Անգլիային: Պարսիկները իրենք են ուղում շինել իրենց երկաթուղիները, այլ ևս՝ սեփական միջոցներով: Այսպէս են ստում դռնէ այնտեղից կկած տեղեկութիւնները:

Եւ արդէն իսկ սկսած են աշխատանքները: Առաջին հերթին հիւսիս-հարաւ երկաթուղագիծը պիտի շինուի: Այլ խօսքով՝ բարոն Ռէյտերի ծրագիրը յարուսթիւն է առել: Հարկաւ, երկաթուղու կառուցման մասնագիտական աշխատանքների համար կոչւած են օտար ուժեր ամէն ազգից և մասնաւանդ չեղօք ու քաղաքականօրէն պակաս շահագրգռուած ազգերից, բայց գործի աչքը պարսիկ կառավարութիւնն է, Գոնէ այդպէս են հաւատացնում աշխարհին: Ելումտապէս ևս անկախ է, ստում են: Այդ նպատակին են յատկացած շաքարի և թէլի մաքսերը: Մինչև գործի սկսուիլը նոյն այդ աղ-

բնրեններից դանձաւած և պահած է եղել մի կլորիկ գումար: Տարեկան մուտքն է դրանց՝ 60 միլիոն դրան: Ենթադրուած է՝ հիւսիս-հարաւային երկաթուղապէնը, որ 1690 թլլումետր երկայնութիւն պիտի ունենայ, շուրջ 700 միլիոն դրան (12 միլ.Ֆ.ս.) ծախք է նստելու: Պարսիկները ծրարդիւլ են առ առաւելն 10 տարւայ ընթացեալ, բայց դուցէ՛ և շատ աւելի կարճ ժամանակամիջոցում, աւարտել գործը: Հարուստ, Մոհամմեդայի չըլահում, աշխատանքները պէտք է որ եռանդով առաջ տարելիս լինեն:

Եւ սակայն, արբե՞օք օտար պետութիւնները բորորովի՛ն անմասնակից են պարսիկներէ երկաթուղային ծրարդներին: Արթե՞օք քուլիսներէ յետևում ոուս, անգլիացի կամ ամերիկացի դիւանագէտները գործի վրա չեն:

Դժար էր ասել: Յամենայն դէպս, երբեմն-երբեմն լսելի են առաջադեպտներէ և լրագրողներէ դժգոհ ձայնըրք այն իմաստով թէ՛՝ անգլիացիներէ «ճատը խառն է» դրանում, թէ՛՝ նրանք արդէն իսկ յանդիւլ են Ռիպա շահին իրենց սղեղնութեան տակ ղցել: Ել չեն հարցնում՝ երկրի տիրոջ, պարսիկներէ համար, օգո՞ւտ է արթեօք երկաթուղու կառուցումը, թէ՛ ոչ: «Թող հակառակորդս մէջ տեղ չլինի, թէ՛կողջ երկիրը վայրի վիճակի մէջ մնայ», ահա ոտխնեբին յատուկ հոգեբանութիւնը:

Թուած է թէ՛՝ ուսները չեն սխալուած: Ըստ երեւոյթի՛ն խնդիրը շատ աւելի լայն սահմաններով է ծրարդւած, քան միայն հիւսիս-հարաւային երկաթուղագծի խնդիրն է: Եւ որ կարեւոր է նկատել՝ մշակւած և մշակուող նախագծերը ի վնաս հարկադրային Միւսթան ևն և, ընդհակառակը, յօգուտ Անգլիայի:

Համաձայն ուսուսի մամուլի տեղեկութեանց՝ նախագիւծած են հետևեալ ինն գծերը, որոնց բոլորի հանգոյցն էլ լինելու է Թեհրանը: Դրանք են՝ 1. Թեհրան-Աստարա, 2. Թեհրան-Բենդերզէ, 3. Թեհրան-Սուլբուլախ, 4. Թեհրան-Պանեղէն, 5. Թեհրան-Ղոթուր, 6. Թեհրան-Մոհամմեդա, 7. Թեհրան-Բենդերլինդաւ, 8. Թեհրան-Չահահահ, և 9. Թեհրան-Դոգդար-Մէխտան:

Նայեցէ՛ք, ասում են ուսները ոչ առանց իրաւունքի, նախագիւծած երկաթուղիների ուղղութեանը: Բազաութեամբ առաջին կրկուսի՛ մնացած եօթր գծերն էլ ձգւելու են դէպի անգլիական ազդեցութեան շրջանները: Այսպէս, Թեհրան-Մոհամմեդա գիծը, թերևս ամենակարևորը թւածներէց, ձգւելու է Հարաւային Պարսկաստանի մութադաշտերով, որոնց մենաշնորհը անգլիացիներին է պատկանում: Այսպիսով, ուրեմն, Կենտրոնական և Հիւսիսային Պարսկաստանը Պարսից ծոցի հետ պիտի կապեն երկաթուղագծով, որով և «թեբլեն» պիտի դէպ հարաւ, սահելով ուսական ազդեցութեան տակից: Դրա փոխարէն՝ Հարաւի քարիւղը սահել պիտի սկսի դէպի հիւսիս, որով և ուսական նաւթը կորցնի իր արժէքաւոր շուկաներից մէկը: Այս հարիւնքը ևս, կարծում ենք, որոշ դեր խաղացել են ուս-ամերիկեան նաւթային վերջին համաձայնութեան մէջ: Ապա՞՝ Թեհրան-Մոհամմեդային գուղահեռ նպատակներ է հետապնդելու նաև Թեհրան-Բենդերլինդաւ գիծը:

Նոյնչափ նշանաւոր պիտի լինի՛ արևմտեան ուղղութեամբ ձգւելիք գծի նշանակութիւնը — Թեհրանից դէպի Պանեղէն, կապելով Պարսկաստանը Միջագետքի և Բազաւտի երկաթուղու հետ: Ինչպէս որ մի բոլշակի թերթ է արտայայտւել՝ այդ գիծը պիտի ծառայի որպէս մի խողովակ, որով «անդիլական ասլրանքները դէպի Պարսկաստան պիտի ուղղւեն»:

Դէպի արևելք ձգւելիք գծերին ևս յար և նման դեր է վիճակւած լինելու: Թեհրան-Չահահահ գիծը ուղղւելու է դէպի հեղիակամ Գարաշի նաւահանդիստը: Այդ գիծն էլ պիտի ծառայեցնի որպէս մի «փոխանցող հանգրւան» անգլի-հնդկական ասլրանքների՝ դէպի Պարսկաստան: Թեհրան-Դուղաւտ-Մէխտան գիծը ևս նոյն նպատակին է ծառայելու, որպէս «ըլխաւոր գարկերակ՝ Խորասանից և Մաղանդարանից պարսկական նախանիթերը դէպի անգլի-հնդկական շուկաները մղելու առաջադրութեամբ»:

Եթէ՛ մինչև իսկ մի կողմը թողնելու լինենք իշատակւած նախագծերից նրանք, որոնք այսօր գործնական նշանակութիւնից զուրկ են և միայն ապագային, իրականացւելու պարագային, կարող են իրենց վերապահւած դերը խաղալ, ըստ էութեան նոյնն է հետապնդում, այն էլ ամբողջովին, ներկայիս արդէ՛ն իսկ կառուցուող հիւսիս-հարաւային գիծը, որ մի քանի տարիներ յետոյ, արդէն իսկ Կասպից լիճը կապած պիտի լինի Պարսից ծոցի հետ՝ երբ չողին Դարեհի երանաւէտ երկիրն ևս պիտի դրած լինի տնտեսական լինկերային յեղաշրջման ճամբու վրա:

Մըն է այդ գծի ուղղութիւնը. մի դիժ, որ համարութեանն է վերը թւած նախագծերից երկուսի՛ Թեհրան-Բենդերզէ (Կենտրոնից դէպի հիւսիս) և Թեհրան-Մոհամմեդա (Կենտրոնից դէպի հարաւ) գծերի: Հարաւում՝ Մոհամմեդայից սկսելով և դէպի հիւսիս ձգւելով՝ գիծը անցնելու է Դիղֆուլ, Խուրամաբադ, Բուրուշերդ, Համադան քաղաքների վրայով, հասնելու է Թեհրան, այնտեղից էլ դէպի հիւսիս-արևելք երկարելով՝ վերջանալու է Բենդերզէում, Կասպից լճի կերպքին:

Մի ենթադրութեամբ՝ երկաթուղագիծը Բուրուշերդից Թեհրան է անցնելու ո՛չ թէ՛ Համադանի, այլ՝ Մուլթանարատի և մահմդական առաջաւոր սրբատեղի Ղուժի վրայով:

Եւ յետոյ, ըստ Երևոյթի՛ն մի կողմ է թողւած երկաթուղագիծը Թեհրան և Էնդիլում (այժմ՝ Փահլաւի վերակոչւած, նոր շահի անունով) վերջացնելու ծրարդը և նախընտրւած է Բինդերզէգը: Այսպիսով՝ գերազատութիւն է տրւած մի երկրորդական նաւահանգտի և անուս արւած Թեհրան և Էնդիլիի նման բաղտաստարք առևտրահաճ կենտրոնները:

Եթէ՛ իրականութեան համապատասխանում է այդ, նշակում է՝ որոշումը տալիս կամեցել են — թերևս ուրիշ պատճառներ էլ կան — երկաթուղագիծի վախճանական գիծը հետոյ պսակելու առաւելու ազդեցութեան շրջանից, որի մէջ են մտնում նաև Թեհրան և Էնդիլին: Ակնյայտօրէն նոյն դիտումներով են առաջնորդւել նաև Թաւրիզը և ամբողջ Արարատականը երկաթուղացացնի մէջ յանձնելով: Միայն և միայն քաղաքական նպատակներով քայտարելու է այն, որ Պարսկաստանի գլխաւոր



երկաթուղագծից (մազիստրալ) դուրս է պահած այնպիսի մի հարուստ և մարդաշատ շրջան, որպիսին է Ատրպատական նահանգը Թաւրիզ կենտրոնով, որ էր առևտրական-տնտեսական նշանակութեամբ Թեհրանից էլ բարձր է :

Աւելի ևս աչքի է ընկնում այլ աղաղակող փաստը մանաւանդ այն տեսակէտից, որ Թաւրիզի արդէն իսկ երկաթուղով կապւած է երկրի հիւստատային սահմանի հետ (Քուլֆա), որ երկարաձգուած է Երասխի երկայնաքով : Յամենայն դէպս՝ Պարսկաստանի և պարսիկ ժողովրդի շահերից չեն բոլորում նման քայլերը : Բնականաբար Կրանց բուն հեղինակներին այլ տեղ որոնելու է :

Իրաւունք ունէր, որ ամենին ի տես, Թաւրէնտում հրատարակող մի ուսու թէրէ («Պարսեղա Վտտոկա») գրելու. «Երկաթուղային նոր նախագծերը (Պարսկաստանում) պարզապէս հետապնդում են մէկ նպատակ. դառնալ փոխադրութեան միջոցներ անգլիական ապրանքների համար և միևնոյն ժամանակ ամբարպնդել բրիտանական աղբեղութիւնը այդ երկրում : Եւ յետոյ, տնտեսական այն շահերը, որոնց համար կառուցուած են երկաթուղագծերը, ամէն ժամանակ էլ կարող են տեղի տալ ռազմական շահերի առջև : Զուր տեղը չէ, որ, ուրեմն, անգլիական կառավարութիւնը Պարսից Մոցի եզերքին է սահմանել երկաթուղագծերի վախճանական կէտերը : Դէպի Դուղարա-Մէլիտան մզելիք դիժն ևս չանդելու է, Հայտարարատի վրայով, Հընդկական երկաթուղագծերին : Այդպիսով նա, անգլիական կառավարութիւնը, հնարաւորութիւն պիտի ստանայ (կառուցելիք երկաթուղներով) իր բանակները Բոմբէյից և Կալկաթայից Պարսկաստան նետելու» :

Մեկնութիւններն աւելորդ են :

Ժամանակները արագ քայլել են սկսել անգամ զեամբ՝ և, Կալկաթ-ի դասական հայրենիքում : Այն աստիճան, որ օգտաւային հաղորդակցութիւնն իսկ մուտք է դործել Պարսկաստան : Գերմանացիների նախաձեռնութեամբ և ուսաների համաձայնութեամբ : Գերմանիոյ օգնականային ամենանշանաւոր՝ Ինկկերսի ընկերութիւնը զեռ երկու թէ երեք տարի առաջ պայմանագիր է կնքել պարսից կառավարութեան հետ, համաձայն որի նա երկարաձգել է Մոսկա-Բաքու օդուղին դէպի Պարսկաստան՝ ինչպէս և Թեհրան : Վերջինս էլ պէտք է որ այժմ արդէն երկարաձգւած լինի մինչև Բուշէր՝ Պարսից ծոցի եզերքին :

Հարաւից էլ, Միջագետքի կողմից, Գահրէ-Գաղղատ օդանաւային փոսան է առաջումներ ընդունում Պարսկաստանի համար : Իսկ Բաղդատ-Թեհրան խնուրու մասին խօսք եղաւ արդէն :

\* \* \*

Մենք ուրագծեցինք ուսու-անգլիական հակամարտութեան զանազան փուլերը և նրա տարբեր արտայայտութիւնները Պարսկաստանում թէ՛ զաղաքական, թէ՛ տնտեսական-առևտրական, թէ՛ երևտային և թէ՛ երկաթուղային մարզերում : Ուրիշ խօսքով՝ Պարսկաստանի և պարսիկների բովանդակ կենսը բազմազան հիւղերով իր վրա է կրում ուսու-անգլիական մրցակցութեան խոր կնիքը : Աւելին դեռ : Անգամ կրթական-վշակութային մարզի մէջ Պարսկաստանը դերձ չէ այդ ազդեցութիւնից :

Նախապատերազմեան շրջանի մասին խօսք եղաւ արդէն : Իրենց հին գիրքերից ձեռք չեն քաշել անգլիացիք : Ինչ վերաբերում է Ռուսներին, սրանք ջանադիր են այժմ՝ այդ մարզում ևս տէր կանգնելու ցարական ժառանգութեան : Խօսում են տարբեր լեզուով, գործում տարբեր : Այն աստիճան, որ իրենց դպրոցական-մշակութային ազդեցութեան տակ ստնել են աշխատում են և Հիւսիս. Պարսկաստանի հայերին : Մեր թերթերը բազմաթիւ փաստեր են տալիս այդ ուղղութեամբ : Ռէչտում և այլուր, անգամ Համադանում և Կենտրոնական Պարսկաստանի ուրիշ զաղաքներում, ռուսները անմիջապէս կամ միջնորդապէս, հայասնում գործակալների ակնկցութեամբ, աշխատում են փակել տալ հայկական դպրոցները, նրանց ուսուկանով փոխարինելու և կամ դռնէ իրենց ազդեցութեան տակ ստնելու : Մշակութային ուրիշ գործօններ ևս, մամուլի օրգաններ և այլն, ի սպաս են դրուում ռուսական ազդեցութեան ծաւալման և ամբարպնդման Պարսկաստանում : Բարբախտաբար հայերից շատերին չէ, որ գրաւում է բոլշևիկեան կարթի վրա ամբարցած խայծը, որչափ և համեղ լինի պատարը :

\* \* \*

Վերջացած կարող ենք համարել ուսու-անգլիական հակամարտութեան համառօտ բնութագիծը Պարսկաստանում : Ասել է՝ նա կա՛յ և մնում է դեռ այսօր էլ անտարակոյս փոփոխւած ձևերով և տարբեր զոյներով :

Ո՞րն է մեր վերաբերմունքը հանդէպ դրա : Պարզ է դրա պատասխանը յողւածի ընթացքում : Մեր համակրութիւնը միայն պարսիկ ժողովրդի կողմը կարող է լինել, որ շնք է թափում թօթափելու աշխարհակայնների ուժը և տէր կանգնելու սեփական երկրին : Վերագործնած և կազմուած Պարսկաստանը Հայաստանի շահերին օգտակար միայն կարող է լինել : Նա իր հերթին չի կարող շարգել մեր իրաւունքները, չի կարող ցանկալի չհամարել ազատ Հայաստանի հարեւանութիւնը : Բոլոր պարագայներում՝ հայ անհասանք և խմբակներ գորուսարու են կամայ թէ ակամայ գործիք դառնալ այս կամ այն ոսոխի ձեռքին, որ միշտ էլ մեր վտան է ուզել և ուզելու է՝ ծառայեցնելով մեզ որպէս ստակական նիթ իր եսամոլ նպատակների համար : Հայութեան ուժերը բոլորը ի մի հազիւ կը բաւեն իր սեփական հայրենիքի վերականգման գործին, խնայենք նրա՛ համար :

Ռուս-անգլիական հակամարտութեան հանդէպ լինելու ենք ձեռնպահ : Ռուսական սաղբանքները արդէն իսկ աշխարայ են և չօչափելի : Զրուշանանք՝ մանաւանդ անգլիականից, որ միշտ էլ ծածուկ է և շատ աւելի վտանգաւոր : Ձմոռանալը երեքը, որ շատ անգամներ ենք ընկել նրա ծուղակը : Ձմոռանալը նաև, որ անգլիական ծրարները Պարսկաստանում՝ դէմ դնալով ընդհանուր Ռուսաստանի շահերին՝ մեծ մասով դէմ են նաև Հայաստանի և երկրի հայութեան շահերին : Յատկապէս տնտեսական խնդիրներում : Պարսկաստանի դէպի հարաւ թէքելով, ինչ որ անգլիացիները ծրարքի մէջ է մտնում, Հայաստանը, որ անմիջական դրացին է Ատրպատականի սահմանի վրա, պիտի տուժի անկասկած :

Բոլշևիկները տրամաբար քաղաքականութիւնը ո՛չ միայն Ռուսաստանի և մեր երկրի տնտեսական զարգացումն է դանդաղեցնում ներսում, այլ և ինչեւեղ սահմանային դուները շիրտիս Պարսկաստանի և մասնաւորապէս Ատրպատականի տրանզիտի առջև, այդ երկրամասերին հարկադրում է երեսները դէպի հարաւ դարձնել, անգամ դէպի արևելք (Թաւրիդ-Տրապիզոն տնտեսական ճամբան վերահանդանանալու նշաններ է ցուցնում)։ Բայց ո՞չ դէպի հիւսիս, դէպի Երևան ու Բաթում։ Դէպի Ծով առևտրական ապտ ելք ունենալու տրանզիտի որոշ ազատութիւն վայելելու պարագային՝ (Անդրկովկասի վթարով) Պարսկաստանը շահի աղբիւր պիտի դառնար մեր փոքրիկ Հայրենիքի համար եւ։ Տնտեսական ինչպիսի հարւած որ տուա ցարական մաքսային քաղաքականութիւնը Հայաստանին և Անդրկովկասին դեռ սրանից 90-100 տարի առաջ, ու-

տական տիրապետութեան առաջին իսկ օրերին, արեւտորէն զրկելով նրանց ի բնէ տրանզիտի ճանապարհ լինելու յարմարութիւնները և օգուտները, (յիշեցէք Հաքոտհատուէնի և Վազնիքի դատը խօսքերը), ըստ էութեան նոյնն է անում նաև այսօր խորհրդային իշխանութիւնը։ Իսկ այդ, ինչպէս նաև շատ ու շատ ուրիշ բաներից մեծապէս տուժում է մեր փոքրիկ թուրակագմ հայրենիքը։

Մեզ համար՝ ամենից առաջ և ամենից վեր հայ հայրենիքի քաղաքական, տնտեսական և ներթափանչ շահերը։ Այդ շահերի գիտակցութիւնը պէտք է լինի մեր շարժանիչը բոլոր այն ինդիւիւները ջննելիս, որոնք այս կամ այն կերպ շոշափում են Հայաստանի շահերը։ Աշխարհն այդպէս է դասում, մենք չէ որ եթերի վերին շերտերում սաւառնենք պիտի շարունակ։

Վերջ  
Ա. ԱՅԵՂՅԱՆ

ՓՈՔՐ ԱԶԳԵՐՈՒԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ  
Ե Ի

ՈՒԺԵՐՈՒ ԻԱՒԱՍԱՐԱԿԹՐՈՒԹԻՒՆԸ ԻՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ

I. Մեծ-Պատերազմը և ազատագրութեան պատրանքը. — Մեծ պատերազմէն ինը տարիներ յետոյ այլ ևս բոլորին համար պարզ է, նոյնիսկ քաղցնի տնտեսագէտներու ու պատմաբաններու, որ համաշխարհային սպանդը ո՛չ միայն կը շնչոյզէր ու ծնունդ կտանէր, արդարանալի գաղափարական շարժառիթներէ, այլ մասնաւորաբար ու զլիաւորապէս տնտեսական հակամարտութիւններէ, Արևմտեան կարգ մը մեծ պետութիւններու միջև։ Ի հարկէ, երկու պետութեան մէջ չէր միայն այդ շահերու հակադրութիւնը ու միայն տնտեսական կոլիւսը շէին որ արձակեցին ընդհանուր պատերազմը, երկրորդ պէի վրա ու առաջին պատճառին սերտօրէն կապւած, կար նաև անզլիական աշխարհակառիթեան ճակատադրի խնդիրը։

Նական պետութեանց թափօրին ետէն ու Յունաստանն ու Արաբիան (այս վերջինը, իր քաղաքական բախտին տեսակէտէն իսկ վտանգաւոր կերպով մեծցած պատերազմէն յետոյ), որ հետեւեցան Համաձայնականներուն։

Կար նաև անշուշտ երրորդ պատճառ մը, ազգամիջևան ոխերն ու ատելութիւնները, որ մեծ շարժերու հասած էին ու մասնաւորաբար մշակւած տիրող քաղցնիւթեան կողմէ։ Որպէս բնորոշ օրինակ կարելի է յիշել Գերմանիոյ և Ֆրանսայի պարագան։ Այստեղ, իբրև է, գոյուէթիւն ունէր միշտ երկու ճարտարաբաններու ու երկու քաղցնիւթեանց- կոլիւս, բայց անկարելի է ուրանալ, որ կար նաև հոգեբանական պատճառ մը, որ Ֆրանսական աշխատաւորութիւնն անգամ նետեց գերման բանտրութեան կոլիտրէին։ Ատրիկա ազգային իրիտադրած ատելութիւնն էր, որ կուղար 1870-71-ի Ֆրանսո-գերմանական պատերազմէն։ Յամենայն դէպս, որքան ալ բնորոշ ըլլայ այս օրինակը, պէ՛տք է նոյն ընդհանրացնել ու կարծել, որ մեծ-սպանդին պայթումին մէջ խոշոր դեր խաղացած են ազգամիջևան ոխերը։ Այո՛, և թէ՛ կուղէք, բայց այդ ատելութիւնները մասնաւորաբար հրահրւած ու վառ պահած էին, երկու կողմի տիրող դասերուն կողմէ, որ շատ լաւ գիտէին թէ կը կուին գաղութներու, աղքեցութեանց շրջանակներու և տնտեսական շուկաներու մէջ։

Գերմանական յարանձան ճարտարաբանն ու այդ ճարտարաբանտը իր սելիներուն ծայրովը տարածող ռազմապաշտութիւնը, ափրիկեան գաղթաժամայրերէն մինչև Միջագետքի տափաստանները (Պաղտատի երկաթուղագիծը) բաւական լըրօրէն կը սպառնար «Հընդհատանի ճամբուն», որպիսից անըլիական աշխարհակառիթները չլրորովէր։ Խնդիրը հասած էր հոն, որ վերջին խաղաթուղթերը պէ՛տք է նետէին՝ ո՛չ թէ պետութեան պետութիւն, այլ երկիրներու իմբատրուած մը ուրիշ իմբատրուած մը։ Իւրաքանչիւր կողմ, յորձանքին մէջ իր հետ կը ըլնէր բազմաթիւ ուրիշ երկիրներ (ու մի՛ մոռնաք միտք պահել այս պարագան) ընդհանրապէս փոքր՝ որ կը գտնէին իր քաղաքական ու տնտեսական ազդեցութեանց շրջանակին մէջ, ու կը հետեւէին, միջազգային դիվանագիտական ու քաղաքական յարաբերութեան մէջ՝ ծոյ՛ն ուղղութեան։ Օրինակներ տալ աւելորդ է։ Այստեհանդերձ ինչո՞ւ է շիշել Պուլկարիան ու Թուրքիան, որ պոչ թանցյին կեդրո-

Մնաց որ աւելի յստակօրէն կը պարզի տնտեսական շարժառիթներու գերակայութիւնը, եթէ մտաբերենք, թէ նոյնքան հին ու կարծես թէ իրապէս անվերծանելի հակադրութեան մը կայ Մեծն-Բրիտանիոյ և Ֆրանսայի միջև տակաւին, մեծ պատերազմէն ինը տարիներ յետոյ։ Այդ անհակացողութիւնը եղած է նաև պատմութեան մէջ ու եթէ բրիտանական ու ֆրան-

սական զաղքենիութիւնը կազմեցին մէկ ճակատ, պատճառը՝ հասարակաց վախն էր գերման յարածուն զաղքենիութիւնէն:

Նոյն երևոյթը կը նշմարենք նաև փոքր ազգերու մէջ: Թշնամի Յունաստանն ու Արցախի կուրի մտան նոյն խմբաւորումի դրօշակն տակ ու զէշ մնաց, որ երիտասարդ Թուրքերու Օսմանեան կայսրութիւնը կուէր իր վաղեմի թշնամի մտաւոր կողմէն: Նոր ըստազական վաւերացումը (Պոլոյ առասկան նախկին դեռապանի վաւերութիւնները) կապացուցանեն, որ այդ չէ եղած միայն Համաձայնակցանքով ըստըզոսկան շփոթութեան հետեւեցող:

Յամենայն դէպս, մեծ-պատերազմին ծնունդը աւող շարժումները՝ ըլլան տնտեսական թէ դիւանադիտական, ըլլան ազգային ատերութեան վերաբերեալ թէ զաւարճական, պարզ է, որ ամէն պարտադիր տակ, այդ դարձուրդը նախօրէր կազմակերպուած չէր, ինչպէս համարձակեցան շնականօրէն յայտարարել յետազային՝ փոքր ազգերու ազատագրութեան, որպարութեան, հաւատարմեան, դերման բռնակալութեան շնորհին, ժողովուրդներու ինքնորոշումն ու այլ դաշտապարական ու սկզբունքային պատճառներու համար: Այս իրողութիւնը, արդարև այնքան ակնբարի է ու անհերքելի, որ ապացուցին իսկ աւելորդ կը թուի, բայց դժբախտաբար գեո մարդիկ ու նոյնիսկ ազգեր կան, որ չեն ուզեր ըմբռնել այս ճշմարտութիւնը ու իրենց զաղքական ուղեգիծը կը շինեն նոյն զաղքական ազգեցութիւններու ըլլանակին մէջ:

Ինչ ընտրու ու զգաստացուցիչ հոտոր մը կտրելի է կազմել, խառնելով բոլոր այն կեզը ու պատիր ու նկարներն խոստովները, որ գնահատան ատիկներով, պատերազմի ընթացքին կամ զիշ յետոյ, կզան մեծերու հաշին արեւն թափող փոքր ազգերուն: Դիւանադիտական դրոշմներն էին, բարձր զաւարճալիներ, որ կը խոսէին մարդկայնութիւնէն, ժողովուրդներու հաւատարմութիւնէն, ազատութիւնէն, միւս կողմէն բաժնելով աւարը ու նոյնիսկ զրկելով իրենց երէկուց մեծ դիւանադիտը, արճայական իտալիան, որ երկի՛ Թանձերի ու Քորֆուի առջև, այսօր՝ Փոքր-Ասիոյ ջուրերուն շուրջ կը փայլէ իր գաւառները ու վրէժնորի ծրագրիներ կործանայ:

Հարկ կա՞յ յիշել գեո Յունաստանի պարզապէս, որուն պիտի անդրադառնանք զիշ յետոյ և որ հակառակ իր մեծութեան տենչին ու հակառակ անոր, որ երկար ատեն ինկած էր Մեծն-Իրիտանիոյ գիրկը, իր բոլոր յոյսերուն ցնդելով տեւան ու ստիպելցաւ ամփոփելի իր ստճաններուն մէջ: Հարկ կա՞յ յիշել վերաւորեալն ու անդամահատած Պուլկարիան, հերոսական ու մարտիրոս Հայաստանը, Պալքաններու յաւանանական դոհը՝ երեքի բաժնուած Մակեդոնիան:

Ո՛չ, մեծ պետութիւնները, ինչնիսկ Մ. Նահանգները չկուցանան փոքր ազգերու ազատագրութեան համար, հապա տարածելու համար իրենց ազգեցութեան ըրջանակը, գտնելու համար նոր շուկաներ: Եւ փոքր ազգերը ի գուր յուսացին իրենց ազատութիւնը զաղքենիներու սարքած այդ սպանդէն: Պատերազմ էր աստիկա, որ շատ սուղի նստաւ որոշ ժողովուրդներու...  
Բայց կարելի է ասարկել, հա՞րա անոնք, որ իրապէս ապաստարեցան, հապա ի՞նչ հաստանը, Չէ՛րիո-Սլովաքիան, Լիթուանիան, Հա՞րթիան, Կաթո՞նիան, Տիւրքմանիան, հապա իրո՞ւսութիւնն ու սրբօրէնները...

Հարց է: Իրապէս արդ՞տագրեցան, արդէ՛օք կրկին ժողովուրդները զե՛րի չեն, պետութիւնները՝ մեծ-քաղաքական ուժերու հրամանին տակ: Հարցը՝ արդէն հո՞ր կը ստանայ իր լրիւ նշանակութիւնը ու կը զրեւի հետեւեալ ձեով՝ — մեծ պետութեան զաղքական ու տնտեսական աղքատութեանց ըրջանակին մէջ՝ փոքր ազգերը կրնան իրական ու առանձին անկախութիւն ձեռք բերել: Պիտի անդրադառնանք զիշ յետոյ:

\* \* \*

II. Կապալական նոր դաստարումներ և մեծ ու փոքր ժողովուրդները. — Անհնար է անջատել փոքր ազգերու ազատագրութեան խնդիրը՝ մէկ կողմէն դաշտնի դիւանադիտութեան յարուցած բարդութիւններու լուսաբանութիւններէն ու միւս կողմէ՝ այսպարհազգային ու զաղքական նոր դաստարումները ընտրութեան, որ մեր ուշադրութեան կը պարտադրի մեծ-պատերազմին ի վեր: Իւ իրա՛ւ, բոլորովին այլ է Եւրոպայի քարտէօք այսօր: 1914-էն 1928-ը պատահեցան այնքան վճռական ու խաշոր զէպղեր, վերիվայր ըրջելով մեր բոլոր զաղքական վարկածներն ու յոյսերը, որ անհնար բան է դատեր չհասնել: Իւ, դժբախտաբար, դա՛նդ գտանք:

Նախ՝ առաջին կէտ մը կը պարտադրի մեր ուշադրութեան: Այդ այն է, որ հակառակ զարթնող ազգայնականութեան, Արևելքի թէ Արևմուտքի մէջ՝ հակառակ ամէն զոյնի ժողովուրդներու ազատագրութեան համար մղած կռիւն, որ երբեմն կը ստանայ եզրական բնոյթ, դարձեալ, Արևմտեան Եւրոպան յաղողեցաւ իր գերիշխանութիւնը ամուր պահել, աշխարհի միւս մասերուն վրա:

Այդ գերիշխանութիւնը կը տարածուի ու կերկարաձգուի քանի մը ուղղութեամբ: Նախ կը յայտնուի, որպէս Արևմուտքի գերակայութիւնը՝ յետամնաց Արևելքի վրա: Երկրորդ՝ մեծ աղքատ գերիշխանութիւնը փոքր ազգերուն վրա՝ Եւրոպական ու ասիական ցամաքամասերուն մէջ: Երրորդ՝ մասնաւորաբար սպիտակ ցեղին զաղքական ու տնտեսական բռնութիւնը՝ զեղին, սև ու կարմիր ցեղերուն վրա: Աճէ՛ն պարտադիր տակ այդ գերիշխանութիւնը հեղահեղ մանր կը նստի գեղի ժողովուրդներուն վրա ու քանի այս վերջինները կը ջանան թօթիւն օտար լուծը՝ այնքան տիրողները կը սկզմեն բռնութեան շղթաները ու իրենց տիրապետութիւնը կը դարձնեն անհանդուրժելի, ատելի ու բռնական:

Մարօքի ու Սուրիոյ վերջին աստամբուցութիւններն ու ցապալի տրակնեան միջոցները, Չինաստանի վերջին արեւնեղութիւնները, զիւրեքու մղած մահու և կենաց պայքարը առանձի բռնակալութեան դէմ, այս բոլորը յատկանշական այստանշաններն են միևնոյն կուրին, որ գերի ժողովուրդները կը մզեն տիրող ազգերուն դէմ: Այս բոլոր կուրները վերջին հաշուին, կը վերջանան, զո՞ւծ վերջին սարքերով, միջազգային զաղքենիութեան յաղթանակով: Աստիկա կը բացատրուի դիւրութեամբ: Այս բոլոր պայտիկ ազգերը չեն ըմբռնել, որ միջազգային զաղքենիութեան դէմ իրենց մղած «պարտիզանակա՞ն» կռիւները անարժէք են ընդհանուր գործի անսակէտէն: Փոքր ժողովուրդները ճնշող ճակատը դրեթէ մէկ է, միևնոյն այդ ճակատին դէմ մղած կռիւը, պարբերաբար ու ատանց ուէ կապի, կը ծաղի այս կուր այն հեռաւոր երկրամասին վրա ու

զսպումը կը դառնայ դերին: Օրինակ, ի՞նչ դժուար բան է Ֆրանսայի համար զսպել Մարքը բայց եթէ Սուբիան, Մարքն, Հնդկաշինը ու բո՛լոր միւս ֆրանսական զաղութիւնը ապստամբութեան դրօշ պարզեն, միաժամանակ, զսպել արդէն կը դառնայ դժուար ու պարտութիւնը հասնական Ֆրանսայի համար:

Յետոյ պէտք չէ մտնել, որ արեւմտեան քաղաքեւորութեան դէմ նոյնպիսի անհաշու կուէ է մտած նաև արեւմտեան բանտրութիւնը՝ իր քաղաքական ու արհեստակցական կազմակերպչական մեքենայով ու ամբողջ գանգուածով: Փոքր ժողովուրդները շատ յաճախ կանտեսեն այս պարագան ու ռե՛է օրկանական ու սերտ կանչ այս քննական դաշնակիցներուն միջև: Եւ ճիշտ ատոր համար է, որ արեւմտեան քաղաքեւորութիւնը յաջողեցաւ կրկին իր տիրապետութիւնը հաստատել տնտեսապէս ու քաղաքականապէս թէ՛ Եւրոպական ե թէ՛ միւս ցամաքամասերուն վրա: Բանտրական ու փոքր ազգերու անջատ ուժերուն դէմ, ի հարկէ, այս դասաւորումը նոր չէ՝ այլ վերանորոգած: Միջազգային քաղաքեւորութիւնը շատ լաւ ըմբռնելով, որ իր ներքին կոիւնները կրնան միժամակ տկարացնել զինքը, կաշխատի ցատկել ազգային սահմաններուն վրայէն ու կազմել մէկ ճակատ: Նախապէս ոտիք քաղքենի ուժեր կաշխատել միանալ՝ հասարակաց թշնամիներուն առջև, միջազգային բանտրութեան ե զերի ժողովուրդներուն դէմ, կը կազմին ճարտարարեւտական միջազգային մեծ ընկերութիւններ, քաղքենիութեան, այսինչ կամ աշինչ երկրին մէջ ունեցած ազգային շահերը տնդի կուտան իր միջազգային մասնագութիւններուն առջև: Քաղքենիութիւնը արագօրէն, լրջօրէն ու նաև ցուցական կերպով կը միջազգայնանայ ու ի դուր չէ, որ կրնեն թէ՛ իր ազգային դիտակցութիւնը տնդի կուտայ դասակարգային շատ ուժեղ ու շատ ընդորշ զգացումի մը առջև: Ի՞նչոր ազգերու քաղքենիները կը շարունակեն կազմակերպել իբրև մէկ միջազգային դասակարգ, մինչդեռ զերի ժողովուրդները կը մնան բաժան բաժան ու բանտրական շարժումը կը մնայ երբէք ճեղքած ու տկար: Մանր ժողովուրդները կը շարունակեն իբրբ բզբտել՝ Երբ առիթը ներկայանայ (Պուլկարիա ե Յունաստան, Երբ ասիական ե Ռուսքիան, Հայաստան ու Վրաստան, Հունգարիա ե Եոկո-Սլավիա, Ռումանիա ե Պուլկարիա ե այլն) ու, ի հարկէ, միշտ կը մնան դրամատիրական մեծ պետութիւններու մակնիսի տակ: Իսկ միջազգային բանտրութիւնը՝ կրկնակի ճեղքած ինչեք իր մէջ, նախ համայնալար հերձաձով ու յետոյ արհեստակցական շարժումով, որ միշտ ալ կը ձգտի խուսափել՝ բանտրութեան քաղաքական օրկաններու հակադէմն՝ կը մնայ յաւելս անշափահաս ու անկարող տանելու իր ապստամկան կոլեր, միջազգային քաղքենիութեան դէմ:

Թէ որքան ճիշտ է մեր այս տեսակէտը՝ դժուար չէ ապացուցանել, կրթնելով Ձինաստանի վերջին դէպքերուն վրա:

Արդարև, պարզ ըլլալով հանդերձ, որ իրականին մէջ՝ չին ժողովուրդի մղած ազատագրական պայքարը դուռ ազգային ընդթ կը կրէ ե թէ ինքը՝ չին դիւրացիութիւնն ու աշխատաւորութիւնը՝ ուրիշ նպատակի համար չէ, որ իր արիւնը կը թափէ, այսուհանդերձ «աչք ծակող» իրողութիւն է, որ այդ կուրծ իր գարգացման ընթացքին հագած է նաև ուրիշ վերաքիւռ մը

ու դարձած է տեսակ մը մենամարտ՝ անզլիական սպիտակ ու ռուսական կարմիր աշխարհակալութեանց միջև, Արևելքի մէջ: Արդ, անպայման աւելի դերին պիտի ըլլար բրիտանական դրամատիրութեան համար, իր հաշիւը մաքրել Ձինաստանի հետ առանձին, առանց ռուսական միջամտութեան ու քաղաքական օժանդակութեան, ընծայած այնքան ինքնաբերաբար չին յեղափոխութեան: Ռուսական վտանգաւոր մասնակցութիւնն էր, Ձինաստանի դրօշներուն մէջ, որ հարցը բարդացուց ու բրիտանական կայսրութեան դիրքը որոշ չափով խախտեց Երկնային կայսրութեան սահմաններուն մէջ: Յետագային, ոչ միայն անզլիական դրամատիրութիւնն էր, որ հանդէս եկաւ, ռուսական միջամտութեան ու յեղափոխական Ձինաստանի դէմ, այլ ե Ֆրանսականը, իտալականը, ճափոնականը, Մ. Նահանգներունը ու Եկատեցի՛ք, չորս ալ, ներքին հակառակորդներ, որ միացան հասարակաց թշնամիին՝ Պորթը: Ռուսիոյ ու անոր քաջալերած յեղափոխութեան դէմ, պաշտպանելու համար վտանգաւոր հասարակաց շահ՝ իրենց առանձնաշնորհումները, չին աշխատաւորութիւնը անպատիժ կերպով կեղեցելու:

Ի՞նչ կապացուցանէ այս օրինակը: Տրկու բան, Երկու հիմնական տեսակէտ, որ վերը յիշած էինք ու անոնցով պայմանաւորած զերի ժողովուրդներու ազատագրական պայքարի յաջողութիւնը: Նախ՝ անմիջապէս որ բրիտանական կայսրութիւնը զգաց թէ հողը սոցերուն տակէն կը սահի ու իր առջև կը զտնուի ո՛չ միայն չին ժողովուրդը՝ այլ ե ինքզինքը «ընկերվարական» կոչող մեծ պետութիւնը (որ աշխատաւորական նկատումներէ մղւած կամ ոչ, կարևորը այդ չէ այս վայրկեանիս, որ իրապէս գորավիդ կը կանգնէր չին յեղափոխութեան, զուցէ ո՛չ սոյնքան չին ժողովուրդի հանդէպ իր ունեցած մասնաւոր համակրանքին, այլ իր սեփական նահապետ հետևանքով, բայց որ իր ամբողջ ուժով չինթապէս ե բարոյապէս կը հարձերջարժումը), բրիտանական կայսրութիւնը կրանք, անմիջապէս ահագանդը հնչեցուց ու դիւանազդտական «զաղտնի» բանակցութիւններով յաջողեցաւ իր հետ կուր տանել Ֆրանսան, Մ. Նահանգները, իտալիան ե ձափոնը: Ձինական շուրերուն մէջ խարխիլեցին ամէն՝ դրօշակի գրահատներ ու մարտնասեր ու արիւնը սքաւ հոսել: Ուրեմն, փաստօրէն, գերի ժողովուրդի մը ու անոր օժանդակող Գալպալկան «ընկերվարական» կամ ոչ, ուժի մը դէմ իրագործեցաւ Բաղքենի պետութիւններու միացումը Բալտար: Այս մէկ:

Երկրորդ՝ անմիջապէս որ չին յեղափոխութիւնը իր առջև դուռ ռուսական միութիւնը, որ իր «բարեկամ» ձեռքը կերկրէր, ընական ու տրամաբանական շարժումով մը ընդունեց զայն, իտալական դրամատիրութեան դէմ: Իր յանցանքէն չէր, որ յետագային, այդ «ընկերվարական» պետութիւնը իր սխալ քաղաքականութեամբը ճակատախուժեց մէջ խրեց շարժումը: Միւս կողմէ, բացառապէս յատկանշական պարագայ, ամբողջ միջազգային բանտրութիւնը, յանձին ընկերվարական կուսակցութիւններու, անվերապահ կերպով թէ կ պղտոնականօրէն, արտայայտուեցաւ չինական յեղափոխութեան ի նպաստ ու հակառակ ընկերվարութեան ե համայնապարտութեան միջև գոյութիւն ունեցող տեսական ե դրօշակերպի տարբերութեանց,

այսպէս կամ այնպէս, բանօրական-ընկերավարական Միջազգայինը, պաշտօնապէս նուսեցաւ սապարէզ պաշտպաններու համար Ձինաստանն ու իր յեղափոխութիւնը ու փաստօրէն, Խորհրդ. Ռուսիոյ և Ձինաստանի ու միւս կողմէ քաղցրէնի պետութիւններու միջև բացաւ պայքարին մէջ բռնեց Խորհրդ. Ռուսիոյ կողմը: Շատ յատկանշական էր այս առթիւ ուսու ընկերավարականներու յայտարարութիւնը, Միջազգայինի Գործադիրին մէջ, երբ անվերապահօրէն կը լծէին, որ իրենք ո՛չ թէ դէմ են ուսուական միջամտութեան չինական գործերուն մէջ, ո՛չ թէ դէմ են ուսուական մասնագիտութեան՝ չին յեղափոխութեան, այլ այդ միջամտութեան և օժանդակութեան եղանակներուն դէմ: Պարզ էր՝ ինքնից մէջ ո՛չ թէ սկզբունքի, այլ այդ սկզբունքը գործադրելու եղանակներուն մէջ էր տարածայնութիւնը:

Ու հո՛ս է, չինական յեղափոխութեան վիժումին գլխաւոր պատճառներէն մէկը: Խ. կառավարութիւնը առանց կարեւորութիւն տալու արևմտեան ընկերավարութեան ու չին աշխատատեղաններու լուրջ առարկութեանց՝ յեղափոխութիւնը ճեղքեց երկուքի, Գուօլիս-թանկի աջ թևը նետելով թշնամի քաղցրէնութեան գերիւր ու վիժեցնելով այսպէս չին աշխատատեղաններուն միացեալ ճակատը: Այսպէս չարժու՛մը ճեղքեցաւ՝ ամենչն ճակատագրական վայրկեանին, նախ՝ ազգային դեռողի վրա ու յետոյ միջազգային հողի վրա: Վանթօնը որդոյնքս արիւնով ու միջոցներ միջազգային քաղ-էնիտիքիւնը, առաւել քան նրբիք. կը պահեր իր միացեալ ճակատը, փաստօրէն չին գերի ժողովուրդին ու միջազգային աշխատադրական ուժերու միջև չզոյացաւ միացեալ ճակատը: Այս երկու:

Ու չին յեղափոխութիւնը՝ երբև ազգային ազատագրական շարժում, իրականին մէջ, գոնէ սոսժամապէս, ենթարկեցաւ հաշտարդարի: Այս բոլորը, կը թշնմէ ձեռուոր կապ մը միայն ունին փոքր ժողովուրդներու ազատագրական պայքարին հետ: Ընդհակառակը, ինչ որ ճիշտ է մեծ ու գերի ժողովուրդներ մը համար, բազմապէս չորս հարիւր յիսուն միլիոն մարդոցմէ, աւելի քան ճիշտ է մանր ժողովուրդներու համար, որ բացառապէս խնայող պէ՛տք է ըլլան՝ իրենց արեան ճանապարհին վրա, որոնց ներսու չէ յումպէտս շոյալի իրենց գաւակներուն արեւը:

Մանրամասնօրէն կանգ առնելէ յետոյ քաղցրէնութեան քաղաքական գործունէութեան այս միջազգայնացման առջև, կարճէ այսուհանդերձ, աչքէ չլքի պիտեմ ուրիշ դասաւորում մը, որ կը թշնմէ թէ «կարեւոր» հետեանքներ պիտի ունենայ յետազայ տարիներու ընթացքին, քաղաքական կեանքի մէջ, ըստ քաղցրէնի տեսարաններու և որ իրականին մէջ, նո՛յնքան աղէտասեր է ու վտանգներով յղի, մանր ժողովուրդներու ազատագրութեան տեսակէտէն, որքան նախորդ դասաւորումը:

Ոսքը ամերիկեան երիտասարդ ու այլապէս յարձակողական դրամատիրութեան մասին է, որ կը ձգտի, օգուելով մեծ-պատերազմէն յետոյ արևմտեան պետութիւններու վրա իր ձեռք ձգած տնտեսական առաւելութիւններէն, երևմտական ու նոյնիսկ քաղաքական գերութեան կենթարկել տիրապետող ու յաղթական քաղցրէնի Եւրոպան: Այս երևոյթը աւելի քան յատկանշական է ու ապացուցած: Ամերիկեան դրամատիրու-

թիւնը կողողէ միջազգային հրապարակը, կը դրանէ շուկաները, կը սպառնայ եւրոպական գերիշխանութեան սահմանէ սահման:

Գալով իր քաղաքական դերին, Ամերիկեան աւելի քան երկերես է ու խորամանկ: Ան կրթներով Մընթօի վարդապետութեան, ըստ երևոյթին, կը հրատարի միջամտիս բլալէ Եւրոպայի գործերուն, բայց իրականին մէջ կը ձգտի հակակշռել եւրոպական քաղաքական կանգը: Վիրտինի քաղաքականութիւնը իսկ տարածուն բան մը ունէր ու այդ գործելակերպին լքելով, աւելի շուտ արդիւնք է, այն վախին, որ ունէր ամերիկեան քաղցրէնութիւնը՝ կրանցնելու իր գերակշռութիւնը եւրոպականին վրա: Միւս կողմէն, սակայն, Մ. Նահանգները լա՛ւ գիտեն, որ տնտեսական տիրապետութիւնը, որուն կը ձգտին, իր ետեկն կը բերէ քաղաքական հակակշիւր: Այս այնքան ճիշտ է, որ եւրոպացի տեսարաններ սկսած են անհանցատանալ ու Ֆրանսացի «մեծ» երմտադէտ մը, որ նոյն ատեն հեղինակաւոր օրապարզ մըն է, շատ աղմուկ հանած գրքի մը մէջ հարցը կը դնէ իր ամբողջ մեթոտութեան մէջ, Եւրոպան հակադրելով Ամերիկայի, հրաւիրելով առաջինը պաշտպանել հետզհետէ սպառնական դարձող վտանգին առջև\*):

Տիրողը չէք գիտեր թէ ո՞վ պիտի ըլլայ, բայց նախագահ Քուլիճը, իր փորձած ճիգերով, զեռ անցեալ ամիս, համամերիկեան համագումարին մէջ, Ազգերու Դանակցութեան հակադրելու Ամերիկեան Դանակցութիւն մը, կը մտնէր Մ. Նահանգներու քաղաքական գերիշխանութեան տենչը: Մնաց որ մանր ազգերու համար, իրապէս, շատ ալ մեծ կարեւորութիւն չունի թէ ո՞վ է տիրողը ու անոնք, որ կը կարծեն թէ Մ. Նահանգները նազ աշխարհակալ են ու նազ գաղթային քան արևմտեան մեծ պետութիւնները՝ ամբողջովին իրենց պատասխանը ստացած վերելքը: Մ. Նահանգները աւելի քան աշխարհակալ քաղաքականութեան մը կը հետեին փոքրիկ Նիքարագուայի հանդէպ, երթելով նոյնիսկ մինչև զինուորական միջամտութիւն, ուրիշ պետութեան մը ներքին գործերուն մէջ: Ու մենք տեսանք, վերը, որ չինական ջուրերուն մէջ ամերիկեան նախորդներ չէին պակսեր: Ու յետոյ, տակաւին թարմ են, մեր յիշողութեան մէջ, Մ. Նահանգներու և նախագահ «ընկերավարական» Կալթսի Մեքսիկայի յարաբերութիւնները, ուր դարձաւ Քուլիճի Ամերիկեան ցոյց կուտար իր գերիշխան ու սև դէմքը՝ դարձած ճակատագրօրէն փոքր ժողովուրդներու դէմ:

Բայց այս երկու քաղաքական ու միջազգային դասաւորումներէն դուրս կան ուրիշներ ալ, առաւել կամ նազ չարիւմ մակերեսային, որ համառօտ քննութեան մը լույսին տակ, իրենց ներկայացուցած ներքին հակասութեանց հետեանքով, կարծես թէ կապահովեն միջազգային բանօրութիւնն ու մանր ժողովուրդները, բայց իրականին մէջ, իրենց մէջ իսկ կը կրեն պատերազմի սաղմերը: Խնդիրը ան է թէ ո՞վ աւելի բաժին պիտի ունենայ ընդհանուր աւարէն: Մեծ պատերազմին ալ տեսանք թէ միջազգային քաղցրէնութիւնը ճեղքե-

\* «Ո՞վ պիտի ըլլայ տիրողը, Եւրոպան թէ Ամերիկան», գրեց՝ Լիւսիէն Ռօմիէ (ճախկին խմբագրապետ «Ֆիկարօ»-ի):

ցաւ երկուքի, արիւնով ոռոգելով աշխարհը: Շատեր յուսացին թէ մանր ժողովուրդներն ու միջազգային բանւորութիւնը պիտի օգուէին առիթէն: Ռուսական յեղափոխութեան զժրատ ճակատադիրը ու մանր ժողովուրդներու տեսական գերութիւնը դառն ապտակ մը եղան այդպէս մտածողներէն: Արեւմտեան քաղքենիութիւնը շուտով հաշիւը մաքրէր յեղափոխութեան հետ՝ գերմանական կայսերայաշուութեան հետ իր հաշիւը մաքրելէ յետոյ: Ու ընկելովարութեան յետպատերազմեան «տաղնապար», որուն պիտի անդրադառնանք ուրիշ անգամ մը այս էջերուն մէջ, հետեանք էր ճիշտ այս սխալ համոզումին, միջնազգային քաղքենիութիւնը մահամերձ կարծելու:

Ո՛չ, աւելի քան երբեք պարզ է, որ երբեք պէտք չէ շափազանցել մեծ պետութիւններու միջև գոյութիւն ունեցող ներքին կոխներու արժէքը մանր ժողովուրդներու ազատագրութեան տեսակէտէն: Այս բոլոր իւրմբաւորումները ուղղած են միջնազգային աշխատաւորութեան ու մանր ժողովուրդներու դէմ ու պէտք է գիտնալ, որ եթէ Գերմանիան ըլլար յաղթականը փոխանակ Համաձայնականներուն, մանր ազգերու քաղաքական կեանքը ո՛չ աւելի վատ, ո՛չ ալ աւելի լաւ կրնար ըլլալ այսօր: Անշուշտ փոքր ու ձևական փոփոխութիւններ կ'ըլլային, անշուշտ՝ կարգ մը պետութիւններ կ'ըլլային քարտէսէն, տեղի տալով ուրիշներու, անշուշտ փոխանակ Ռումանիոյ և Յուկո-Սլավիայի Պուլկարիան ու Հունգարիան պայթելու աստիճան կուռէին, բայց կը կրկնենք՝ դարձեալ նո՛յն անտեսա-

կան գերութիւնն էր, որ կը չըզէր ամբողջ աշխատաւորական ու գիւղացիական խաւերու վրա:

Գալով քաղաքական ուժերու նոր դասաւորութեանց, անոնք նոյնքան վտանգաւոր են, որքան նախկինները: Ի հարկէ, ամէն մտադ կը տեսնէ, որ նոր պետութեանց խումբեր կը կազմին: Ֆրանսան կը հասաքէ իր չուրջը՝ Լեհաստանը, Չէխո-Սլովակիան, Եուկո-Սլավիան, կը դարպասէ Ռումանիոյ: Անգլիան, իր կարգին, կը խմբէ՝ Իտալիան, Հունգարիան, Յունաստանը, Ռումանիան: Ու Անգլիան ու Ֆրանսան միասին կը դարպասեն Գերմանիոյ, որ իր կարգին կը փոփոխ Ուրուգուային Ռուսիոյ՝ ժամանակ առ ժամանակ: Թուրքիան, ինչպէս միշտ, կը խաղայ երկու չանի վրա, մերթ ձայնակցելով Ռուսիոյ՝ մերթ աչք քթթելով Մեծն-Բրիտանիոյ կամ Ֆրանսայի ու այս բոլոր «դիտուն» խորհրդածութիւնները կարելի է շարունակել անսահման կերպով, ամէն օր փոփոխով, յեղաշրջելով սարալները, համաձայն արտաքին գործոց նախարարներու այս կամ այն տեսակցութեանց:

Մինչ այդ՝ Իտալիան կը գերէ Ալպանիան, Մեծն-Բրիտանիան թաթը դրած է Յունաստանի վրա, Պուլկարիան՝ կը խեղդէ իր նեղ սահմաններուն մէջ, Մակեդոնիան կը հեծէ պղտիկ ազգերու բռնութեան տակ, Աւստրիան՝ անուաղ կը հիւծի, Հայաստանը՝ անօթի է ու մերկ, Ուքրանիան՝ եղբայրական ու սրբազան Ռուսիոյ լուծին տակ... ու շարունակեցէ՛ք այս շարքը եթէ սիրտ ու ժամանակ ունեք:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ  
(Շարունակելի)

## Է Զ Ե Ր Ի Մ Օ Ր Ա Գ Ր Ի Յ

### 2. ԳՆԱՏՔՐՈՒՄ

Երբ մտնում ես մեծ քաղաքի կայարան, անմիջապէս մտաբերում ես պատերազմի ու յեղափոխութեան տարիները: Աներևակայիչ մարդկային միտք, չտեսնւած իրարանցում, տոմսագրուակների մօտ կրկնակի հերթ, յատակին՝ պարկերի և զամբիւղների կոյտեր, նստարանների ու պատերի տակ նստած ու պարկած ամէն սեռի և հասակի մարդիկ, իրացնող աղմուկ և ամէն տեսակի արտայայտութիւններ...

Բայց ամենից ուշագրաւը պատերին փակցւած յայտարարութիւններն են: Սօսքս «քաղքենիական» սոսկաբանական բլկիամների մասին չէ, և ոչ էլ դրանց կողքին շարւած հակազգամատիրական նշանաբանների. այլ այն զոռուշացումների, որոնք արւում են հասարակութեան: — «Ձգուշացէ՛ք գողերից», «հետեւեցէ՛ք ձեր իրերին», «աշուրըլ զէպիլ զրպաններդ», «չխարէ՛ք կեղծարարներից»... Եւ այս բոլորը խորհրդային իշխանութեան տիրապետութեան ութերորդ տարեկանը տօնելու շրջանում:

Առաջին կարգի քրահներում հին ժամանակների շեղութիւնը՝ մաքրութիւն, ճօն քրուֆէտը և «կիտակ»

ներ. Գները թանգ և մատչելի միջան նշպմաններին ու բարձրաստիճան պաշտօնեաներին: Կիտակներում վաճառում են խորհրդային բոլոր թերթերը, էթանազին զրքեր ու բրոշուրներ: Այդ օրերին ամենուրեք կը հանդիպէք Բ-Սալիկովի «Սոստոյանութեանը», որը շատ շնչին դնով էր ծախւում (ինչպէս և իր ժամանակին Քալապուտու գիրքը Հայաստանում):

Ամենից զժաւար: տոմս ճարելն է, որովհետև գիտացների քանակը չի համապատասխանում ճամբորդների թւին, և դժերի սակաւութեան պատճառով էլ ուշ-ուշ են լինում: Եթէ չես ուղւած փախցնել գնացքը, կամ գիշերել կայարանում, պէտք է պաշտօնական մի բանի բուրբ վճարես, որպէսզի հերթից դուրս տոմս ստանաս: Ձարմանային այն է, որ այդ կաշտատիւրութիւնը կատարւում է բացարձակ՝ թէ հասարակութեան և թէ երկաթուղային վարչութեան ու կայարանի Գէպուի աշքերի առջև: Նման օրինապանութիւններն ու անկարգապահութիւնները թէ ինչպիսի բառս ու քաղկրտւեք են ստալ բերում, կարող են պատկերացնել միայն ուրանք, ովքեր ծանօթ են ուսս ժողովրդի լէգալիտիւն ու բունցաներին:

Ամենայնաին կայարանում անդամ Գէպուս ունի իր ներկայացուցիչը, որը, առանց շափազանցութեան,

կայարանի տէր ու տնօրէնն է: Իսկ մեծ կայարաններում արդէն Դէպէնուի առանձին բաժանմանը կայ, որը իր պաշտօնական ու դադողն ու մարդկանցով ողորդում է կայարանն ու գնացքները: Այդ բանը շատ լաւ դիտեն ճամբորդները և դրա համար էլ շատ զգոյշ են արտաստաբաններին, կայարաններում և գնացքներում ամէն օր կատարում են քրէական յանցարգրութիւններ: Երկաթուղագծի բազմաթիւ չէկիսաները, միլիցիոներներն ու կարմիր բանակայիններն անզօր են դրա առաջն առնել և դրա համար պաշտօնական ազդարարութիւններով զբուռացնում են ճամբորդներին:

Ռուսաստանի ո՛ր մասն էլ որ գնաք ու որ անկիւնում էլ որ լինէք, անխուսափելիօրէն կը հանդիպէք անապատան ու որր երեսանների: Տնցողներով մէջ պարուրած այդ փոքրիկներից շատ քերն են ազնիւ աշխատանքով ապրում: Ուանք կոչիկ են մաքրում, մի քանիսը ծխախոտ ու մանրունքներ վաճառում և շատ չնչին տոկոսն է կարողանում որևէ աշխատանք ձարել: Մեծագոյն մասը թափառական, մուրաքիկ ու անագնիւ միջոցների ճամբան է բռնած: Բուռական է կայարանում մէկ վայրկեան անուշադիր լինես դէպի իրերդ ու դրպակը և արդէն որևէ բան պակսել է: Եթէ մէկն ու մէկի պարզած ձեռք մէջ դրած դրեցիր, չորս կողմից կը շրջապատես ու քթիջ մօտ տասնեակ պարզած ձեռքեր կը տեսնես: Երբ կայարանի մէկ անկիւնը քաշած կամ սեղանի մօտ նստած սկսում ես ուտել, իսկոյն դիմացդ տեսնելու ես մի քանի երեսաններ, որոնք լուռ ու աղբերոտ հայեացքով պատանուներդ են համբում: Այլևս հացը բկովդ կուլ չի դնում և ստիպւած ես լինում կամ պաշարիդ մեծ մասը բաժանել նրանց, կամ թէ հեռանալ և շարունակելու համար սպասող գնացքի շարժելուն: Ամէն մէկի զնցողների մէջ անպայման պահւած է ժամգոտ գանակի մի կտոր: Բացի այն, որ երբեմն մութ անկիւններում է գործածւում, դանակը գլխաւորապէս պահւած է պարկեր ճեղքելու և վերարկուի փէշ կտրելու համար: Միլիցիոներներին շատ լաւ յայտնի է այդ ամերը: Սակայն, նա միայն հակում է և արարքը կատարելու վայրկեանին է, որ մրայ է հասնում կամ թէ փախչելուց յետոյ հետապնդում: Եթէ խոյս տայու ժամանակ յանգագործ երեխան միայնքած իրր ձեռքից ձողեց, այլևս չի հետապնդուում և մէկ տարր քայլ հեռու կանգնում է ծայրերը երեսին: Իսկ եթէ տուժողն ինքը փորձի պատժել յամբաստողին, իսկոյն պատասխանատուութեան կենթարկել: Հետաքրքիր է ձերբակալած անապատանի կոմիսարիստ տարւելը: Փոքրիկը գիտէ, որ, եթէ յաճողի փախչել, պահանք յետևի չի կրակելու, ուստի ամէն կերպ աշխատում է դուրս սրծնել միլիցիոների ձեռքից: Միտեհոնէրը արգէն փորձում է և ամբողջ սեղմած ունի կայանաւորի թեր: Դեռ կէս ճանապարհը չարած, յանկարծ նրանց շրջապատում են ձերբակալածի ընկերները և սկսում պահակի հետ խաղայ. մէկը փէշից է քաշում, միւսը հրացանից բռնում, երրորդը հրում, չորրորդը կախում կալանաւոր ընկերորդից և այլն: Միլիցիոներն ազատ ձեռքով աշխատում է պաշտպանել և նոյնիսկ մի երկրորդին էլ բռնել: Ի հարկէ, այդ նրան չի յաճողում և վերջ է վերջոյ, գայլացած թողնում է կայանաւորի թեր և յարձակում պաշարողները վրա: Նրանք հէնց

այդ բոլորն էին սպասում՝ ազատւած ընկերորդ մէջներն առնելով, մէկ ակնթարթում աներևոյթանում են: Անխնամ ու անապատան երեսանների խոչորադոյն մասի դէմքին չէք նկատի վշտի ու ստուպանքի այն արտաստաբանները, որն այնքան յատուկ է որբերին: Իսկոյն տարբերում են նորերն ու խեղճերը իրենց անհամարձակութեամբ ու աղբերոջ հայեացքներով: Իսկ մեծ մասի դէմքին կարգաչուած է երեստուներին, աչքերի մէջ համարձակութեան, և շարժումները՝ անկաշկանդ ու վարժ: Սակայն, դա չի խանգարում, որ նայողի մէջ անսահման կարեկցութիւն տառջանայ:

\* \* \*

Մտնելով գնացք, ամբողջ ճանապարհը ճամբորդն անց է կացնում տուգաններու ահեղ մղձաւանջի տակ: Դրա համար բաւական է, որ անպարտաւոր թղթի կտոր կամ դրանակի մնացորդը նետես յատակին և որևէ շեղում կատարես դռներին փակուած կանոններից: Տուգաններու խնդրում իշխանութիւնն անողոք է և խիստ: Սակայն, այդ ձևական մաքրասիրութիւնը բնաւ արգելք չէ, որ ազգաբնակչութեան խոչըր մասը տապալկի կեդտի ու թշտուութեան մէջ: Այդ բանում համոզելու համար բաւական է մտնել երրորդ կարգի վագոնները: Ռուսաստանում, վերջին տարիները, դէպի արդիւնաւերական կենտրոններ ու մեծ քաղաքներ տանող գծերի վրա ամէն օր կը հաղիւթէ գործադուրկիների խմբերի, որոնք թափառում են գիւղից քաղաք, քաղաքից քաղաք և քաղաքից դիւր: Նրանց ինտուս տոկոսին ոչ միայն չի յաջողում աշխատանք գտնել, այլ և արձանագրել աշխատանքի բորաններում:

Նիհար, հնամաջ հագուստներով, դէմքը՝ դժգոյն ու դուրս ցցած այտուկներով, աչքերը վշտուտ ու կայրացած և լաթերով ու մի կտոր ևս հացով պարկաւան գնացքներում հանդիպածդ դործադուրկի պատկերը: Շատերը առանց հեռագրասիւններն ու փոփոխող սեսարանները նկատելու, խորատուլած նայում են պատուհանից դուրս, կամ թէ, հայեացքները բևեռած մէկ կէտի, անշարժ մնում՝ կայարանից կայարան: Ոմանք էլ, կարծես թէ, վախենալով մտքերի հետ մենակ մնալուց, իսկոյն հարեանների մէջ ճարում են զրուցները և սկսում անվերջ պատմել... Լսելով այդ պատմութիւնները, ինքդ քեզ ակամայից հնոց ես տալիս. այս երկրի իշխանութիւնը խեղդատակութիւն է, թէ իրօք աշխատաւորութեան տիրապետութիւն:

Մտնելու ես մէկ ուրիշ խմբի: Քսան-քսանմէկ տարեկան երիտասարդ, հրէական առողանութեամբ պատմում է Կիևի սարսափների մասին: Քաղաքացիական կռիւների ընթացքին այդ քաղաքը տասնէկը անգամ ձեռքից ձեռք է անցել: Եւ ամէն անգամ, երբ քաղաքին տիրապետել են հակարդուելիկները, միշտ էլ քաւութեան նոխազ եղել է հրեայ ժողովուրդը: Երկտասարդ հրեան նկարագրում է իր տեսած ջարդերի մանրամասնութիւնները: Շատ յուզիչ էր դպրոցի մէջ սարքած աշակերտների կտորածի մասին պատմածը: Իրեն փրկել էր արտաքինը, որը շատ ուռուական էր: Բաւական ծիծաղաշարժ էր պատմածի մէկ տեսարանը: Հարբած կողակները փողոցում տեսնելով մօրուսուր մէկին, հրեայի տեղ ընդունելով կրակում և փորցր վերաբարում են: Պարզում է, որ գոհը ուռու քահանայ է: Կողակները իսկոյն շրջապատում են և

ճունկի գալով սկսում են համարուրել նրա կրճերից կախւած խաչը և ներողութիւն խնդրում՝ խոստանալով միւս անգամ չսխալուի: Մի քանի վայրկեանից քահանան մեհնում է\*):

Երիտասարդը վերջացնելով պատմութիւնը, որը խորը ազդել էր բոլոր ներկաների վրա, յայտարարեց՝ «Հէնց այդ օրւանից եւ որուցից մտնել այն հոսանքի մէջ, կրէ կը յաղթի մեր դահիճներին ու իշխանութեան գլուխ կանգնի: Որ նա կ'օճուիստ էր, արդէն ցոյց էին տալիս կրճեր նշանները. իսկ իր կեցածքն ու շարժ ու ձևերը մասնում էին իր չէկիտտ լինելը: Եւ քա՛նիներն են այդ ու նման դրգապատճառներէից նորանոր դահիճներ դարձնել ու որքա՛ն անմոռ մարդիկ են զոհ գնացել այդպիսիների վրէժխնդրութեան...»

Յանկարծ վազոնի մէկ անկիւնում սոսկալի աղմուկ է բարձրանում: Անպայման գողութիւն է եղած: Բոլորը հաւաքում են այնտեղ: Կատաղած կիւրք խիտ բառերով կշտամբում է ամուսնուն, թէ ինչու անուշազիր է եղել և իրերը գողանալ տւել: Լաց ու ճիչ, իրարանցում և ապա խուզարկութիւն: Ամբողջ մէկ ժամով խանդարում է անդորրութիւնը: Իրերը գտնելու բոլոր ճիգերը ապարդիւն են անցնում՝ նրանց կասկածելի հարեանք նախորդ կայարանում է իջել:

Ճանապարհին, ճանճրացնելու սասիճան շուտ-շուտ տոմսերի ստուգում է լինում: Ստուգելիքն անպայման ուղեկցում են գնացքի չէկիտտ կոմենդանտը և մէկ հաս էլ հրացանաւոր կարմիր բանակային: Մէկ էլ տեսար պաշտօնեան կոտնալով այս կամ այն նստարանի տակից, ոտքից քաշելով դուրս հանցք անապատան երեխայի: Անհոգ, առանց յիսխի արտայայտութեան, փոքրիկը քայլում է դէպի դուռը: Միայն, կարծես թէ դժգոհ է իրենից, որ բուռեց: Առաջին իսկ կայարանում նրան իջեցնում են, յանձնելով ճակատագրի խնամքին: «Միւնոյն է, հետեւեալ գնա՛ւ քաղաք», փնթիկիթում է քթի տակ ու ցատկում աստիճաններից:

Գնացքներում ճամբորդներն իրենց շատ զգոյշ են պահում: Սոսում են այնպիսի նիւթերից, որոնց մասին բոլորն են խօսում: Մեծ մասամբ, միեւնաց հաղորդում են լրագրական լուրեր. անձնակազմ վերաբերմունքն ու տեսակէտը, որեէ դէպքի վերաբերեալ, պէտք է հասկանալ արտայայտողի շեշտից ու ձայնի տոնից: Կուսակցականի կամ կասկածելի երևացող հարեանի ներկայութեամբ, ընդհանրապէս, քաղաքական նիւթեր չեն շօշալուում:

Շատ յաճախ է պատահում, որ կայարաններում, մեծ մասամբ քաղաքների մօտ, գնացքը շրջապատում է չէկիտտների կողմից և սկսում են հարցաքննութիւններ և ձերբակալութիւններ: Մինչև կայանաւորի ով է ինչ լինել պարզելու անցնում են օրեր, շարաֆներ և նոյնիսկ ամիսներ: Երբ մեր գնացքը մօտեցաւ Ռոստովին, իսկոյն նկատեցինք, որ կայարանում առանձին ուժեղ հակողութիւն կայ և մի վաշտ գինուորայն էլ շարժած են գժի երկարութեամբ: Մտնելով կայարան, այնտեղ էլ սեփանք չէկիտտների խմբեր: Բոլորիս կայարանից քշեցին փողոց: Կայարանի առջևի հրապարակը

շրջապատւած էր ձիաւոր միլիցիոներներով, և ոչ ոքի չէր թոյլատրւում մէկ վայրկեան անգամ կանգ առնել: Դէպի քաղաք տանող փողոցներն էլ լցւած էին ձիաւոր պահակներով: Կէս ճանապարհին, կառքիս յետևից դուռացին կանգ առնել: Քիչ յետոյ մեր մօտից արագօրէն անցան երեք-չորս օթոճորհներ, չըջապատւած մի տասնեակ ձիաւորներով: Միայն յաջորդ օրը թերթում կարդացի, որ այդ ժամին, Մոսկւայից տեղս է ժամանել Պոլիտբիւրօյն անդամ ընկ. Կամենևը (14-րդ կուսակցական համագումարի նախօրեակին էր): Անա թէ ինչպէս են ճանապարհորդում խորհրդային երկրում ժողովրդի «հարազատ» ներկայացուցիչները...

Ժամը ինը դեռ չկար, երբ թիակցի ծանօթիս սենեակի դուռը: Դռան յետևից լսեցի տանտիկնոջ ձայնը, որը ով լինելս հարցրեց: Երբ համոզուեցի, որ իրօք ծանօթիս տունն է, խնդրեցի ամուսնուն կանչել: Ամուսինը դալուց յետոյ էլ դուռը չբացեցին: Սոսկալի անձրևոտ մթնադէղեր էր և ամպերի որոտը խանդարում էր իրար պարզ լսելուն: Մի քանի անգամ անունս կրկնելուց ու անցեալից մէկ երկու դէպքեր յիշեցնելուց յետոյ էլ չհամաձայնեցին դուռը բանալ: Բանակցութիւնները փոխադրեցինք լուսամտի առջև: Դրով մթութիւնը թոյլ չէր տալիս, որ ներսից դէմքս պարզ տեսնեն: Վերջապէս համաձայնութեան եկանք, որ ես գնամ դիմացի խանութը և ծանօթս գալով այնտեղ կը ստուգի ինքնութիւնս:

Քիչ յետոյ, երբ նա մտաւ խանութ, նախ դարձացած աչքերը չուց, ապա մեղաւոր ժպտող դէմքին՝ ամուր փաթեակեց:

— Դէ՛հ, կը ներես, այնքան է շատացել սրիկայութիւնն ու աւազակութիւնը, որ ստիպւած ենք զգուշութիւն ձեռք առնել և ոչ ոքի չհաւատալ...

3. Ռուսաստանի հայրութիւնը

Չհաշւած Անդրկովկասը, Խորհրդային Միութեան սահմանների մէջ գտնւած հայերի թիւը մօտ կրէք հարիւր հազար է:

Մեծ մասամբ կենտրոնացած են հարաւային քաղաքներում՝ Ռոստով, Նոր-Նախիջևան, Արմաւիր, Խարկով և Կրասնոդար (Նախիկին Եկատերինադարը): Հայութեան շատ շնչին մասն է կապւած հողին. պաշտօնեաների թիւն էլ աննշան է: Խնդրագոյն տղիքը քրաղւում է մանր աւուտրով և արհեստներով: Համեմատելով Սուրբոյ և Միջագետքի գաղթականութեան վիճակի հետ, կարելի է ասել, որ Ռուսաստանում եղածների կացութիւնն աւելի տանելի է: Այս վերջինները զեծ լինելով տեղափոխութիւնների ու Փիղիքական վտանգից, վայելում են կեանքի դուրսթիւններ այն չափով, ինչքան որ թոյլ կը տան խորհրդային յուրի կարգերը: Սակայն, դժբախտաբար, արտասահմանեան գաղութներին նման Ռուսաստանի հայութիւնն էլ միանգամայն կորւած է բուն երկրից, իսկ Հայաստանի կառավարութիւնը բնաւ չի հետաքրքրւում նրանցով:

Փոխադարձ կապի բացակայութիւնը շատ գարձացրեց ինձ, որովհետեւ ամբողջ Միութեան սահմանների ներքո գոյութիւն չուուն անցաբարային ու վիզայի այն դժարութիւններն ու համաձայն չարգելքները, ինչ որ կան արտասահմանի համար: Ըստ այս բոլրէկներեի, Հայաստանից դուրս գտնուող հայերը համարւում են

\*) Փահանայի հետ պատահած այս դէպքի մասին մի քանի անգամ յիշատակեց վերջերս Փարիզում տեղի ունեցած Պետլիւրայի սպանիչ Շւարցբարտի դատավարութեան ժամանակ:



խորհրդային այն երկրի քաղաքացիներ, որի սահմաններին մէջ ապրում են. հետեւաբար և յանձնւած են տեղի իշխանութեան հոգատարութեան: Միայն 1924ին փորձեր եղան Հօկերի միջոցով կապ ստեղծել: Շուտով դրանք էլ վերացրին, քանի որ Ռուսաստանում պրոպագանդ անելու ոչինչ չունէին: Խորհրդային իւրաքանչիւր հանրապետութիւն ունի ազգային փոքրամասնութիւններէ բաժին, որը և հսկում է օտար ազդեցութիւնների մշակոյթի գործին: Առանց իրենց նախաձեռնութեան ու օգնքի, այդ պաշտօնական օրգաններն այնքան էլ օգտակարութիւն չունեն: Աւելի շուտ կոնսուլի դեր ունեն:

Բարեբախտաբար, հայերի մէջ շատ ուժեղ է մնացել նախաձեռնութեան ոգին և ազգային մշակոյթի սէրը: Թող տարօրինակ չլիւայ, եթէ ասեմ, որ դա որոշ չափով հետեանք է այն բանի, որ Ռուսաստանի հայ գաղութներում կօմունիստներ համարեա թէ չկան և որեւէ համաժողովրդական գործ խանդարողներ պակասում են:

Ինչպէս ամենուրեք, այստեղ էլ դպրոցի դերն առաջնակարգ է: Դրա համար էլ, բաւական է, որ մէկ վայրում համախմբուեն մի երկու տասնեակ ընտանիքներ, արդէն կաշիք երնում են սեփական դպրոց ունենալու համար: Ինքս եմ տեսել, թէ ինչպէս հայկական փոքրիկ գաղութը ոչ միայն դպրոց ունենալու թոյլտուութիւն է ստացել, այլ և իր միջոցներով դպրոցի շէնք է կառուցել և ուսուցիչ հրաւիրել: Բացի այդ, մէկին էլ ուղարկեցին Երևան, հայերէն գրքեր գնելու:

Իւրաքանչիւր գաղութ ունի իր ներկայացուցիչը իշխանութեան մօտ, որի միջոցով էլ դիմումներ և կարգադրութիւններ է անում: Վերջերս, արդէն պարտադիր էր, որ գաղութի, այսպէս ասած, նախագահը կօմունիստ լինի: Պատահում է այնպիսի գաղութ, որ կուսակցական շունենալու պատճառով, ընտրում է անկուսակցականի: Իսկ ուր որ գտնուում են մէկից անցի կօմունիստներ, արդէն սկսում է մրցակցութիւնը և նախագահական թրոփ շուրջը բարձրանում է ահադին աղմուկ: Յաճախ, այդ պայքրից գաղութը տուժում է. բայց երբեմն էլ օգտւում: Նայած, թէ կողմերն ինչ ձևով են տանում պայքարը: Ինքը գաղութը սովորաբար չեղքե գերում է մնում և ծայրայեղ դէպքում է միայն միջմտում: Շատ ուժեղ պայքար կար Խարկովում, ինչ որ Սարատիկեանի և մէկ վանեցի կօմունիստի միջև. երկուսն էլ արդէն մէկական անգամ

ներկայացուցիչ էին եղած: Մէկ ուրիշ գաղութում, որը մի քանի տարի էր, ինչ նւերւած էր տնտեսական ու մշակութային աշխատանքի, խաղաղ կեանք էր վարում, յանկարծ երևում է մի երիտասարդ հայ կօմունիստ, որը միաժամանակ թէ պաշտօնավարում էր և թէ Ձէկայի լրտես էր: Ձբաւակնանալով դրանցով, սոսնձգութիւններ է տնուում նաև հայկական գաղութի նկատմամբ: Նա ոչ միայն փորձում է ներկայացուցիչ ընտրել, այլ և գաղութի տէր ու տնօրէնը դառնալ: Միւս կողմից էլ սկսում է կաշառակերութիւն և սպառնալիքներ: Ով դիտէ, թէ ինչով պիտի վերջանային նրա «հերոսութիւնները», եթէ շուտով ինչ որ դեղծումներէ համար չբանտարկէր:

Իսկ ընդհանրապէս, հայերն իրենց ներքին կեանքում շատ խաղաղ են և հաւաքական: Միշտ էլ միմեանց օգնում են ու աջակցում և ամէն ճիգ գործադրում կուլ չընալու շրջապատին: Որեւէ հայերէն լեզուով ներկայացում, երկրորդ կամ դասասխտութիւն ուղղակի օտնական բնոյթ է կրում: Բոլորն էլ ուզում են ներկայ լինել ու մի տեսակ, առանձնապէս շեշտել իրենց հայ մնալը: Ինչ որ հայկական է, շատ մօտ են ընդունում իրենց սրտին և զոհարեթութեան ամէն դեռով աշխատում պահպանել այն: Միայն, ինչպէս ասացի, ներքին ցեցերիցն է վտանգը:

Ռուսաստանում ապրող հայն էլ արտասահմանում եղածի չափ սիրում ու կարօտում է Հայաստանը: Այնտեղից եկած նորեկին շրջապատում են, մանրամասն հարց ու փորձի ենթարկում և մեծ հետաքրքրութեամբ հետևում պատմածներին: Հայաստանից հասած ամէն մէկ լուր գրաւում է բոլորի ուշադրութիւնը և նայած դէպքին՝ ուրախացնում, յուզում և վրդովում: Այնտեղի հայութիւնն էլ աչքերը յարել է դէպի Հայաստանի կողմը և սրտատորտի սպասում: Եւ այդ սպասողական դրութիւնը նրա համար աւելի է ծանր:

Մանր է, որովհետև միշտ էլ կարող է գնալ, բայց ստիպւած է մնալ, քանի որ եթէ գնայ, ապրելու հնարաւորութիւն չպիտի ունենայ: Որոշ մարդիկ նոյնիսկ գնալու իրաւունքից էլ զուրկ են...

Ռուսաստանի հայկական գաղութներում մէկ բան էլ էր աչքի ընկնում. — Այնտեղ հետաքրքրութիւնը դէպի արտասահմանի հայութիւնը շատ մեծ է և անհամբեր սպասում են, թէ երբ պէտք է հնարաւորութիւն ունենան համախմբուելու մէկ ընդհանուր օջախի շուրջ:

ԱՇՈՏ

# Հ ա մ ա գ ո ը ծ ա կ ց ու թ ե ա ն . մ է կ դ ա ը ը \*

Գրեց՝ ՇԱՐԼ ԺԻԻ

Հարիւրամհակեր տօնելը ներկայիս նորածնութիւնն է: Առիթ կայ, հետեւաբար, գարմանալու, որ կօօպերատորները, և, յատկապէս, անգլիական կօօպերատորները մոռացել են, որ 1927 թիւը նշում է սպառողական համագործակցականի ծննդեան հարիւրամհակը: Որովհետև 1827 թւի յուլիսին էր, որ Բրայտոնում դոկտ. Կինդի միջոցով հիմնեց The Cooperative Trading Association կոչւած ընկերակցութիւնը, որը իր հերթին ծնունդ տւեց հարիւրաւոր համագործակցականներին: Ընդհանրապէս, ստանձամանիքից թօշնող գարնանային ծաղիկի պէս, այս շարժումը վիժեց և վերակուց աւելի քան 17 տարի յետոյ միայն՝ Ռուզվելի ուսձիւրաների միջոցով: Ահա թէ ինչու վերջիններս համար է վերապահուած, 1914-ին, առաջին հարիւրամհակի պատիւը: Բայց յաջողոյնքը չպէտք է մոռացնել տան նրանց, որոնք ձախող էին, որովհետև իրենց յալթանակը հէնց այս պարտածներին են պարտական: Եւ յետոյ, եթէ ուզում են հաշուել Ռուզվելից, ապա պէտք է զգուշանան, որովհետև այս դէպքում Փրանսացիներն են, որ առջնութիւնը պիտի պահանջեն, քանի որ ուսձիւրանից առջ 1835 թւին նրանք Լիօնում ստեղծեցին սպառողական մի համագործակցական՝ տալով նրան մի սքանչելի անուն, որը ամբողջ շարժմանը կարող է ծառայել իբրև կարգախօս՝ «էպլիպարար անտորը»: Բայց եթէ շարժման ծագումը յետ առանձն մինչև Բրայտոնի համագործակցականները, այն դէպքում հարցը կը լինի կարգադրւած, որովհետև այս թւից առաջ, անցելուց, այստեղ ու այնտեղ մի քանի անձնատու և աննշան փորձեր ենք միայն գտնում:

Յաւակնութիւնը չունեմ մէկ ժամի մէջ երգարակելու հարիւր տարւայ պատմութիւնը, բայց կուզիմ շարժանկարի պէս արագ անցկացնել ձեր տեսողութեան տուրքից համագործակցական շարժման յաջողական հանդիսանները, որոնցից իւրաքանչիւրը նշւած է մէկ թւականով:

1827. — Սա, ուրեմն, ծննդեան թւականն է: Բայց ի՞նչ էր բերում մարդկանց այս նորածինը: Տակաւին ո՛չ մեծ բան: Իր հիմնարկի մտքում նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ մի կատարելագործւած խնայողութեան գանձարկը: Այն ժամանակաշրջանում անհատական խնայողութեան գանձարկը արդէն ծանօթ էր, բայց սպրտաւոր այնքան դժարութիւններ ունեցող գանձարկներից նա պահանջում էր մեծ գոհաբերութիւններ, իսկական գրեանքներ՝ փոխարէնը վերադարձնելով նւագագոյն առաւելութիւններ: Յամենայն դէպս, նա

չէր կարող փոխել բանեւորների վարձատրութեան պայմանները, մինչդեռ սպառողական համագործակցականը չի ծանրարեցնի իր անդամներին որևէ զոհաբերութեամբ, բացի առաջին բաժնետոմսի համար մուծելիք մի քանի շիլլինգից: Եւ, շնորհիւ սպրտաբնորի վաճառումից գոյացած վաստակի, նա կարող է տասը, քսան անգամ աւելի շահ բերել, քան խնայողութեան գանձարկը:

Սակայն, նկատեց անմիջապէս, որ համագործակցականի այս առաջին ձևի տակ շահը չէր բաժանուում բաժնետէրերին, այլ վար էր գրւում ընկերութեան կողմից՝ մի հուսաբական անձեռնմխելի յարատև դրամագլուխ կազմելու համար՝ սահմանւած ապագայ սերունդներին: Շնորհիւ այս կուտակման, ընկերակցութեան ապագայ անդամները չէին լինի այլևս, այսօրուայ պէս, բառիս իսկական խնայող պորտուարներ: Նրանք պէտք է գտնէին կազմւած պարտատէր դրամագլուխ, որից պէտք է օգուտէն ձրիաբար:

Հաւաքական յարատև պահեստի դրամագլխի այս գաղափարը, նման կրօնական համայնքների նոյնանման գաղափարներին, վերայախոսեց աւելի ուշ՝ համագործակցութեան այլ ձևերի ծննդեան ժամանակ: Թրանսյում Բիւլէտով՝ յանձին բանեւորական առաջին արտագրական միութեանն: Գերմանիայում Ռայֆայդէնով՝ յանձին գերդական գանձարկը կուտակ առաջին փոխառական համագործակցականի: Նա, իսկապէս, յափշտակիչ է, հրապուրիչ: Նա մի լուսապատկ է կրում, նման այն լուսապատկին, որ նկարիչները գնում են որբերի գլխին: Գեղեցիկ է՝ տեսնել նրան համագործակցութեան ճակատման՝ օրօրոցից սկսած: Բայց այդ գաղափարը շատ խորհրդապաշտ էր, շատ անհասկացիկ ու այնպիսի մարդկանց համար, ինչպիսին էին այն ժամանակայ բանեւորներ և որպիսիք են դեռ ևս այսօրանները: Ահա բաժնետէրեր, որոնք, իրենց գործակցականից ոչինչ ունեն սպասելիք՝ ո՛չ շահաբաժին, քանի որ ընկերութիւնն այն պիտ էր դնում, ո՛չ իրենց բաժնետոմսի շահն և ո՛չ իսկ արժէքների նւագեցում, որովհետև համագործակցականը կարիք ունէր յաւարտէրով ծախելու, որպէսզի շահ ունենար՝ իր հաւաքական պահեստի դրամագլուխը մեծացնելու համար: Ուրեմն, նրանցից պահանջւում էր ինքնագոհողութիւն՝ իրենց յաջողների համար: Սա նշանակում էր, իսկապէս, շատ աւելին սպասել հասարակ մահկանացուի հաներաշխական ոգուց:

Հիմնարկողները յաւ գիտէին այդ: Նոր ընդունեցող անդամների ընտրութիւնն էլ կատարւում էր խստութեամբ: Մտնելու համար պէտք էին բազմաթիւ պայմաններ. անդամներ թիւր խիստ սահմանափակ էր՝ գրեթէ Տասներկու Առաքելայի թիւ չափ: Բայց այս պայմաններում ակնյայտ էր, որ նրանք չպիտի կարողանային յաջողել, որովհետև եթէ անձնագրահների ազգային փոքրիկ թիւ բաւական է մի եկեղեցի հիմնելու, այդ թիւը բաւական չէ՝ մէկ խանութ ապրեց-

\* Այս տարի լրացաւ համագործակցական (կօօպերացիա) շարժման հարիւրամհակը: Այս աւթիւ օգտակար ենք համարում տայ ֆրանսացի հոշակաւոր տնտեսագէտ Շարլ Ժիլի այն յօդածը, որ լոյս տեսաւ «Bulletin Cooperatif International»-ի օգոստոսի համարում և արտասպէս ֆրանսերէն ընկերակցական «Le Vie Socialiste» շրաքաթերքում: ԽՄԲ.

ներու համար: Այդ համազործակցականները մեզան մէկը միւսի յետեից՝ յաճախորդներէ պակասի պատճառով:

1844. — Պէտք էր երկնքից, կամ առելի շուտ՝ ամպերից ինչն էրկրի վրա: Այդ եղաւ Ռոչտոկի ուսուցիչներէ գործը: Նրանք բմբոնեցին, որ համազործակցականը ապրեցնելու և մեծացնելու համար պէտք էր, որ իր անդամներին տար անմիջական շահ և փոխանակ իրեն վերապահելու փոքրաթիւ ընտրեալներին, ընդհակառակը, իր մուտքը բանքը ամենքի առջև: Պէտք է վարէր Մեծ Ռեյնլոքի ստացածքի նման. «Գնա՛, շըլի՛ր փողոցները և հանդիպածիք ստիպիլ ներս մտնելու»:

Ի՞նչ շահ էր պէտք ընձեռել բաժնետէրերին: Անշուշտ, վաստակի բաժանումը բոլոր ձեռնարկներէ պէ՞տք: Այո՛, միայն թէ տարբեր, ուրիշ, որ ամատիրական կոչուող ձեռնարկներէ, այնպէ՛ս, որ այդ բաժանումը պիտի արէր ոչ թէ դրամ զբաժանելու քանակի կամ ունեցած բաժնետոմսերի թիւի, այլ՝ կատարած գնումների գումարի համեմատութեամբ: Այսպիսով, օգուտն այլևս չէր գնայ առելի հարուստներին, խոշոր բաժնետէրերին, այլ՝ խոշոր գնորդներին. դրանով կը հրահրէր նրանց հաւատարմութիւնը դէպի ընկերութեան խանութը: Եւ մինչև իսկ առաջին հանդիպողը հրաւիրուած էր մտնելու և գնելու, միայն թէ այդպիսին՝ քանի գոհ ընկերութեան անդամ չէր դրած, ստանձու էր կէս բաժին:

Այս էր ուսուցիչների հանձարեղ դադափարը, որը վերագրուած են նրանցից մէկի՝ Շարլ Լոյվարթի արժանիքին և պէտք է ունենար անսահման յարողութիւն, որովհետև դեռ այսօր էլ այն կանոնի գործադրութեամբ է, որ տասնեակ հազարաւոր համազործակցականներ իրենց գոյութիւնը պարտական են նրան: Նրա շնորհիւ է, որ մարդիկ կարողացել են հաւաքել տասնեակ միլիոնաւոր անդամներ: Բայց ուժգիններին տրուած այն պատուից պատճառ. չգիտի լինի, որ մենք աջքներ փակենք այն փաստի վրա, որ Լոյվարթի կանոնը շահի բաժանում լինելուց առելի մի գիշում էր անհատականութեան սկզբունքին: Եթէ նա չուներ դրամատէր ընկերակցութիւններին կրամտային, անհաւասար, սակաւապետական բնուորութիւն, այնուամենայնիւ կոչ է անում անհատական շահին, և իր շահարժանին անհամբեր սպասելու փաստը շատ էլ համապատասխան չէ ճշմարիտ համազործակցութեան ոգուն: Նոյնպէս և համազործակցային դատտիրարութեան ամբողջ ճիգը, Անյիլայում և այլուր, միտում է յարաճուճորէն նեղեցնելու շահարժանի սակագինը, որպէսզի համարեա ամբողջ շահը յատկացել համազործակցական շարժման և հաւաքական շահին ներկած գործերի:

1848. — Սա եղաւ թւականը քաղաքական ազատագրութեան մի մեծ շարժման Եւրոպայում — յեղափոխութիւն Յրանսայում, Գերմանիայում, Աւստրիայում, Իտալիայում—որն իր անդրադարձումն ունեցաւ և ընկերային շարժման վրա: Սա եղաւ մեծ մղիչը Փրանսական ընկերավարութեան: Եւ համազործակցական մարզում, եղաւ եթէ ոչ ծննդեան, ապա առ նազն Յրանսայի և Անգլիայի արտադրողական համազործակցական միութեան ծաղիման ու տարածման թւականը, ինչպէս նաև փոխատական համազործակց-

ականների ծննդեան թւականը՝ Գերմանիայում՝ Ռար-Ֆայլէն և Շույցէ-Դելիշեան կրկնակ ձևերի տակ:

Փոխատական համազործակցականի նախաձեռնողները Գերմանիայում այլ նպատակ չունէին, քան դիւզադեական և միջին դասակարգի ազատագրումը վաշխատական կապուքները, բայց արտադրողական համազործակցականների նախաձեռնողները Յրանսայում և Անգլիայում առելի մեծ իղձ ունէին՝ ազատագրել բանւոր դասակարգը վարձուորի և գործատէրերի հնթակայ միճակից՝ միջոցներ տալով, որ բանւորներն իրենք իրենց սեփական տէրերը դառնան, և ոչ թէէ, ինչպէս սպառողական համազործակցան էր անում, սոսկ իրենց սեփական գնորդը դառնան:

Նպատակը վե՛հ էր շատ և մինչև այսօր էլ արտադրողական համազործակցականը խիստ է հեռու նրանից: Սակայն, Յրանսայում, Իտալիայում, Անգլիայում այդ միութիւններից մի քանի հարիւրն անջատորէն հասել են այդ նպատակին և հաւատարմորէն փայտալուծ են իրենց ազատագրութեան ընդհանրացումը տեսնելու յոյսը:

Բայց 1848 թւականը միայն արտադրողական և փոխատական համազործակցականների համար չէ, որ դարագլուխ է համարւում, այլ և՛ սպառողականի: «Քրիտտոնեայ Ընկերավարականներ» անունն էին կրում նրանք: Նրան տւին կոծական, աւետարանական բնոյթ, որը յետապնդին պիտի միացնէր քրիտտոնեայ եկեղեցիների մի խոշոր թիւ, յատկապէս բողոքական երկրներում: Ինչո՞ւ: Որովհետև Լոյվարթի կանոնը՝ շահի վերադարձը գնորդներին, այսինքն նրանց, որոնց գնումներից էր դոյացել այդ շահը, քրիտտոնեայ ընկերավարականների համար տուցաւ նոր իմաստ. այդ ժխտումը, դատապարտումն էր շահի: Այս իմաստը պարզորէն արտայայտւած է շահարժանի բառի փոխարէն Յրանսայում գործածական «յաւելեալ-գանձում» («trop-percu») բառի մէջ:

Անա թէ ինչու յանձին այդ կանոնի քրիտտոնեայ եկեղեցիները ողջունեցին յաղթական մուտքը փոխանակութեան մի նոր ձևի, վարձանը մամոնայի թաղաւորութեան, ոչնչացումը շահասիրական ոգու, իրականացումը Չաքարիայ մարգարէութիւնների՝ «Յաւելեալ-տեսական» տանն այլ ևս վաճառականների չեն լինի: Երբպէս կրկնութիւնը Յիսուսի այն շարժումի, որով նա դուրս վրձոեց տաճարից վաճառականներին:

1864. — Սա ծննդեան թւականն է Մանչեսթրի մեծաքանակ վաճառքի, այսինքն՝ երկարակամի համագործակցութեան: Սա համազործակցականների համազործակցութեան ստեղծումն էր, որը երիտասարդ ու փոքրիկ ընկերակցութիւններին տալիս էր մեկնոյն առաւելութիւնները, ինչ որ խոշորներին և աւազներին: Այս այն թւականն է, երբ համազործակցութիւնը մտնում է մեծ տիպի ձեռնարկների շարքը՝ մրցելու համար դրամատիրական վաճառատների հետ և գործածելու նրանց կիրաման միջոցները, յատկապէս ինքն իր սեփական միջոցներով արտադրելով հարկաւոր ամէն բան՝ Հիմնելով այդ նպատակով գործարաններ և ազարակներ: Մէկ խոնքով, փոքրաքանակ առևտուրը նաճելուց յետոյ համազործակցութիւնն սկսում է սպառնալ մեծաքանակ առևտրին, արդիւնաբերութեան և մինչև իսկ երկարագործութեան: Սա էլ մի տեսակ համազործակցական աշխարհակայութիւն

է, որ ի յայտ է գալիս: Եւ այսպէս՝ իբր յալորող տասնամեակներէ ընթացքին, բոլոր երկրներն իրենց հերթին սկսում են ստեղծել կենարոնական համազոր- ծակցականներ՝ մեծաքանակ վաճառքի խանութներ: Տնտեսական մի հակա յապաղայ է բացում համազոր- ծակցութեան ստշէ:

1878. — Համազործակցութիւնն ականատես է լի- նում մի աճարկու թշնամու՝ մարքտիզմի երեան գա- լուն: Եթէ Անգլիայում քիչ տուժեց մարքտիզմից, միևնոյնը շեղաւ եւրոպական մայր ցամաքի վրա: Ֆրանսայում, Գերմանիայում համազործակցութիւնն իրեն լրեւած գտաւ բանւոր դասակարգի կողմից:

Մինչ այդ՝ ընկերվար դպրոցները, Օվէնը՝ Ան- գլիայում, Ֆուրիէն և Լուի՝ Ֆլանը՝ Ֆրանսայում բարեացակամ էին համազործակցութեան հանդէպ և մինչև իսկ որդեկրել էին, որպէս իրենց ծրարի մաս- նակի իրականացնող. և բանւոր դասակարգը տւել էր որոնք իր սիրտը: Հակառակ սրան նոր ընկերվար դպրոցը՝ յայտարարելով դասակարգային կռիւ ըսկրդ- բունը՝ կարող էր միայն արհամարհել համազործակ- ցութեան հաշտարար ոգին, որը որակում էր «մահը բուրժուա» դարձածքով: Գերմանիայում Ֆերդինանդ Լասսալը ծագրի էր ենթարկում Շուլցը-Դելիշեան հա- մազործակցականը: Ֆրանսայում ժիւլ Գիլը համա- զործակցականը յայտարարում էր անդոր: Եւ եթէ ես արձանագրեցի 1878 թիւը, չնայած որ Կարլ Մարքսը հռչակաւոր գիրքը՝ «Կապիտալ»-ը լոյս է տեսել 1867-ին, — դրա պատճառն այն է, որ 1878-ին էր, որ Մարսէլի բանւորական համագումարում քեզարկ- կեց մէկ բանձն, որով համազործակցութիւնը յայ- տարարում էր անկարող իր նպատակներն իրականաց- նելու համար՝ արտաշայտելով միևնոյն ժամանակ բանւոր դասակարգի հաւատքը, որ արտադրութեան միջոցներէ համայնացումը պէտք է կատարուի տիրող դասակարգի սեփականազրկման միջոցով:

Մինչև իսկ Անգլիայում, եթէ մարքտիստական դպրոցը քիչ հետևողներ ունեցաւ, այնուամենայնիւ, արէդ-իւնիոնիզմն սկսեց աւելի զորաւոր ձգողական ազդեցութիւն ձեռք բերել բանւոր դասակարգի վրա և համազործակցութիւնն իջեցնել երկրորդական կարգի վրա:

1885. — Սա ծննդեան թւականն է Նիմեոն\*) կոչւած դպրոցի: Անկասկած, արտասահմանում է՝ մինչ- չև իսկ Ֆրանսայում կարող են մտածել, որ մի շատ յափաղանցւած կարևորութիւն ենք տային՝ տեղ տայով նրան համազործակցական յարժման մեծ հանգրտաննե- րի մէջ, և իրաւունք պիտի ունենան հարցնելու, թէ ի՞նչ նոր բան է բերել նա:

Կարող ենք ասել, ինչ չարիք որ Ֆրանսային է մերարբերում, նա առնւառն սիրելի է համազործակու- ցիւնը, որ կրկնակ սպարոնայիտ տակ էր՝ մէկ հոռոմիս՝ նոր քնկերվարութեան, որ, ինչպէս ասագինք, ժխտում

կամ իջեցնում էր նրան բանւորական կուսակցութեան սպասարկի դերին. միև կողմից՝ ազատական քաղա- քասնտեսութեան, որը յետ էր տանում նրան մինչև ինսյուլուութեան գանձարկղի գերը՝ զրկելով նոյն իսկ իրայտոնի ռահվիրաների հաշտարար ոգուց: Նա չէր ուզում համազործակցութեան մէջ տեսնել այլ բան, քան լոկ մի միջոց, որով բանւորները պիտի կերպարանափոխէին՝ դառնալով փոքրիկ սեփականա- տէրեր, դրամատէրեր, փոքրիկ գործատերեր և այս- պիտով պիտի ստեղծէր գոյութիւն ունեցող ընկերային կարգերի մի պաշտպան, մի դրահ՝ ընկերային յեղա- փոխութեան սկէ:

Հակառակ laisser faire-ի քաղաքասնտեսութեան Նիմեան դպրոցը, — կամ նախընտրելի է ասել՝ Նոր- կոսպրատիվը — հաստատեց ազատ մրցակցութեան ոչ ազդեցիկ և մինչև իսկ վնասակար լինելը՝ հակա- դրելով նրան անհրաժեշտութիւնը ընկերային կարգա- կերպութեան, որը չպիտի տարւէր այլևս շահի հետա- սնդումով, այլ պիտի լինէր աստիճանական, ազատ և խաղաղասէր համայնացում բոլոր ձեռնարկների:

Բայց յանձին համազործակցութեան ցուցողելով ընկերվարութեան մէկ արտաշայտութիւնը՝ նոր-կո- սպրատիվը նոյնպէս հակադրում էր նրան մարքտի- ստական ընկերվարութեան՝ քննադատելով որա հիմ- նական սկզբունքները. նա հերքում էր, որ ամէն արժէք, իբր թէ ստեղծւում է աշխատանքի միջոցով, և ցոյց էր տալիս, ընդհակառակ, որ արժէքը ստեղ- ծւում է օգտակարութիւնից, կարիքից, պահանջից և, տրամաբանորէն, դրանով եզրակացնում էր, որ անտե- սական կառավարութիւնը չպիտի պատկանի բանւոր- ներին, ո՛չ էլ արտադրողներին, այլ, ընդհակառակը, սպասողներին՝ սնդելով, որ գոյութիւն ունի բանւոր դասակարգի շահերին զերբանցող ու զերիշող հա- սարակական մի շահ՝ որը կարգակերպւած սպասող- ները աւելի լաւ են ներկայացնում, քան պետութիւնը:

Այս շարժման կրկնած յատկանիւններն են, ուրմն, այն, որ նա հաստատում է՝ համազործակցութեան իմբնավարութիւնը, որպէս յատուկ ծրագիր, և պա- հանջում է՝ տնտեսական կառավարութեան փոխանցու- մը արտադրողների ձեռքից սպասողների ձեռքը:

1895. — Համազործակցական շէնքի վրա մի երրորդ յարկ է աւելանում: Տեսաքց արդէն, որ 1863ին տեղային ընկերակարութիւններն իրացան ազգային դաշ- նակցութիւնների մէջ: Այժմ առ այս Ազգային Դաշ- նակցութիւններն են, որ իրենց հերթին միանում են մէկ Միջազգային Համազործակցական Միութեան մէջ (Alliance Cooperative Internationale): ձիւն է, սա մինչև այժմ, դեռ, ինչպէս իր անունն էլ է ցոյց տալիս, լոկ բարոյական բնաւորութիւն ունի, բայց իր սաղմնային վիճակով պարփակում է գնում- ների մի միջազգային դաշնակցութիւն, մեծաքանակի մի զերպառ խանութ, որի մի քանի մասնակի իրա- կանացումները արդէն տեսնում ենք:

Միջազգային այս համազործակցականը, որ իր ծննդեան օրերին միայն Անգլիան, Ֆրանսան և Իտա- լիան էր ընդգրկում, այսօր իր մէջ հաշւում է երեսուն չորս պետութիւններ, այնքան, որքան Ազգերի Դաշ- նակցութիւնը, որի աւագ քոյրն է նա: Որպիտ՝ հրա- շալի երևոյթ է համազործակցութեան կլիմայայար- մարացման ընդունակութիւնը: Անկասկած, բոլոր

\*) 1927 թ-ի մայիս 26-ին համաձայն Բաղադաւա տեղի ունեցաւ համազործակցութեան 14-րդ համագու- մարը, ուր տունեց Նիմեան դպրոցի հիմնադիր Շարլ Թիլիի 80 ամեակը: Նախագահում էր յոբելիարը: Ա.

երկրները նրա համար հաւասար նպատակներ զետեղել են ներկայացնում: Ինչպէս եւ նկատել եմ շատ յաճախ, այս հազարաւոր բոլոր ծաղիկում ու պտուղում է տալիս աւելի հիւսիսային երկրների փողովորդների մօտ, քան հարաւացիների, դարձարանների ծիւղի միջահամ զորը ու տխուր երկնակամարների տակ, քան կապոյտ երկնակամարի: Իսլանդիայի և մինչև իսկ Ալեասկայի սառցապատ երկրներում աւելի շատ համագործակցականներ կան, քան Միջերկրականի ափերին կամ Անտիլան լուսատառ կղզիներում: Սակայն, ոչ մի ընկերային շարժում չի քարոզել այնպիսի արագութեամբ, ինչպէս Համագործակցութիւնը: Եթէ որեւէ մարմին կենսունակութիւնը չպիտու է նրա բարձրամակարան կարողութեամբ, այսպէս համագործակցութիւնն այս տեսակէտից պէտք է դասու առաջին շարքում: Քանի՜-քանի երկրներում բնակութիւն է հաստատել նա, ուր այսօր պարզաւէտ է եօթնագոյն դրօշը: Աշխարհի ի՞նչ աւելի տպաւորէ քարտէջ կարող է դոյութիւն ունենալ քան այն, որի վրա դնադասակող նշանակաւ կը լինի իւրաքանչիւր համագործակցականը:

Եւ նկատեցէ՛ք, որ եթէ արհեստակցական շարժումը եւ աշխարհի շրջանն է անուտ, ապա նա յաճախ հետն է տանում ցեղային առելութիւնները: ամերիկեան և աստորալիական արհեստակցականները չեն ուզում սեւ կամ դեղին աշխատաւորներ և ո՛չ իսկ եւրոպացի ճերմակ աշխատաւորներին: Որքա՛ն աւելի մարդկային է համագործակցութիւնը: Օտարերկրացիների վերաբերմամբ օրէնք չէ պահանջում նա: Եւ մարդկանց համար ազատ անցք է ցանկանում նոյնքան, որքան պահանջում է ապրանքների, դրամադուրիների և քաղաքաբնակի համար: Նա չի ճանաչում ցեղերի և դոյների բաժանում, ու իր ընկերակցութիւններին մէջ բոլոր ընկերները՝ ճերմակ, դեղին, կարմիր թէ սե՛ր բարի են եկել:

1914. — Մեծ պատերազմն է: Համագործակցականներն ի՞նչպէս պիտի կրեն այս փորձութիւնը կրակի փորձութիւնը: Յաղթականօրէ՛ն: Շատ աւելի հաս, քան ընկերային ուրիշ կազմակերպութիւններ, որոնք թուլացան ու ցրեցին: Իսկապէս, համագործակցութիւնն ատում է պատերազմը, և Միջազգային Համագործակցական Միութեան Գլխաւորի համազուտմամբ, 1913-ին, Փրանսացիներն ու զերմանացիները փոխադարձաբար խոստացել էին արգելք լինել պատերազմին: Աւա՛ղ, համագործակցութիւնը դեռեւ շատ էր թոյլ արգիլելու համար այդ փլուզումը: Այնուամենայնիւ, նա արեւ հնարաւոր՝ խուսափելու համար եւրոպական համերաշխութեան կապերի վերջնական խզուածից և, պատերազմը վերջնապէս անմիջապէս յետոյ, սկսեց զբաղւել նախկին պատերազմով կողմերի յարաբերութիւնների վերականգնումով:

Պատերազմը նպատեց բոլոր երկրներում համագործակցութեան թելի վարկի և հեղիակութեան մեծապէս բարձրանումն: Մի պահ, երբ չարաշահութիւնը սանձարձակ ու ազատ ընթացքի մէջ էր, համագործակցական ընկերակցութիւնները սպասողների համար յայտնեցին որպէս ապաստարաններ. նրանք այնտեղ, պարագաների ներքո՞ սահմաններում, գտնուէին արդար զին: Ժողովուրդը և կառավարութիւնը շատ կը պարտեն նրան իր մատուցած ծառայութիւն-

ների համար: Այս թելից սկսած ահա համագործակցութեան պարագլուխներին տեսնում ենք ազգային և միջազգային մեծ յանձնարարներ և մինչև իսկ՝ կառավարութիւնների մէջ տեղ բռնելու: Մէկը նրանցից լեհաստանում դարձել է հանրապետութեան նախագահ. մէկ ուրիշը դարձել է Աշխատանքի Միջազգային Իրասնեակի վարիչ՝ Ժնևում: Ճիշդանտիայում ներկայ նախարարական կազմի զբեթէ բոլոր անդամները համագործակցականների վարիչներ են: Մէկը խօսքով, կարելի է ասել, որ պատերազմից ի վեր համագործակցութիւնը պաշտօնապէս ճանաչել է որպէս հանրային խոշոր սպասարկութիւններից մէկը:

1920. — Համագործակցութիւնը երկու երկրներում, ուր հասել էր բարգաւաճման բարձր աստիճանի, ենթարկւում է սարսափելի յարձակման: Ռուսաստանում՝ բոլշևիկովի կողմից, որովհետև համագործակցութիւնը երևում էր շատ բուրժուական, Իտալիայում՝ Ֆաշիզմի, որովհետև համագործակցութիւնը սքան էլ լիւում էր շատ ընկերակցական: Առաջինը ուժով հազցրեց նրան կարմիր դիտարկ, երկրորդը՝ սեւ շապիկ: Սակայն, Ռուսաստանում համագործակցութիւնն այդ փորձանքից դուրս է գալիս կենսունակ և շատ մեծցած, որովհետև խորհրդային կառավարութիւնը նրան կլանելու, պետականացնելու փորձից ամբողջ ազգաբնակչութեանը նրա մէջ մտնել ստիպելուց յետոյ վերջ տեց այդ քաղաքականութեան, 1924 թիւն, համագործակցութեան վերադարձնելով ազատ միութեան ընդթիւն ու ինքնավարութիւնը: Այսուհետև այլ ևս պետութիւնը չէր պիտի կլանի համագործակցութեան, այլ սա է, որ ամէն կողմից պիտի թափանցի պետութեան մէջ: Արդէն նա սկսում է խորհրդային Միութիւնը վերածել համագործակցական հանրապետութեան, մի քան, որ քառասուն տարի առաջ ազգաբարել ենք մենք:

Իտալիայում, դժբախտաբար, այդպէս չէ իրերի դրութիւնը, դէթ այն ժամին, երբ դրում ենք այս պատմութիւնը: Այստեղ պետութիւնն է, որ կրանել և իրեն ծառայ է դարձրել համագործակցութիւնը: 1925 ին արքայական մի չրովարտակով համագործակցականները, ինչպէս նաև արհեստակցականները, վերածեցին պետական պաշտօնաստաների, հասարակական բարձր սպասարկութիւնների. և մենք չպիտի զանդատուէինք, եթէ այդ պատիւը արած չլինէր նրան իր անկախութեան զեղով: Սակայն, վերջին խօսքը դեռեւս սուած չէ, և կարող է պատահել, ինչպէս այդ եղաւ Ռուսաստանում, համագործակցութիւնը կը վերագտնի իր ինքնավարութիւնը: Միջազգային Համագործակցական Միութիւնն իր բոլոր ճեղքերը դործ է դնում նրան ազատազերլու համար:

Ահա՛ համառօտ պատմութիւնը: Վախենամ, որ դուք չգտաք շատ յուզիչ, որովհետև այս պատմութիւնն այնքան թատերական չէ, որքան ընկերային ուրիշ մեծ շարժումների պատմութիւնը: Համագործակցութիւնը շատ պատկերալից չէ՛:

Ուրիշ կը լինէր բանը, եթէ ևս ընկերակցական պատմութիւնն անէլ: Սա մեզ կը պատեցնէր կախարհական քաղաքներում—փոյթ չէ թէ չիրականացած — ուտոպիստների, իկարների, արեւ-քաղաքների, նորհարմոսիանների, Փարանտներին. գարդարած կը լինէր անուճանբովը նրանց, որոնք հանգչում են ընկեր-

վարական պանթէօնում՝ Օվկն, Մէն Սիմոն, Յուրէի, Կրուզոն, Կարլ Մարքս և Լենին: Նա կողակողչը յիշատակը հարիւրաւոր յիշողութիւններ, որոնք պայթել են կարմիր դրօշի տակ և որոնցից վերջինը ոտքի է հանել 130 միլիոն մարդ և ցնցել է Արևմտեան միջերկրագոյնը: Այո՛, ահա՛ մի յուզումնալից պատմութիւն:

Արհեստակցական շարժման պատմութիւնը նոյնպէս կը լինէր աւելի ցնցող: Իր ցլաւաւոր մանկութիւնը, պայքարները աշխատավարձի ջնջման համար, իր աւելի ու աւելի ահապահեցիկ դարձող գործադուլները՝ ընդհանուր գործադուլի սպասումով, որը շարժման մէջ պիտի դնէ բովանդակ բանուր դասակարգը և որի մէջ ժողով Սօբոլը տեսնում էր մի դիցերբութիւն, այնքան մեծ տարողութեամբ, որքան Երկրորդ Գալլոստան հաղորմական առաջին դարերի քրիստոնեաների համար: Այո՛, սա ևս մի վիպերգական պատմութիւն է:

Փոխադարձ օգնութիւնն ևս մի դիպեցիկ պատմութիւն ունի: Քրիստոնէական դիմութեան դուստրը աշխարհիկ՝ նա ևս տարել է մի փառաւոր պայքար ո՛չ թէ զբամատէրներ և գործատէրներ դէմ, այլ՝ դեւերի, բնական բոլոր ճակատադրականութիւններ, որոնք սպառնում են մարդկանց կենսքին կամ անողջութեանը՝ հիւանդութիւն, անդամալուծութիւն, ծերութիւն ու մահ: Նա հովանաւորել է մանկան և իր մօրը:

Բայց համագործակցութիւնը և, յատկապէս, սպառողական համագործակցութիւնը չունի սրանցից և ո՛չ մէկը: Նա բնաւ զարդարանք չունի: Իր ամենօրեայ կենսքի գործերի ընթացքում նա ընդհանրապէս կրում է նպարտավաճառի աշխարհի դոգմը և կամ տանտիկնոջ դատարկը: Իր սպրանքը մի նպարտավաճառանց է՝ իր սկրիբաւորութեան օրերին, մի լուկա՛՛՛ երբ արդէն մեծացել է: Իր պատմութեան մէջ պայքարներ ունի վարելիք՝ լինի արտաքին թշնամիների դէմ — վաճառորդների, հովանաւորողների, թրքատների, կեղծ համագործակցականների, երբեմն՝ պետական հարկի, յաճախ, նոյնպէս՝ իր սեփական անդամների, որոնք

կամ շաբից աւելի թմրած են, կամ շափազանց խանդավառ, յաճախ, նաև իր սեփական ծառայողների դէմ: Բայց արանք մանր վէճեր են, որոնք չեն էլ յուզում հասարակութիւնը և որ ես նոյնիակ չյիշատակեցի էլ այս թուուցիկ պատմութեան ընթացքում:

Բայց որ համագործակցութեան պատմութիւնը սփռոյն է, անլուրդ և անազմուկ, արդե՛օք այդ մի նշան է նսեմութեան և պէ՛տք է, որ մենք մեկ նւաստացած զգանք: Դուք զիտէք յաճախ կրկնած այս խօսքը — «Երջանիկ ժողովուրդները պատմութիւն չունեն», ու զիտէք զուցէ նոյնպէս ֆրանսիական մի այլ նւաստացած. «Լաւ բանն ազմուկ չի անում, ազմուկը լաւ բան չի անում»: Այդպէս է նաև համագործակցութիւնը. նա ստեղծւած է ընտանիքի. և ո՛չ թատրոնի համար: Նա բաւականանում է մարդկանց օրւայ ցնցը մատակարարելով, աշխինք՝ աւելի դէւերին կենսք, աւելի լաւ ապահովւած ապագայ, ու իր կողովի մէջ դնում է նոյնպէս ծաղիկներ և պտուղներ, աշխինք՝ զարմալիքներ, ժողովներ, տոնակատարութիւններ — այն բոլոր փոքրիկ արարութիւնները, որոնք կազմում են կրկնականութիւնը:

Ահա այն, ինչ արել է համագործակցութիւնը միջնա-չև իր պատմութեան առաջին դարի վերջը: Ահ 2027 թ.ին, երբ նա կը սօսի իր երկրորդ հարիւրամեակը, եթէ մի զասախօս նորէն անի այս պատմութիւնը, ի՛նչ պիտի կարողանայ ցոյց տալ: Համագործակցութիւնն ընդգրկած ողջ մարդկութիւնը: Եւրոպայի դարձած ոչ միայն ազգերի մէկ զանակցութիւն, այլ և համագործակցական մի ճշմարիտ ընկերակցութիւն: Ազգային և միջազգային առևտուրը փոխարինւած առանց դրամի և առանց շահի փոխանակութեամբ: Վարձու աշխատանքը վերացած բանուրական միութիւնների միջոցով... Զգիտե՛ք: Բայց վստահ եմ, որ նա, առնական, մարդկանց աւելի արնայարած կը լինի:

Թարգմանեց՝ ԱՆԳՐԷ՛

# Ա Ն Ա Ի Ո Ր Գ Ի Շ Ե Ր Ը

Բ. Իշխանեան

Փետրւար 18-ի տարեշարժին առփիւ, առանց խորհրդածութեան կարտասպանիկ հետեւեալ հաստաձը, հանգուցեալ Բաշլի իշխանեանի գրէն: «Երկու ամիս բաշլիկեան բանտում» (էջ 154—167):

Ընթերցողները գիտեն անշուշտ, որ իշխանեան մէկն էր Հայաստանի Սոցիալ Գեմնոլլրատ կուսակցութեան վարիչներէն, և հակադաշնակցական:

Խմբ.

Փետրւարի 16-ն էր, երկուշաբթի ժամը ութից անց: Բանտարկեալները ընդհանուր ստուգումը, — այդ երկուց բաւական ուշ տեղի ունեցած, — կել, վերջացել էր արդէն: Յանկարծ լուցիկը բանտի տեսչի ձայնը միջանցքում. բանտի կոմիտարի հետ միասին, մի ցուցակ ձեռքին շրջում էր կամերից կամեր և ինչ որ

անուներ կարում: Մտակցու նաև մեր կամերին և դրան ջառակուածակ բացուածքից կարողաց երեքին անուները: Մենք, օգուտելով հանդամանքից, դիմեցինք տեսչին և հարցրինք ճաշ չընդունելու պատճառների մասին: Նա սասց մեկ հետեւեալ.

— Գիտէք, որովհետև մինչև այժմ զբոսից ճաշ ստանալու գործը կող է անկողմակերպ և յաճախ զբոսից հաղորդել են բանտարկեալներին ստոմարով նաև զաղաքական բովանդակութեան ունեցող տեղակութիւններ, ուստի որոշել ենք ժամանակաւորապէս, մինչև ամիս 20ը կամ 21ը զաղաքայնել ճաշի ընդունելութիւնը և աւելի լաւ հիմքերի վրա կազմափերայել այն:

Որքան խօսք կար բանախ տեսչի պատճենների մէջ, այնքան էլ սուտ կար, ինչպէս յետագայ դէպքերը ցոյց տուին: Դա միայն յերիւրած մի բացատրութիւն

էր՝ դրանով անհանդիստ բանտարկեալներէ հարցելին այս կամ այն բաւարարութիւնը տալու համար:

Ինչպէս պատահեալ հրամայել էր հակիչներն կողպած պահել բոլոր կամերներէ դռները այդ ամբողջ գիշեր և անդամ բանտարկեալներէ բնական կարիքներէ համար բաց չանել դռները:

Ժամը դեռ տաք չկար. պահանջում էինք հակիչից բաց անել դուռը ըստ սովորականին բնական կարիքների վայրը գնալու համար: Նա պատասխանում էր, որ բանտայինները տարեւէ է բանտասպետը, բաց անելու հնարաւորութիւն չունի: Երեւակայում եմ դրութիւնը ընդհանուր կամերներում բազմամարդ խմբերով տեղաւորւած բանտարկեալներին:

Բայց ի՞նչ անհասկանալի առեղծւած էր այդ, ոչ ոք ոչինչ չգիտէր. ինչ որ մի բան էր սպասում: Մենք երեքս էլ թար կտրած նստած էինք. թուն չէր գալիս մեր աչքերին: Յաճախ մտորելի էին դալիս բանտի դրասնեակից, ոտքերի ծայրերով շրջում էին միջանցքներով և հակիչներին ինչ որ խորհրդաւոր կարգադրութիւններ անելով կրկին հեռանում էին: Հակիչը մտռոնում էր ամէն մի կամերի և անսովոր ձայնով ու տոնով յայտնում էր, որ բոլորը պտտկեն ու քնեն:

Մենք պտտկեցինք. բայց ո՞վ էր ջնորը: Վատագոյժ նախադասուցում պահարկել էր մեզ և ոչ մի հանգստութիւն չէր տալիս: Իրոյր արտասովոր նշաններն ու պատրաստութիւնները ունեն իրենց իմաստը և լաւ բան չեն ասում, — մտածում էինք մենք:

Ժամը մօտ 11-ը կը լինէր: Յանկարծ լսում ենք նախկին աւագ հակիչ, այժմ բանտասպետի նոր օգնական նշանակւած Գարբիէլի ձայնը, դագանի մէկը, որ ստանձնել էր Գարբիէլի հրեշտակի հոգեհան դերը: Նա և բանտի կոմիտարը մտռոնում են թիւ 13 կամերին, — մեր կամերից յետոյ 3-րդը, — և կամացուկ ձայնով կանչում են քնած բանտարկեալներէջ հակիչն:

— Վեր կաց, հանգիւր և իրեւր վերջուր եկ դրասնեակի, պէտք է դնաս «Ձեկա», — ասաց Գարբիէլը: Ի՞նչ է պատասխանում բանտարկեալը, չգիտեմ, բայց Գարբիէլի հետեակ խօսքերից երևում էր, որ նա հրատարակում էր գիշերը «Ձեկա» գնալ:

— Ի՞նչ նշանակութիւն ունի ցերեկն և, թէ գիշերը: Ձէ՞ որ «Ձեկան» պործում է անդադար՝ ցերեկ թէ գիշեր, շուտ վե՛ր կաց, ընդ սպասում են:

Բանտարկեալը հետևում է իր դահճին և դուրս է գնում:

Բանտի դիւանատունը կամ կանցիլարիան, բաղկայած մի քանի դրասնեակներից, գտնուած էր բանտի բակում, բանտի դռանը շատ մօտ, ստորին հարկում: Բանտի դէպի բակը նայող կորպուսները՝ վերին և ստորին յարկերում, ունէին մի շարք կամերներ, որոնց պատահանները դուրս էին նայում ուղղակի դէպի բանտի դուռը, բակը և բանտի դիւանատան սենեակները: Այդ կամերներում սեղանաւոր բանտարկեալները կատարեալ հնարաւորութիւն ունէին և՛ լսելու և՛ դիտելու այն բոլորը, ինչ կատարւում էր բանտի բակում, դիւանատանը և բանտի մուտքի մօտ:

Ստորին յարկում գտնուող մեր կորպուսը և մեր կամերները, ընդհակառակը, գտնուած էին միւս ծայրում, միւս բակի վրայ:

Թէ ինչ էր կատարւում փետրւար 16-ի լոյս 17-ի

դիւնը, մենք փաստօրէն ոչինչ չգիտէինք: Կտտ էինք միայն զարհուրելի աղմուկ, դռուս, դռուս, օգնութիւն խնդրող ալղողողած ձայներ, անդադար և որոտացող ուժեղ հրացանահարկութիւն, բայց նաև ուրբաներ ու կեցցէներ:

Մենք ուղղակի տանջուած էինք անորոշութեան մէջ. ի՞նչ էր կատարւում, ի՞նչ ալմուկ էր, ո՞ւմ էին խլուր, ո՞ր կողմից էին օգնութիւն խնդրում և ո՞վքեր էին ուրբա ու կեցցէ ասողները — ոչինչ չգիտէինք: Գիտէինք միայն, որ բանտի մէջ կամ շուրջը տեղի էր ունենում մի ծանր դէպք, մի խոշոր անցք:

Յետոյ միայն, յաջորդ օրը, իմանում ենք, որ այդ գիշեր տեղի է ունեցել ամենաքստանելի ոճիրներից, ամենալայրաջ դագանուկութիւններից մէկը, որին էր բեկից կարող է ընդունակ լինել մի պետական իշխանութիւն: Ով գիտէ, Երևանի բանտում կատարւածը որ հագարերորդ անորակելի ոճիրն էր բուլճերիկան ըժժիմի անիւծած զոյւթեան ընթացքում:

Ինչո՞ւմ էր բանը:

«Ձեկան» որոշել էր այդ գիշեր գնդակահարելու 21 հոգու: Բանտային վարչութիւնը՝ տեսուչը, կոմիտարը, բանտասպետը և օգնականները մէկ մէկ հաւաքում են այդ 21 բանտարկեալներին զանազան կամերներից և նրանց ժողովում բանտի դիւանատան կից մի ազատ սենեակում: Սպասում էին, որ «Ձեկայի» օտոմօրիլը դայ ու նրանց տանէ գնդակահարութեան վայրը: Հաւաքւած բանտարկեալները հասկանում են իրենց զլխին դալիք աղէտը: Նրանց մէջ գտնուող երեք բուլճերիկները (դրանցից մէկը տխրահաշիկ Լևոն Ենդերարեանը), բռնած զանազան յանցանքների համար, հասկացնում են միւսներին, որ իրենք գիտեն բուլճերիկների մօտ ընդունւած սովորութիւնը և որ այդ ուշ ժամին իրենց տանում են միայն գնդակահարելու համար, ուստի բոլորն էլ որոշում են սենեակի դուռը ներսից կողպել և հրատարակել դուրս դալուց: Բանտի տեսչէ ու բանտասպետի բոլոր դիմումներն ու սպասնալիքները՝ բաց անել դուռը և դուրս գալ, ապարդիւն են անցնում: Խմբւած բանտարկեալները միայն մի պատասխան են տալիս. «Եթէ ուզում էք մեզ «Ձեկա» տանել հարցաքննելու, տարէք ցերեկը և ոչ կէս գիշերին. դուք մեզ խաբում էք, դուք տանում էք մեզ սպանելու, գնդակահարելու, շեք ուզում դուրս գալ»: Անգամ պարոնայք Աւիտի, Սուլէյման Նուրիի և Ամիրխանեանի, — որոնք հարկ էին դաջացել բառնելի ոճիրին ներկայ լինելու՝ երեկ իրենց «յեղափոխական» պարտականութիւնը աւելի բարեխղճօրէն կատարած լինելու համար, — խօսքերն ու դիմումները անհետևանք են անցնում:

Դահճիները որոշում են իրենց դագանային եղևոնազործութիւնը կատարել տեղի ու տեղը, բանտի բակում, ի տես և ի զարհուրանք արգէն արթնացած հարիւրաւոր բանտարկեալների:

Եւ սկսում է աննկարագրելի ոճիրը. սկսում են իրար յարբուրող պահակի դիւնդոների անընդհատ համադարկները բակից՝ սենեակի պատահանների դէմ ուղղւած:

Բայց թողնենք, որ պատմէ իրողութիւնը ինքը ականատեսը՝ յիշեալ սենեակի դէմ առ դէմ գտնուող կամերում նստած բանտարկեալներից մէկը, որ իր ընկերների հետ միասին լսել ու տեսել է այդ գիշերուայ

սարսափելի անցքերը և ապրել ու տանջւել է մահա-  
պարտներին նման\*) :

«Ժամը 5-ից բանտապետը, բանտի վերատեսուչն  
ու կոմիսարը կարգադրութիւններ էին անում :

Յաճախ լուում էր բանտի երկաթէ դռների անոնիկ  
գրնոցը: Ինչ որ մարդիկ բանտ էին մտնում և ելնում:

Չարագուշակ բան էր պատուում: Այդ դիտակցու-  
թիւնը աւելի ուրացաւ, երբ հայ պահակներին փոխա-  
րինեցին թուրք «բուլչիկներ» և ուսու կարմիր գինուր-  
ներ: Պահակներին պատուութեան աշուարջ լինել, իսկ  
հակներին հրամայեց շրացել կամերաների դռները:

Սարսափը պատել էր ամենքիս: Բուլչիկ բանտար-  
կեանքի պահուստը պատուութիւնները պատկերա-  
նում էին ամենքիս. «էէս գիշերին, — ասում էին  
Կրանք, — գալիս է օտոօրբլը և մէկկիւմ-մէկկիւմ հանում  
են բանտարկեանքին կամերաներից, տանում են քա-  
ղաքի դուրս՝ հրացանազարկ անում», անյայտացնում:  
Ոչ ոք չէ իմանում՝ ո՞վ տարաւ և ուր...»:

Մենք կծկւած մեր կամերայում, լսողութիւն  
կորած, չնուսում էինք բանտի անսովոր անցուղարձին:

Ժամը ութ և կէսին մէկ էլ բացեց մեր կամերայի  
դուռը և ներս մտան՝ բանտի վերատեսուչը, կոմիսար-  
ը, բանտապետը և հակիչը մտն անէրին: Բանտապետը  
ձեռին բռնած մի ընդարձակ ցուցակ՝ սկսեց կարդալ:

- Կորգանով Նիկոլայ, այտու՞ղ է:
- Այտուղ չէ, — պատասխանեց բանտարկեանքերից  
մէկը:

- Ենգիբարեան Լևոն:
- Ներքեի յարկումն է, — ձայն աւեց մի ուրիշը:
- Բօզգանով Նիկոլայ:
- Ես եմ:
- Վերցրէք ձեր իրերը և հետևեցէք:

Եւ այսպէս կարգացեց քսան և մէկ բանտարկեալի  
աղօք և անունը:

— Տղերք, բանտապետի գազանացած դէմքը լաւ  
բան չի ասում: — նկատեց բանտարկեանքերից մէկը, —  
փո՛ւ, ինչ արինճարու և դէշատիչ արտայայտութիւն  
ունէր. կեանքիս մէջ չեմ մտանայ այդ սոսկալի  
պատկերը:

- Օտօօրբլ է, — սարսափած համարեա միարե-  
բան ձայն աւինք բանտարկեանքերս:
- Դէպի բերդն է գալիս:
- Կանգնեց բանտի դռան ծօտ:
- Կեցցէ՛, կեցցէ՛... օտօօրբլի կանգնելն ու  
աղաղակներով օդ թնդացնելը մէկ եղաւ\*\*):

Ի՞նչ անեցի՞ւմ է սա. ի՞նչ է նշանակում, — բա-  
ցազանչեցին մի քանի բանտարկեալ միաժամանակ:

\*) Կեցցէ գոչողները բանտի վարչութեան անդամ-  
ները և ծառայողներն են եղել:

\*\*) Բարեբախտաբար ես ի վիճակի եմ մէջ բերելու  
այտուղ ակամատես բանտարկեանքերի մէկի՝ Ա. Պետր-  
ոսեանի հարազատ ու ճշգրիտ նկարագրութիւնը  
փետր. 16-ի գիշերը տեղի ունեցած եղեռնալից անցքե-  
րի, որ լռյս տեսաւ «կարմիր Գիշերներ» վերնագրով  
«Ազատ Հայաստան»ի թիւ 8-ի մէջ: Եւ կը բերեմ այս-  
տեղ նրա նկարագրութիւնից ամենարժուոյշ կետերը:

Բ. Ի.

— Ջողը, տղերք. ոչ մի ձայն. պրովոկացիա է  
սա. ուղում են կոտորածի առիթ ստեղծել, — խօսեց  
սովետական բանտերի կարգերին ծանօթ մէկը:

Նորից լսեց երկաթէ դռների շառաչը. ապա բան-  
տի դաւթում լսելի եղաւ մարդկանց ոտքերի ուժեղ  
տրոփիւն: Մեկնեց երկու հոգի բարձրացած թախտերի  
վրա, դիտելու պատուհաններից զբոսում տեղի ունեցող  
չարժումը: Մեր կամերայի երկու պատուհաններն էլ  
նայում էին ուղիղ գաւթիթ, որտեղից երևում էր հի-  
ւանդանոցի շէնքը, ուր տեղադրուած էին կին բանտար-  
կեանքերը, միջին կորպուսի ձախ կամերաների պատու-  
հանները, դարպասից ներս ու դուրս անողներն և այլն:  
Իսկ դրսի խօսակցութիւնները աւելի որոշ լսելու հա-  
մար պատուեցինք պատուհանների թղթով ծածկած  
աչքերը:

— Տղերք, գտեցէք ձեր հազը, որ կարողանանք  
լսել խօսակցութիւնը, — շնչալով խօսեց պատուհանից  
դիտողը:

— Եկողները քսանից աւելի գինւած գինուրներ  
են, — շարունակեց դիտողը, — եկան շարեցին հի-  
ւանդանոցի առաջ, հայիր են. մի խումբ էլ գալիս է  
դէպի մեր կորպուսը: Կանգնեցին, յետ դարձան նորից  
իրենց տեղը. գրասենյակի առաջ աղմուկ իրաբանա-  
ցում է... Սա... կախանաւորների առաջարկում են  
դուրս գալ բանտից... նրանք մերժում են...:

— Առաջարկում եմ անմիջապէս դուրս գալ, թէ չէ  
բոլորիդ տեղն ու տեղը կը գնդակահարեմ, սրիկաներ—  
խապտո ձայնով սկսեց զորգոռալ բանտապետը —  
կարա՛ւ, պատրաստեցէք:

— Ինչո՞ւ. գիշերն էք տանում. եթէ հարցաքննելու  
էք տանում, տարէք առաւօտեան. այժմ մենք չենք  
դալ, — բարձր ձայնով խօսել սկսան բանտարկեանքերը:  
— Կարա՛ւ, եղէք պատրաստ, — նորից դուռաց  
բանտապետը:

— Օգնութի՛ւն, ընկերներ, մեզ տանում են կոտո-  
րելու. օգնութի՛ւն... — մէկ էլ լսելի եղան բանտար-  
կեանքերի խմբական աղաղակներն ու ճեղքերը:

- Դրսից աղմուկ, իրարանցում:
- Կրա՛կ... կանչեց բանտապետը:
- Բո՛ւՖ, բո՛ւՖ, բո՛ւՖ... լսեցին համազարկեր:
- Օղում են կրակում, վարեցնելու համար է, —  
սասց պատուհանից դիտողը:

Լսելի եղան բանտի դռների զրընգոցը և օտօօրբլի  
զրրոցը: «Բանտից մարդիկ դուրս եկան, օտօօրբլը  
հետանում է», նորից խօսեց պատուհանից դիտողը:

- Կարա՛ւ, կրակ, — դուռաց բանտապետը:
- Բո՛ւՖ, բո՛ւՖ, բո՛ւՖ...
- Ջրեղընգալէն թափուցին ժողոված բանտար-  
կեանքերի սենեակի պատուհանների ապակիները:

— Ծներ, չէք վախեցնիլ ձեր բռնութիւններով.  
գիշերն էք գալիս անդին մարդկանց կոտորելու. — մէկ  
էլ յստակ ու դիւ ձայնով խօսել սկսեց պատուհանից  
խմբած բանտարկեանքերից մէկը, — չեմ վախեցում,  
հրացանազարկ արէք անդգամներ:

- Գալէ՛ր, սրիկա՛յ, թէ չէ տեղն ու տեղը կը  
սատկացնեմ, դուռաց բանտապետը:
- Ձեա վախեցնի, գարկի՛ր, լուս, մեր արեան  
փոխարէն չուտով ձեր կեանքի գնով կը պատասխանէք:
- Կարա՛ւ, կրակ, դուռաց բանտապետը:



Այս անգամ դիւտորները համազարկ չուին, այլ կրակեցին միայն մի երկու դիւտոր:

— Զինուորների շարքերում խլրտում է նկատուում, խօսեց դիտորը, այս ու ալս կողմն են քաշել և խումբ-խումբ փափսում են. երևում է, հրատարուում են բանտարկեալներին զնդակահարելուց:

Նորից հեւուում լաւեց օտօօօրիլի խուլ ձայն:

— Նորից օտօօօրիլ, անիծեաւ...

— Դէպի բանտն է դալիս,—ասաց դիտորը,—կանդնեց դռան մօտ, բանտի դռները բացեցին. մարդիկ մտան ներս և դէպի դրասնեակը դնացին: Նայեցէք ո՛ր ժամն է, — և հարցրեց նոյն դիտորը:

Լուցիկին վառեցինք, բժիշկը նայեց ժամացոյցին, — ատասներկուսից քառորդ անց», — ասաց նա:

Դուրսը նորից լուռութիւն տիրեց. լաւում էր անց ու դարձ անող պահակի ոտքի տակի ձիւնի ճթճթօցը, մէկն էլ լապտերը ձեռքին մի քանի պտոյտ արակնետրոնական շէնքի առաջ ու անյայտացաւ:

Նորից բացեցին բանտի դռները, նոր դիւտորներ մտան բանտ:

— Պահակները փոխուում են,—ասաց դիտորը, — մի քանի դիւտորներ մեր կորպուսը եկան:

— Ո՛վ է, ձայն տւեց միջնացում գրօնոդ պահակը:

— Պահակապետը:

— Ամէն ինչ կարգին է — զեկուցեց պահակը:

— Ազատ ես, նոր պահակ է նշանակուում, — ասաց պահակապետը և հրահանգեց նոր պահակին՝ դգաստ լինել, չքեց:

Ոչ ոք մեզնից զեւ չէր քնել, ոմանք կծկած խոնաւ գետնին, ոմանք պառկած թախտերի վրա, ծպտուն կտրած, զնդակահարողների հետ հաւասարապէս տանջուում էին և նրանց հետ միաժամանակ ապրում մահան երկիւղը:

Հեւուում նորից լսելի եղան խօսակցութեան խուլ ձայնը: Նորից համոզում էին բանտարկեալներին չընդմեմանալ և յանձնուել:

— Առաւօտեան տարէք. դատեցէք, ապա զնդակահարեցէք, չէ՞ որ յայտնել էք, որ առանց դատի ոչ ոքի չէք պատժելու. ինչո՞ւ չէք պահում ձեր խօսքը, — բարձրածայն բողոքում էին բանտարկեալները:

— Ընկեր Աւիս, չէ՞ որ ես եւս կոմունիստ եմ և կուսակցութեան շարքերում երկու տարուց աւելի աշխատում եմ...

— Յս... Բողոքանովի ձայնն է, Աւիսի հետ է խօսում, ասաց պատուհանից դիտորը:

— Աղաչում եմ, ընկեր Աւիս, շարունակեց Բօգդանովը, նախ գործս քննեցէք, եթէ մեղաւոր լինեմ, նոր զնդակահարէք:

Ընկեր Նուրի, ընկեր Ամիրխանեան, միջնորդեցէք ինձ ապառկ մինչև գործիս քննութիւնը...

Այժմ մէկ ուրիշն է խօսում. նա եւս բողոքում է, որ առանց քննութեան տանում են զնդակահարելու. «կոտորեցէք սենեակի մէջ, չենք դուրս դալ գիշերը», — ասաց վերջին բողոքողը:

— Լապտերը նորից երևաց, — ասաց դիտորը, — նորից կարգադրութիւններ են անում. դիւտորները շարուում են. հրաման տրեց կրակի բռնել բանտարկեալներին:

— Բո՛ւՖ, բո՛ւՖ, բո՛ւՖ... լաւեց համազարկի ձայնը:

— Օգնութի՛ւն, սպանեցի՛ր... արիւններ, վա՛յ... օգնութիւն ընկերներ... օՖ, օՖ...

— «Ի էտօ բուդետ նաչ պօսեդնիյ ի բէշտեընիյ բոյ»...» —մէկ էլ սկսեցին երգել բանտարկեալները:

Աղաղակը, հտառչանքը, երգը, վայոցն ու հրացանների ձայնը իրար խառնեցին:

— Ծներ, արիւններ, գիշերային աւագակներ, արիւնարբու դագաններ, կոտորեցէք, չենք վախենում, — նորից լսելի եղաւ սառչին անգամ խօսող բանտարկեալի յտակ ու հնչուն ձայնը, — մեր արեան համար պատասխանատու էք...

Հրացանների զարկերը շարունակուում էին, դիւտորները երկու մասի բաժանուած, մի խումբը կրակում էր մեր կողմից, իսկ միւսը անցել էր կենտրոնական կորպուսի հակառակ կողմը և կրակում էր այնտեղից:

Երկու կողմից էլ շարունակուում էին կատաղի համազարկերը. բանտարկեալները լուել էին, երբեմն լաւում էր «վա՛յ» կամ «օ՛Ֆ» հտառչանքը: Աղմուկների և հրացանների զարկերի մէջ լսելի եղաւ հեւացող օտօօօրիլի սուրցը:

— Մօտեցէք սենեակին, բարձրացէք սեղանների վրա, կրակեցէք պատուհաններից, յատակի վրա, պատերի տակ են պառկած, կրակեցէ՛ք... — կարգադրութիւններ էր անում ինչ որ երիտասարդը:

Բանտարկեալի ձայնը շատ դուստրուց կտրուել էր, բառերի փոխարէն լաւում էր ինչ որ խզոցը:

— Զինուորները հրատարուում են բարձրանալ սեղանների վրա, —խօսեց նորից պատուհանից դիտորը, — հրատարուում են նաև կրակելուց, բողոքում են, ասում են՝ երկու ժամը վաղուց անցել է, կանչեցէք ուրիշներին, մենք յոյճել ենք, չենք կարող...

Պահ մի դադարեց զրացանաձուլութիւնը: Լաւում են ինչ որ դռան խուլ հարւածներ, երևում է փորձում են կտրել բանտարկեալների դուռը:

— Սրիկանե՛ր, շնե՛ր, գազաններ՛ը չէք կարող... — նորից լաւեց հնչուն ու յտակ ձայնը:

— Բո՛ւՖ, բո՛ւՖ... նորից լաւեց հակառակ կողմից համազարկի ձայնը:

— Օ՛Ֆ, վա՛յ, վա՛յ...

Նորից լուռութիւն: Ժամը չորսից անց էր, երբ նորից բանտին մօտեցաւ օտօօօրիլը: Բանտի դռները նորից գրնդալէն յետ գնացին:

— Նոր դիւտորներ են բերել, ուսմներ են. նրանց թիւը աւելի է, հայ դիւտորները հեռանում են, — ասաց դիտորը:

\*) Գա ուսակամ յայտնի յեղափոխական երգ է, որ նշանակում է հայերէմ քարգմանութեամբ. «եւ այս կը լինի մեր վերջին և վնասկան կուրսը»:

— Այս անգամ փրկութիւն չկայ, շեն խնայիլ, — շենջացին մեր կամերայի բանտարկեալներէն մի քանիսը:

Նորից հրաման արձակեց կրակ բաց անել զէպի բանտարկեալները. այս անգամ հրաման արձակողը ուս էր:

— Արազ, բարձրացէ՛ք սեղանների վրա, զարկեցէ՛ք յատակին և պտտերի տակ, նոյնը նաև դռան կողմից. պատրաստեցէ՛ք մէկ, երկու, երեք:

Ի՛ն՝ՎՖ, բո՛ւՖ, բո՛ւՖ...

Այս անգամ արդէն օգնութիւն չէին կանչում բանտարկեալները. միայն լսում էին մէջ ընդ մէջ «վա՛՛յ, օ՛Ֆ, մեռա՛յ»... Հառաչանքները:

Համազարկերը շարունակում էին անընդհատ, անգթօրէն: Այլևս չէր լսում հպարտ բանտարկեալի խորխտ ու յտակ ձայնը. երևում էր նա այլ ևս կենդանի չէր:

«Օ՛Ֆ ու վայր» հնչիւնները վաղուց դադարել էին, բայց դեռ ևս շարունակում էին հրացանների համազարկերը և միաժամանակ լսում էր ուս սպայի խորխտ հրամանը.

— Ժի՛օ ըբեատա, նեչի՛օ ցերեմօնիացա՛ս...\*)

\*) Արազ, տղերք, առանց խնայելու:

Առաւօտեան ժամը 6-ին մօտ էր, երբ վերջնականսպէս դադարեցին հրացանների ձայները և բանտից յաղթական դղրոցով հեռացաւ օտօմօրիլը, տանելով էր հետ ուս գինեղներին:

Այնուհետև նորից երևաց լապտերը, սակայն այս անգամ մնա լուսաւորում էր բանտի դռան և կենտրոնական շէնքի միջև ընկած հասպարակը: Միջին կորպուսից (այն սենեակից, ուր գնդակահարել են բանտարկեալները) ինչ որ բաներ են կրում զէպի դարպասի մուտքի ներքնայարկը: Ներքնայարկի պատուհանից նոյնպէս նշմարում էր աղօտ լոյսի հետք:

Կարճ ժամանակամիջոցից յետոյ այդ լոյսն էլ անյայտացաւ, ամէն ինչ դադարեց բանտում, նորից ամենուրեք լուռութիւն և մեռելային խաղաղութիւն պատեց. կարծէ՛ք ոչ մի սարսափ տեղի. ունեցած չլինէր այդ գիշերը: Եւ երբ լոյսը վաղուց ծագել էր ու ներս ցոլացել մեր կամերայի պատուհաններից, քսան և չորս բանտարկեալներս արթուն, քարացած մեր տեղերը, բռնել էինք մեր աչքերը և անտարբեր, յոյժած ու դժգունած դէմքերով նայում էինք իրար:

Այդ գիշեր, քսան և մէկ գնդակահարուածների հետ, մենք ևս, թէև կենդանի, գնդակահարուած էինք:

Եւ ոչ միայն մենք, այլ ամբողջ բանտը, ութ հարիւր հոգուց աւելի բանտարկեալներ:

# Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Յ Ե Ո Ւ Ր Զ Ը

Օսմ. կայսրութեան հիմերը կրծող որդը, կաշառը, աւելի արդիացած, «հանրապետական» եղանակով կը բամէ զժամապետութեան երակները:

Արդէն իսկ հրապարակի վրա են մէկէ՛ աւելի գայթակղութիւններ: Ամէնէն խոշորը՝ ծովային նախորդ դործավար Իհսան պէյի պարագան: Ըամիթ փաշայի և նոյն ինքն Մ. Քէմալի աչքին լոյսն էր այս «յեղափոխականը» —ինչպէս կը կոչէ ինքզինքը—դործավար և երեսփոխան, բայց երկար զննութիւններէ յետոյ, ձերբակալուեցաւ փետրուար 3-ին, և հիմա զլիսկիւր կը սպասէ բանտին մէջ, պատրաստելով իր պաշտպանադականը՝ Գևրազոյն Ատեանին համար:

Դեռ երէկ, երբ արքայական շուքով մը Պոլիս այցելեց Մ. Քէմալ, քանի մը անգամ Իհսան պէյի ընակարանը այցելելով, էր հիացումը կը յայտնէր անոր... շեղ կահաւորման համար: Իսորին ալ իրար կը ճանչնան. այնպէս որ, ճշագիտէ՛ն չէր կրցած դօպիլ իր դարձանքը, ընկերով մը այսքան փարթամ յառաջդիմութեան համար: Երեկ Մ. Քէմալ շուքից շատ քրքրել, որովհետև ինք ալ, իր կարգին, կը լոգայ հարստութեան և շեղութեան մէջ, որոնց աղբիւրները շատ յառաջ չեն: Քիչերը միայն գիտեն որ, 100,000 ստերլին դրեւած էր շնչկաստանի երկուներուն կողմէ, միլիոն պաշարի յաղթանակի տարուն, խալիֆայութեան պաշտպանութեան համար: Մ. Քէմալ խոստացած էր թրքական զբամասուն մը բանայ այդ զուժարով. բայց ոչ մէկ ձեռնարկ եղաւ, անկէ՛ իվէր, և մարդ չի գիտեր թէ ո՛ւր կը մնայ զբամը:

Եւ յետոյ, ո՛ր մէկը քրքրել: Քանի մը ամիս առաջ, Մոսկուայէն Պերլին և յետոյ Փարիզ կը հանդիպի Գրլլե Ալի պէյ, Այնթապի ջարդարբարը և Անկախութեան դատարաններու գլուխը (տուր): Դեռ երէկ անօթի, այս դազանը մինչև 200,000 Փրանքի պերճանք, ամենաշեղջ առարկաներ, մետաքսեղէններ և ասպրանքներ կը գնէ և կը զրկէ Թուրքիա, ինքն ալ ետեւէն հասնելով:

Ո՛ւրիկ է ուր, առտու մը երևան կըլլէ Իհսան պէյի փարթամութեան գաղտնիքը, անշուշտ իր բամիկն դժգոհ մնացած շահակցի մը մասնանշումով:

Եւ, տարօրինակ գուպարկուրթեամբ մը, Խալազ (նախկին Կեօպէն) պահաւոր կըլլայ ծովային պործավարին դժբախտութեան պատճառը. այն մարտանալը, որ 1914-ին Սև ծովու հռչակաւոր արշաւով, փութացուց պատերազմը՝ Թուրքիոյ դիմում:

Աւելորդ է պատմել պատմութիւնը: Ֆրանսական և գերմանական տուններու հետ բանակցութիւն կը կատարուի, «ճեմալաթի» նորոգութեան համար: Գործը կը սակարկուի 120,000 ոսկիի, սակայն ձգձգելով, առտու մը կասկածելի հոտեր կարուին: Արքայատնութիւն, զննութիւն, հարցապնդում՝ Աղբ. Ժողովին մէջ, — և վերջնական ձերբակալում Իհսան պէյի և ուրիշ քանի մը պէյերու, որոնց մէկը՝ Էնիլիկ աներձաղն է: Ամբաստանութեան կերակր թէ կանոնաւոր աւար մը տեղի ունեցած է, որուն մէջ Իհսան պէյի բամինը կը հաշւեն 20,000 ոսկի: Անշուշտ այս ուրորմէյի շտաբարին համար չէ, որ այնքան ծանր մեղքեր բարգաձ են նախկին պործավարին վրա, զայն Աղբ. Մեծ Ժողովէն հրկով-

հրմուտներով դուրս նետելու աստիճան: Իհասն պէջ կրնար ամենայն համարձակութեամբ պահանջել — ձեր մէջէն անմեղը թող նետէ առաջին քարը: Երեսփոխաններու կրճոտ արտայայտութիւնները շատ բան կապացուցանեն այս տեսակէտն, Պէտք է սպասել Գերագոյն Առևանի դատավարութեան, գործին բոլոր ծալքերը իմանալու համար. պայմանաւ որ ամէն ինչ հրատարակութեան տրուի, և ոչ թէ ինչ որ կատավարութիւնը յարմար կը տեսնէ:

\*\*\*

Ամէն ինչ երևութապէս ազատ է թուրքիոյ մէջ, — մամուլ, ժողով, դաւանանք: Եւ շատեր կը զարմանան թէ մարդիկ ինչու՞ չեն օգտուի որ այդ ազատութիւններէն...

Այս դրուագիւնները կը հասկենան անոնք որ թուրքիա ապրած են: Ահաւաստի վերջին օրինակը: — Պրուսայի ամերիկեան վարժարանին չորս թուրք աշակերտուհիները քրիստոնեայ կը դառնան, «սիրելով այդ կրօնը», ինչպէս յայտարարած են իրենք: Թուրք ուսուցչուհին լուր կուտայ, և իրարանցում, քննութիւն, հետապնդում: Մինչև անգամ ամերիկեան վարժարանը փակելու որոշում:

Բայց չէ՞ որ կրօնը խղճի գործ է և ազատ՝ թրքական սահմանադրութեամբ: Չէ՞ որ քրիստոնեաները ազատ են թրքական, թուրքերու հետ ամուսնանալու, և փոխադարձաբար: Ո՞չ. առաջին ընդունելի է, երկրորդը՝ անհանդուրժելի: Եւ հակառակ հարէնքն ջնջման և քաղաքային ամուսնութեան օրէնքին, մինչև հիմա ոչ մէկ քրիստոնեայ համարձակեցաւ թրքուհի առնել, առանց իրաւանալու:

Ինչպէս րահնք, այս տարրական բաները կը հասկենան թուրքիոյ բնիկները: Բայց չէ հասկցեր կամ հասկնալ չէ ուզած թուրք մը, այն ալ երեսփոխան:

Այդ մարդը, Հայասար Բիւշտի պէյ, որ թերթ մը կը հրատարակէ Իգմիրի մէջ (Ամասոյա), ցաւով դիտել կուտայ ինչ թուրք մամուլը չի կատարել իր պարտականութիւնը, և կը գոհանայ կառավարութեան «իրր թէ» իրագործած յանդուրժիւնները ծախհարելով: Եւ այս թերութիւնը կը վերադէպ անդորրութեան ամբարկուման օրէնքին առթած սարսփին:

— «Եթէ մեր մանկանք գրածներով հաւատամք, հայրենիքը արքայութեանն օնախնայիք բան մը չունի, իսկ ազգն ալ արքայութեան բոլոր բարիքները կը վայելի: Թիքիս աշխարհի մէջ այդպիսի երկիր մը իցայ, սակայն այդ երկիրը թուրքիամ չէ, ոչ ալ անոր բնակիչները» Թուրքեր:

Բայց երեսփոխան Բիւշտի պէյը ինք աւելի՞ համարձակ է՝ այս գետնին վրա, երբ ասպարէզ կը կարդայ թուրք խմբագիրներուն, որոնք ամէնին անվասխերէն հիստիյն շահիտը (Թանիլը), Կարուղի վէլիտը (Թ. Զիքեար), Ահմետ ձէվաթը (Դգուտա) և ուրիշներ, բոլորն ալ թթու թուրքեր, դատարանի դատարան բազըւցան, իրենց ասպարէզը լքելու աստիճան: Եւ միւսները խորապէս ազդելով, նախամեծար կը սեպեն խոհեմ լուսիւն պահել:

Արտասպենք իր ամէնէն քա՞լ խօսքերը, ընդհանուր բացազանցութիւններ.

— «Կառավարական միտք պաշտօնէութիւնը շատ խեղճ կը վնասուի և այս պարագան զուտ կը բանայ ամենօրեայ չարաշահութիւններու և կաշտակներու»

քեանց: Կառավարութիւնը ինչ ձեռնարկներ քած է այս մասին: Երկիրը անմարմնաց սղութեան կը տառապի: Ինչ քրաւ ժողովուրդին բնոր քեթեզմնելու համար: Ահաւասիկ շարք մը հարցումներ որոնց մասին լուս կը մնայ մամուլը:

Նորէն ամէնէն համարձակը, հին-տիպար թուրքն է, Ահմետ ձէվաթը, որ Պոլսոյ մէջ բունի թրքախօսութիւն պարտադրելու ձեռնարկին առթիւ, նորէն պարզեց թուրքիոյ հիմնական վէրքերէն մէկ-երկուքը.

— «Թուրքերէնի չտարածելուն պատճառ նորէն մեմէ՛ թուրքեր են: Թուրքերուն ընկերային յանցանքը մեծ է: Ճարտարաբանութը բացարձակ մեծամասնութեամբ կը գտնի թուրքերէն չգիտողներու ձեռք: Թուրքերը ոչ սակտարի, ոչ ալ արհեստներու մէջ դիրք ունին, որովհետեւ անգագար պետական պաշտօններու ետեւ կը վազեն: Շէնքի տը համար բոլոր անհրաժեշտ արհեստարարները ոչ-իսլամներ են: Թուրքերը բաժին չեն ունեցած բոլոր նոր արհեստներու մէջ... Գործառնութեանց մէջ պէտք է կարծ թուրքերէն բաները 3-400-էն աւելի չեն... Պէտք է կառնել չափ դպրաց չաղնիք և հարկը հազարաւոր թուրք մանուկներ անուսում կը մնան... Հայերը 70-80 տարի առաջ Տեւրիմաք քարգմանած են, այն ալ քէ աշխարհաբար և քէ գրաբար: 60 տարի առաջ երկրաբանական գիրքեր գրած են: Դարձակ, Կիլիկիանի և Ուղիսկանի պէլ զիբիր քարգմանած են, այն ալ ուսումնար... Ամէն բան մէկից ձգնիք, կրնա՞նք թուրքերէն լաւ բառարան մը ցուցնել...» (Իզուտալ, 16 յուն.):

Իրբև եզրակացութիւն, ձէվաթ պէյ կը նախատեսէ 20-30 տարան ճիգ մը: «Այն ստեն միայն կրնանք պահանջել որ բոլոր քաղաքացիները թուրքերէն խօսին»: Մինչ նոր սերունդի մարդը, խուճանավար Եօնուս Նատին, նմանապէս թուրքերէնի բունադատման ձեռնարկին յարողութիւնը կասկածելի գտնելով հանդերձ, կը փոփոխայ.

— «Իրան ստեն որ Պոլսոյ օտար և ոչ-իսլամ հաստատութիւնները չըբաջուին, անկարելի է որ այս ձեռնարկը գործնական արդիւնք մը տայ»:

Բանի որ անկարելիցն է, երկու սողով յիշենք ձեռնարկը. — Պոլսոյ իրաւաբանական համալսարանի ուսանողները յունար 13-ին արտակարգ ժողով մը գումարելով, կորոշեն թոյլ չտալ որ թուրքերէնէ տարրեր լեղու խօսի հանրային վարչերու մէջ: Այս նպատակով մարմին մըն ալ կը կազմեն և ծրագիր կը պատրաստեն, որուն առաջաձգ, պատերուն վրա յայտարարութիւններ պիտի փակցնեն, ինքնաշարժով ազգեր պիտի ցրեն և դրօշակներով պիտի ազդարարեն թէ թուրքիոյ մէջ արդիւնք է թուրքերէնէ տարրեր լեղու դործածել:

Ոսքէն գործի անցնելով, յալորդ օրը Վոսիտի մէջ շոքեմար կը մտնեն, և կազդարարեն որ բոլորն ալ թուրքերէն խօսին: Ճամբորդները, յանկարձակի կեանք, կը դարձնեն բազմալեզու խօսակցութիւնները. բայց թուրքերէն ալ չեն խօսիր, և յուս ու մուշ կը կենան մինչև նաւաւանոց...

Աղմուկի աստակացու քանի մը օր, թուրք թերթերն ալ, օրւան կարգախօսին համաձայն, նորէն բրբրեցին ոչ-թուրքերու «սպերխատութիւնը», «Այստեղ ապրող, այստեղ ուսող-խմող, այստեղ հարստացողները պարտաւոր են յարգել երկրի լեզուն»:

Բայց յանկարծ, լուսթիւն և տեսակ մը յեռո-կո-  
չում: Նոյնիսկ ոստիկանական քննութիւն: Իրբև թէ  
թիւրիմացութիւն է եղեր, ուսանողները միայն բազ-  
մանք են յայտներ կն: Եւ այժմ գործը յանձնած է  
«Թիւրք օճաղը»ներուն:

\*\*\*

Թրքական ռազմախաղ մըն էր այս ալ:

Օջախները եռանդով գործի սկսած են արդէն, և  
շատ անելի սիստեմատիկ: Կազմւած է մասնաւոր  
յանձնախումբ մը որ յարարերութեան պիտի մտնէ  
ուարբեր լեզուներով հրատարակւած թերթիքու խմբա-  
գրութեանց հետ, թրքախօսութեան ոյժ տալու համար:  
Այսինքն հայերէն կամ յունարէն թերթիքը հրապարա-  
կաւ պիտի յորդորեն որ իրենց մայրենի լեզուն չխօսին,  
այլ միայն թուրքերէն... Միևնոյն տրամաբանութեամբ,  
կրնան պահանջել որ օտարալեզու թերթ ալ չհրատարակ-  
ւի, որպէսզի վերջին յիշատակներն ալ անհետանան:

Յանձնախումբը յատուկ բանախօսութիւններ պիտի  
սարքէ նախնական և միջնակարգ վարժարաններու մէջ,  
տախտակներ պիտի կախէ շոգնանաւոր, չղեկառքե-  
րու և հանրակրթութեան մէջ, բոլորն ալ միևնոյն արդա-  
բարութեամբ — «Թուրքերէն խօսելիք»: Պետական  
օրկաններ ալ խառնած են կարաւանին, թէև կառա-  
վարութիւնը կը գոչւանայ իր երեսը ցուցնել: Արդէն  
իսկ Պոլսոյ քաղաքապետութիւնը հրահանգներ տուած է  
և, որպէսզի յաճախորդներուն հետ թուրքերէն խօսին.—  
1. Թատարներու և շարժանկարներու մէջ աշխատող-  
ները, 2. շրջուն վաճառորդները, 3. խանութպան-  
ները:

Փողոցէն անցնողներուն համար հրահանգի պէտք  
չկայ, որովհետև այսքան արդարարութիւններէ յետոյ,  
ամէն մարդ իր շուքն վախճալով, նոյնիսկ բարձրա-  
ձայն պիտի խօսի թուրքերէնը, որպէսզի չկարծեն թէ..  
դաւաղութիւն կը պատրաստեն, օտար լեզուով:

Նոր ասպարէզ մը՝ լրտեսութեան համար, որ ան-  
խափան կը ծողիկ թուրքերու մէջ, որքէ վարչաձևի  
տակ, սուլթանականէն մինչև քէմալականը:

— Ի՞նչ կը խօսէիր: Ինչօ՞ւ հայերէն կամ յունարէն  
խօսեցար...

Մեծ աղմուկով սկսաւ նաև թուրք համայնավար-  
ներու դատը, յուն. 18-ին, սակայն ծնաւ... մուկի  
չնչին:

Հարիւրի մօտ կալանաւորներէն դատի կանչւած  
էին միայն 57 հոգի: Ասոնց շարք ազատ արձակեցան,  
ամէնէն ծանր պատիժը կրեց դոկտ. Շէֆիք Հիւանի,  
րուն ստաշնորդը, 18 ամիս բանտարկութեամբ: Մնա-  
ցեալ 31 ամբաստանաւորները դատապարտուեցան 1-4  
ամիս բանտարկութեան:

Աւելորդ է շեշտել, որ ամբաստանաւորները այս  
աժան փրկութիւնը կը վարտան «քաղաքագիտական»  
նկատմաններու: Միևնոյն իշխանութիւնը չէ՞ր որ ու-  
սանց այլ եայլի ծովը թափել տաւ, Տրապիզոնի առջև,  
թուրք համայնավարութեան առաջին առաքեալները,  
Մանաւանդ որ նոր ամբաստանաւորներ, գոնէ գլխա-  
ւորները, բաւական կարուկ պատասխաններ տուած էին,  
դատավարութեան ընթացքին, իսկ ընդհ. դատախազը  
կը մատնանչէր թէ «անոնք որոշած են փոխել ազգին  
հիմնած վարչաձևը, որ արդիւնք է դարբեր է վեր  
թափւած արեւններու»:

Այս առթիւ, ամբաստանաւորներէն բանաստեղծ  
վէտատ Նէսին պէյ, պաշտօնեայ Պոլսոյ ոռու առե-  
տրական պատուիրակութեան, խոստովանեցաւ թէ բան-  
տարկեալ ընկերներուն կը փոխադրէր երեք ամիսը  
անգամ մը իրեն զրկւած 3500 տուրքը:

\*\*\*

«Իրօշակ»-ի վերջին թիւով տեղեկութիւններ հա-  
զորդած էինք համայնավարական գործունէութեան  
մասին, համաձայն թրքական պարիւրներու:

Մեր ձեռքը անցած փաստաթուղթ մը այլապէս  
չահեկան մանրամասնութիւններ կը պարունակէ:

Ձանսնք ամփոփել, դանց անկերով քանի մը  
անուններ:

Թուրքիոյ մէջ համայնավարական շարժման ամէնէն  
գործուն շրջանը եղած է 1923 թւականը: Այդ շրջանին  
դոկտ. Շէֆիք Հիւանի և ընկերները արտասահմանէն  
Պոլիս անցնելով, կը հիմնեն «Թուրք Հոգաբարձական-  
Ընկերավարական Կուսակցութիւնը», իրեն համայնա-  
վարական օրկան: Յետոյ, Պոլսոյ և Բերայի մէջ կը  
կազմւին երկու անջատ բլիշներ, որոնց մէկը կը կոչուէր  
«Թուրք Համայնավար Երիտասարդութիւն» (Պոլիս),  
միւսը՝ «Թուրք Համայնավար Կուսակցութիւն» (Բերայ):  
Անդամներուն մէջ կային ամէն ազգէ մարդիկ: Ասոնք  
Պուլիարիայէն «Ենչի Զիա» թերթը և ուրիշ գիրքեր և  
թուոցիկներ ստանալով, կը ցրէին: Սուրհանդակի  
պաշտօնը կը կատարէր թուրք վաճառական մը, որ  
կերթեկեկէր իր շողենաւով, և մասնաւոր յանձնարա-  
րութեամբ: Այս մարդը երևան հանեցաւ դատավարու-  
թեան առթիւ:

Դրամը կը հոռէր ստատօրէն, ծանօթ գործակալի  
մը ձեռքով: Դոկտ. Շէֆիք Հիւանի նախ հատարակեց  
«Այտըլըք» և յետոյ «Սըրաօ-Չէքիճ», որոնց պիտօճէն  
սպահոված էր ծանօթ պարիւրներէն: Այս թերթերն  
ալ, ինչպէս բոլոր նմանները, ոչ իսկ իրենց թուղթին  
ծախքը կը հանէին, և հազարներով կը բաժնէին ճրիւ-  
թար:

Ոստիկանութեան ջուճի փոխաւ 1923 մայիսին,  
երբ երևան հանեցին թուոցիկ մը, որ յատկապէս ուղ-  
ղւած էր Մ. Քէմալի դէմ, և կը վարկաբեկէր կառա-  
վարութիւնը: Եւ ծայր տաւ խիստ հալածանք մը:  
Հետապնդելով հանդերձ, կառավարութիւնը կը գոչու-  
անար շատ աղմուկ հանել, որպէսզի երկրին վարկը  
պահէ, ճիշտ ինչպէս որ այս անգամ դատավարութիւնը  
փակեց թեթև պատիժներով:

Բերայի բլիշին ղեկավարն էր Հրեայ մը, Կունց-  
պէրկ, որուն անունը յիշեցաւ դատավարութեան առ-  
թիւ, իսկ Պոլսոյ բլիշը կը վարէր Շէֆիք Հիւանի: Այս  
բլիշին բոլոր անդամներն ալ Թուրքեր էին, և մտեր-  
մական կապեր ունէին Կովկասէն զրկւած տիպոգոսա-  
ւորի մը հետ:

Մայիս 1-ի թուոցիկը տպւած էր 8-10,000 օրինակ.  
բայց երբ կարգադրութիւններ կրնէին բաշխման հա-  
մար, ոստիկանութիւնը լուր տաճ ըլլալով, յաջողե-  
ցաւ գրաւել: Դրանց նաև ուրիշ մաս մը, Ղալաթիոյ  
կողմը, Թուրքի մը տպարանէն:

Այդ միջոցին, աղմկալի ձեռքակալութիւն մը պիտի  
կատարէր բայց քէմալական իշխանութիւնը խոհե-  
մութիւն սկսեց ձեռք չզարնել խորհրդային հպատակ-  
ներուն, և հետապնդել միայն թրքահպատակները: Երբ  
ստալին ձեռքակալութիւնները սկսան, հովանուորները

յանին առին արհերով դբամ տալ և փաստարաններ վարձել, պայմանաւ որ ո՛ր և է խոստովանութիւն չըլլայ: Քսան օրան բանտարկութենէ յետոյ, կալա- նաւորներէն անոնք որ բլիշի անդամ էին, վրասուց հաս- տուցում ստացան կարծիր գործակալներէն, իսկ միա- ները լքեցան: Այս պատճառաւ էր որ, ամէն գաղտնիք երևան ելաւ, և կառավարութիւնը յաջողեցաւ հետեիլ բոլոր շարժումներուն:

Ինչպէս նման պարզաներու մէջ, այս առթիւ ալ, ջոջերը խոշոր պատաններ ստացան, իսկ խոնարհները՝ փշրանք: Այսպէս, մինչ վաճառական Աճմէս պէյ քա՛նի մը տասնհակ հազար ոսկի կիւրացնէր; անդին խեղճ մարդ մը (ոչ-թուրք) իր 5-600 ոսկի վնասին փոխարէն կը ստանար միայն քսան ոսկի, այն ալ անվերջ երթեկեկներէ յետոյ: Բուն գործակալներ կը շարունա- կէին դարձանալ, իսկ բանտները օրան հացի կարօ- տը կը քաշէին:

Վերջապէս, «կարմրած» Թուրքերէն մէկը որ իրա- կանին մէջ լրտես մըն էր, օր մը Բերա, Թողասլեանի մէջ, ինճոյքի վրա բռնելով շարժման կազմակերպիչնե- րը, կամաց մը կը մտտենայ և հարիւր ոսկի կը պահան- ղէ: Կոչնականները յանդարձակիի գալով, կը հանեն յիտեն ոսկի կուտան և հարիւր ալ կը խոստանան: Իսկապէս այդ գումարն ալ կը տրի, «մեծաւոր Դ-ի մէկ հրամանով, և խնդիրը կը փակի այդ օրան հա- մար...

Յունւար 16ի դատավարութեան առթիւ ալ, Թուրք Թերթերը, իբրև հաւատարիմ Թարգմանը օրան վա- րչիներուն, կըցան Ղուրնի երեսը ելլել, հաշտեցնելով Թուրքեպոլիտիկ սերակցորդ բարեկամութիւնը և... համայնավարներուն դէմ սարքած հալածանքը:

Նորէն ձիւմուրիյէթն է, Քէմալի Պոստյ բերանը:

— «Մենք դեռ առաջին օրէն ըսինք մեր հարևան Ռուսերուն. «Ձեր յեղափոխութիւնը մեծ է և գեղեցիկ ու անպայման ազդեցիկ՝ աշխարհի քաղաքականա- քեան մէջ: Բայց այդ յեղափոխութիւնը ձերն է, ձեզի յատուկ, և բնաւ չի յարմարիր մեր Թուրքիային, որ բոլորովին տարբեր պայմաններ ունի: Հետևաբար, ձեզի հետ անշեղի բարեկամ դառնալ փափաքած ատեն, կուզեմք բացէ ի բաց ըսել թէ Թուրքիա չի կրնար հանդուրժել որ իր հողին վրա համայնավարական շարժումներ փորձին»:

«Մեր հարևանները դժարութիւն չհաշտեցին հա- կնալաւ այս խօսքերուն անկեղծութիւնը: Եւ թարքա- ռուս դաշնագրին մէջ պայման դրեցաւ որ երկու կողմերէն իւրաքանչիւրը պիտի յարգէ միւսին վարչա- ձևը, և ամոր դէմ չպիտի արտայայտուի:

«Եթէ երբեմն հիշ-շատ խիստ միջոցներ ձեռք կտանին կարգ մը համայնավարական ձեռնարկներու դէմ, առոնցմէ ոչ մէկ վնաս կը ծագի թարքառուս բարեկամութեան համար»:

Արդարև:

# Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## Ն Ն Դ Ի Կ Ո Վ Կ Ե Ս Ե Ա Ն

### Դ Ե Ա Շ Ն Ա Կ Յ Ա Յ Ի Ն Հ Ն Ն Ե Ր Ե Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

12 Յայնք., Թիֆլիս.

«Անդրկովկասեան Դաշնակցային հանրապետու- Թիւնը արգարացրեց մեր սպասույթները...»

Այս խօսքերով են վերջացնում այժմ վրացի և Թա- Թար կոմունիստ ղեկավարները իրենց ճառերը ամէն տեսակ հաւաքոյթներում, ժողովներում, Թերթե- րում և կուսակցական համաժողովներում: Առիթը ընդ- դիմադիրներին վերադրած արտայայտութիւնն է, որ Անդրկովկասի դաշնակցութիւնը չի համապատասխա- նում ժողովուրդների շահերին: Այս մի տեսակ արգա- րացումն է՝ ուղղած վրացի և Թաթար շրջանակներին, որովհետև, երբ քննում էր դաշնակցութեան խնդիրը, հայ կոմունիստները և, յատկապէս, Մեանիկեանը առավ էր քաշում այդ խնդիրը, և դաշնակցութեան կազմութիւնը համարում էր «հայերի յաղթանակ»: Այդ «հայերի յաղթանակ» կոչածը, Թերևս, օգուտ տւեց Թիֆլիսում ամուր նստած հայ բուրժուազիային և բուրժուական մտաւորականութեան, մի չնչին մասին, որը Թիֆլիսում գործ էր փնտրում, և կոմունիստ Մեանիկեանը եղաւ այդ տարրի տնտեսական արտա- յայտիչը, բայց հայ ժողովուրդը դրանից շահ չստացաւ: Վրաց-Թաթարական բռնը ճարպկօրէն օգտագործեց

դաշնակցութիւնը, և այլևս ոչ ոքի համար դաղտնիք չէ, որ Հայաստանը հետեւողական կերպով զրկւում է իր բաժին նիւթական օտանդակութիւնից՝ լիովին կա- տարկելով հանդերձ բոլոր նիւթական պարտականու- Թիւնները և վճարելով անվերջ հարկեր:

Միջանկեալ ասեմք, որ այս տարաւ գերզմիա- հարկից պիտի ազատուին չքաւոր գերազիական տնտե- սութիւնները. Հայաստանում ազատեցին հարկից, կըր թւով, 800 տնտեսութիւն, իսկ Վրաստանում՝ 50 առ հարիւր բոլոր տնտեսութիւնների (Գուրիայում՝ 80 առ հարիւր): Վրաստանի հարկային հաստատութիւն- ները առանց վերապահումի ոչ մի հայ գերազու- տնտեսութիւն չեն ազատել. այդ հիմնարկութիւննե- րում: Նոր խօսք է՝ հրապարակ եկել ներքին գործածու- Թեան համար՝ «Վրացական գաղութները», ըստ որի հայկական Բուրչայուն «Վրաստանի Երկրպտան է», իսկ Ախալքալաբի շրջանի՝ «Վրաստանի Քանաղան»: Հա- մաձայն տասնամեակի դեկրետի գերհարկից եղած պարտքեր պիտի ջնջէին. պարզեց, որ Հայաստանում նման պարտքեր գերազանցներ լրա չէին մնացել, հե- տևաբար, ջնջելու բան չկար, իսկ Վրաստանում, աւելի ճիշտ վրացական շրջաններում հարկը չէին վճարել, և ներեց:

Բայց ընդհանրապես Կաշանկան հիմնարկութիւնները, չնչին բացառութեամբ, դարձան միջոցներ՝ «եղբայրական» Հայաստանի հաշիւն աւելի ևս հարստացնելու Վրաստանը: Թեւերը հրատարակուած են, և թեւերից դադարաւոր ունեցող ամէն մի անկողմնակալ մարդ ուրիշ եզրակացութեան չի կարող դալ, Երբ վէճեր են տեղի ունենում, վրաց-թաթարական բռնիք խնդրոյն հրապարակ է բերում զազմականներին յատկացած զորմարը (այս պատճառաբանութիւնը հարկուած է անվերջ), որը այս հինգ տարիներ ընթացքում 200,000 ուրբլի է հատուած (ասում են լատտեանները), իսկ ոմանց կարծիքով՝ 36,000 ուրբլի: Պարզել այդ թիւերը դժուար է, որովհետև հազար ու մի ձևով է հրատարակուած և հազար ու մի հիմնարկութիւնների անունով արձանագրուած:

Մի ուրիշ առարկութիւն էլ, յաճախ, հրապարակ են բերում վրացիները և թաթարները (պէտք է հասկանալ միշտ կոմունիստ), թէ Հայաստանը մեծ նիւթական օգնութիւն է ստանում հայկական զազմութիւններից, որից զուգը են Վրաստանը և Աղբրէշանը: Իսկ Ազգամալի օպիւն ասել է, թէ, հայ դադարութիւններից եկած զբաժնի մեծ մասը տաճիկ աշխատատեղիներն քրտիւնքից է և Աղբրէշանը իբրևուցներ ունի այդ օգնութեան վրա: Հայաստանը դեռ ևս զազմութիւններից ոչինչ չտեսաւ, բացի Չօկից ու Կոկից, որը «հիւրեր» բերել և ճանապարհ դրել, իսկ այս կոմունիստները, որպէսզի արտասահմանեան հակադաշնակցական պրօպագանդը վարեն, իրենց վրացի և թաթար ընկերներին գեղուցում են «հայկական նիւթական օգնութիւն» մասին այդ պրօպագանդից և դրամ քսանութ և քրօպական ճամբորդութիւնների համար:

Այժմ, երբ դաշնակցութեան կազմութեան դժմ արտայայտել են ընդդիմադիրները, զգալիացութեան հայ ջատագոյնները՝ ձայները կտրել են, իսկ պաշտպանների դերում հրապարակ են գալիս Սրախելաշիլի-լին, էլիլուան և ուրիշներ, ժամանակը էլիլուան, որը ստալ թունդը հակառակորդ էր դաշնակցութեան և ժամանակին իր ընկերների հետ մեծ արդէլքներ հանեց դաշնակցութեան դէմ: Այժմ նոյնիսկ շատ հայ կոմունիստներ արհտուած են, որ չպահանջին ուղղակի կապը Մոսկուայի հետ, այլ հպակցին Սրախելաշիլիներին: Բողջ անցածը անցած է, այլևս սրբազրել չեն կարող: Իտղզէն — ո՞ր՞՞ ճնշողներին: Չորոգէն — ջահէլներին հանդէպ: Իրենց հանդէպ: Գերազանց է չնգոջանալ կամ, աւելի ճիշտը՝ ուճիլը ստանալ և վերից արւած հրամանները կատարել, իրրե լինովիներ:

Պարզացած կը լինէ՞ք, որ հրամայած է մշակել Հնդամեայ ծրագիր արդիւարներութեան համար: Բազմաթիւ, տանկից շատ, ծրագրեր վրայիները ներկայացրին և ինչ հեղինակը, կարծուած հայ մասնազէտների ձևերով: Անդրկովկասեան շափանիչով յայտնի հայ տեխնիկ մասնազէտները Վրաստանում են աշխատում, Հայաստան չեն գնում: Վրացիները բոլոր հայերին, եսև հայ կոմունիստները, Երևանի ճանապարհ են ցոյց տալիս, բայց նրանց պահում են: Մի շատ պատուաւոր է յայտնի ժառանգելով, որը պիտի վերադարձանքը Պարսկանի հանքերը, և կը վերականգնել, հարբել են, թէ ինչո՞ւ վերադարձար. նա պատասխա-

նել է: «Իս հասակիս ամէն խնդրը կուլ տուց կոմսովը լսեմ, թէ դործ անեմ: Այստեղ աւելի լաւ է. ևս իմ հին, ցարական ժամանակի պաշտանն եմ կատարում, թէ ո՞վ է հրամայողը՝ Վարանդ՝ վր թէ ուրիշը՝ ինձ համար միևնոյն է, իսկ Հայաստանում սիրտս ցաւում է: Այստեղ իստակարեն, դործը փշաջանն — ինձ ի՞նչ, սիրտս չի ցաւում, իսկ Վարանդում սիրտս պիտի ցաւեր — թողէ՞ք»:

Վրացի ղեկավարները առ երես զապազավարի են: Եւ յետոյ, Թիֆլիսը մեծ զարպէ է: Կոմսովը մասնազէտի զբաւենեակին չի հասնում: Օտարներ են դաւրիս տնտեսական, առևտրական և այլ նպատակներով վրացիները մեղմ են խօսում: Իսկ հայ կոմունիստները... Վրացին «գեղեցիկ Վրաստանն» է գովում և գեղեցիկ հեռանկարներ բացում օտարների առջև, իսկ հայերը 1918 թ-ի կենիւնի պատգամներով են խօսում:

Մի օտարական այցելում է Լուկաշինին, Իւանեսունին, ինչպէս նաև վրացի ղեկավարներին: Իր ուղեկիցը, որ զարգը պիտի ցոյց տար, հարցնում է. ի՞նչ սպասարկութիւն ստացաք: Պատասխանում է. «Ելիւսան շատ մտաւորական և բարեկիրթ մարդ է երևում, իսկ Լուկաշինը և Իւանեսանը, ըստ երոյթիւն, չկիւտներ են»: Եւ, իրօք, հայ կոմունիստները ամէն տեղ չէկիտի համբաւ ունեն:

Այժմ հնգամսյա տնտեսական ծրագրի կազմութեան շուրջ խորը մտցակցութիւն է առաջ եկել երեք երկրներին՝ «կառավարութիւններին» միջև: Հայերը, բացի ջրանցքների խնդրից, որ լուծւած է և Բաղդատեանի պլանետար ծրագրերին շուրջիւ դանդաղաց, հրապարակ են բերել երկու յափազանց այժմէական և հիմնաւորած ծրագիրներ, որոնք շատ չին են և վարուց ծեծւած, քննութեան և փորձի նիւթ կարծած: Իրանցից առաջինը՝ Ալաւաֆա-Երևան երկաթուղային է, երկրորդը՝ Շիրակում շաքարի արդիւնաբերութեան հիմնումը: Այս երկու ծրագիրներին իրապօրո՞՞ւմը, իրօք, ուժեղ խթան կը լինի ներկայ Հայաստանի տնտեսական վերելքին: Երկրորդը համեմատաբար փոքր նիւթական միջոցներ է պահանջում:

Երկաթուղու ծրագրի մասին շատ դրեց, թէ մճուած խնդիր է. սկսելու թւահանն էլ յայտարարեց, ինչպէս և աւարտածն տարին: Հողագոր ու մի անգամ դրեց ու կրկնեց: Բայց ա՛հա էլիլուան գեղուցեց կուտակցական համազումարում Հնդամեայ ծրագրի մասին, և այդ երկաթուղու մտքին՝ ոչ մի փոքր: Հայ կոմունիստները հարցրին, թէ ի՞նչ եղաւ. պատասխանեց, թէ քննւած, պարզւած խնդիր չէ: Երկաթուղագծի ծրագիրը քսիւր-քսիւր անգամ քննեց Անդրկովկասեան Տնտեսական Խորհրդի մէջ և միշտ Երևանից պահանջեցին նոր տեսիւնը երկաթուղու արդիւնաւէշը, շատուոր լինելու մասին, Երևանում հասակացան, որ ոչ թէ պարզաբանութիւններ են ուղում, այլ ձգձգուած են, խոչընդոտներ հանում: Տնտեսական խորհրդուղակցութեան մէջ վրացիները թաղանէ էլին «ազգայնորի յետք», որոնցից Գ.Ն. Գիբիսամանը լիսակական պետական խորհրդական անցկարում, Վրաստանի Սահմանապէք ժողովի գրապահանակաւ մէնչեկիներով մամանակ, այժմ «ЭКОНОМ. Жизнь Закавказья» անդէպի խմբագրութեան անդամ, կիրը վրացուհի են, ինչը

վրացական շրջանակներին կապած), ձեփհանաական, շահի» պատճառաբանութիւններով զէմ է երկաթուղու ծրագրին: Երբ այս բոլորը կրկնեց մի քանի անգամ, Երևանում հասկացան, որ « Էդրայրական » Վրաստանը շատ պարզ պատճառով խանդարում է այդ ծրագրի իրագործման, որովհետև դրանից կարող է ստուգել Թիֆլիսը, վրացիների անդրկովկասեան գերիշխանութեան հիմքը, Հայաստանը էր տնտեսական կապերը կը կորէր Թիֆլիսից: Նիւթական տեսակէտից էլ Թիֆլիսը Հայաստանի համար արանդիտային կենտրոն չի լինի այլևս, որով վերջ կը դուրս բուրասյին գանձուներին, փթխատաբերին և այլն: Կարձ՝ Թիֆլիսի համար ձեռնառու է Երևան-Ալյաուսֆա երկաթուղին: Այն որ Թիֆլիսը ոչ մի հարատուութիւն չունի, բացի արանդիտից: Վրաստանի նկատմամբ նրա դերը, իբրև կենտրոնի, աւելի պակաս է, քան Հայաստանի և հայկական դաւանների համար:

Երևանում հասկացան վրացի ընկերներէր այս խաղը, բայց Գեղտմանները առաջիկութիւններին պէտք էր պատասխանել, «ընկեր վրացիների» վերաբերմունքը պէտք է պարզէր ոչ-հայ կոմունիստ մասնազէտների առաջ, ուստի և դերադասեցին մեն-մենակ, առանց մասնազէտների պաշտպանել ծրագիրը և լռեցին:

Ելիտան ձևակածներէր արգար է իր պատասխանի մէջ. Եւ յանուն էլիտանների «Վիշազգայնական» համբալի զոհեց և այդ ծրագիրը, որով հայ կոմունիստները ոգևորել էին ոչ միայն կոմսոմոններին, այլև շատ ուրիշներին, միեւն իսկ նախկին եպիսկոպոսներին:

Շաքարի արդիւնաբերութեան հիմնում էլ Երևանում հայ կոմունիստներն անցկացած խնդիր էին նկատում: Ի՞նչ արելէ կարող էր լինել: Տակնուղը առատ է և հարուստ շաքարով: Այդ ցոյց են տայի թէ նախապատերազմեան փորձերը և թէ ամբիկացիների փորձերը, ինչպէս նաև շաքարի արդիւնաբերողների նախկին ծրագիրները, երկաթուղու մտաբերութիւնը: Իրօք, փոքր դրամաքիով հնարաւոր է Երևանում առաջ բերել անտեսական յեղաշրջում և անտեսական խթան՝ Անդրկովկասեան շախմատիով: Ուկրայինայի շաքարի արդիւնաբերութիւնը հազիւ է բաւարարում չուկան, և կենտրոնը ոչինչ չի ունենայ վրա զէմ: Իսայ վրացի կոմունիստները նախանձից կը մեռնեն և միջոցը գտան. Գորիկի շրջանում ճակղեղ ցանցերն, Մոսկայից և Խարկովից «մասնազէտներ» բերին և գտան, որ ճակղեղը այնտեղ էլ «մեծ սպառք» ունի: Ճիշտ է, Երևանում շաքարանիւթը 30%-ից աւելի է, իսկ Գորիկում 17% է պտուսել, բայց ի նկատի ունենալով ռազմապետական նկատումները և արտաքին-գաղաքական պատճառները, «ամբողջ Անդրկովկասին ձեռնառու» է, որ նման կարևոր մի ճիւղ լինի երկրի ներքը և ոչ սահմանադրիւն: «Լուրջ նկատողութիւն է», ասացին հայ կոմունիստները և պապանձեցին:

«Անդրկովկասեան դաշնակցութիւնը արդարացրեց մեր սպասելիքները» կրկնում են վրացի և թաթար կոմունիստները, իսկ հայ կոմունիստները մի՞թէ ոչ մի խօսքով չեն կարողանում պաշտպանել դաշնակցութիւնը, դոնէ ըստ ձևի, մի՞թէ բոլորովին յուսահատուել են և նոյն մտախուժեան մէջ ընկել, որով որակեց

գաւառայի հայ կոմունիստի Կովկասի վերջին համարումարի հարցերը, թէ՛ «բա մեր ծրագիրները ի՞նչ եղան»... Նախազանգութիւնից այդ գաւառացիի մասին արտայայտեց «ըրշնակցական մտայնութիւն»:



Յ. Գ. Հայաստանի երկաթուղիներէր քայքայած վիճակը ուշադրութեան է արժանացել վերջերս գերման առևտրական պատուիրակութեան կողմից՝ իրենց Պարսկաստանի հետ վերականգնելու ճանապարհին գտնուող առևտրական յարաբերութիւնների շահերի տեսակէտից: Մեր երկաթուղին ուշադրութեան առարկայ է դարձել և խորհրդա-պարսկական առևտրական դաշնակցից յետոյ, ինչքան էլ վերջինս քաղաքական շարժառիթներով հնչուած լինի Թիւրքիան, որ վերջերս ուղեց օդուել արանդիտի իրաւունքներից, մերժում ստացաւ երկաթուղու փոխադրական կարողութեան փոքր լինելու պատճառով: Մտտակայ օրերին, ինչպէս ասում են, Անդրկովկաս է դալու թրքական յատուկ երկաթուղային մի յանձնաժողով «խորհրդակցելու», թէ ի՞նչ անել երկաթուղու փոխադրական կարողութիւնը մեծացնելու համար: Այս արտաքին ուժերի և շահերի թելադրանքը, թերևս, ստիպել է Հայաստանի երկաթուղագծի վրա ևս վերականգնել այն բոլորը, ինչ որ վերականգնուած է ամբողջ Միութեան սահմաններում: Պէտք է վերականգնել կայտարանները, կիսակայարանները, պահեստները և այլն և այլն: Առանց այդ բոլորի՝ Անդրկովկասի երկաթուղային վարչութիւնը, երկու տարի առաջ, Թիֆլիսում սկսեց շինել (շաժմ պատրաստ է) վարչութեան կենտրոնական մի շէնք վրացական ոճով, մինչդեռ վարչութիւնը իր շէնքն ունի և Թիֆլիսում ազատ մեծ շէնքեր՝ ինչքան կուղէ: Այժմ որ Թիֆլիսի բնակչութիւնը 70,000ով պակասել է: Պէտք է նկատել, որ երկաթուղային վարչութեան մէջ նոյնիսկ ձևակածներն բոլորովին այնքան յատուկ «Վիշազգային» կազմը բացակայում է. այդ կարևորագոյն վարչութեան մէջ հայ կոմունիստը տեղ չունի: Պետք ուս է, անդամները՝ վրացի:

Կասեն՝ թի՞ու սզգայնութիւն ենք անում: Մենք արձանադրում ենք միայն փաստը: Եթէ փաստերից թի՞ու ազգայնութիւն է դուրս դալիս — մեկըը մերը չէ: Неца на зеркало пенять, коли рожа крива. — կարելի չկայ հայելիէ վրա բարկանալ, երբ մուտքի ծուր է: Մենք ի՞նչ մեկը ունենք, որ «խորհրդային մտաթը» ծուր է:

ՏՆՏՏՍԱՎԱՐ

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Կ Ա Ն

Վ Ս Ա Ր Ո Ւ Մ

Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի Կեդրոնական կոմիտէին վճռով, Դաշնակցութեան շարքերէն՝ իրպատ վտարւած է Մարսիլիոյ ընկերներէն Յարութիւն Ժամկոչեան, իր հակակարգապահական արարքներու համար:

**ԲՈՎԱՆԵԴԱԿՈՒԹԻՒՆ**

1. Նոր ազգակ մը (Խմբագրական) . . . . .	33
2. Փետրուար 18 . . . . .	34
3. Արարատի կռիւները (Ե. Սըրիան) . . . . .	36
4. Ռուս-Անգլիական հակամարտութիւնը Արևել- քում (Ա. Արեղեան) . . . . .	38
5. Փոքր ազգերու ազատագրութեան խնդիրը և ուժերու հաստարկչութիւնը հին դիւա- նագիտութեան մէջ (Վ. Շուշանեան) . . . . .	42
6. Էջեր իմ օրագրից (Աշոտ) . . . . .	46
7. Համագործակցութեան մէկ դարը (Շ. Ժիզ) . . . . .	50
8. Ահաւր գիշերը (Բ. Իշխանեան) . . . . .	54
9. Թուրքիոյ շուրջ . . . . .	58
10. Անդրիովկասի Դաշնակցային հանրապետու- թիւնը (Տնտեսավար) . . . . .	61
11. Վտարում . . . . .	63

**ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ**

«Իրօշակ»-ի խմբագրութիւնը պէտք ունի  
հետևեալ ընկերներու նկարներու. —

Աւետիք Շահխաթունեանի, Խաչ. Կար-  
ճիկեանի, Սար. Մանասեանի, Արշ. Շիրինեա-  
նի, Ներ. Զաղէթեանի, Ներ. Աւագեանի,  
Պատ. Աթարէզեանի, Ծամաւորի, Պող. Զու-  
պարի, Հմ. Մանուկեանի, Պար. Կապուտիկեա-  
նի, Մովսէս Գիւլնազարեանի, Լ. Զարաֆեանի,  
Գ. Քեալաչեանի, Վարդ. Տէր-Թորոսեանի,  
Խաչ. Տէր Յովհաննիսեանի (գրաշար Խաչա-  
տուր), Փառնակ Յակոբեանի, Սասունցի Մա-  
նուկի, ուսանող Յ. Զարիֆեանի, բժ. Գազան-  
ջեանի (Կարսից), Լևոն Մուշեղեանի, գնդ-  
Մագմանեանի, Մոսիկ Օհանջանեանի, Սուրէն  
Թաղէոսեանի, Միհրան Թերլեմեզեանի, Ալ.  
Աւագելեանի, Մարգար Սարգսեանի, Հ. Մու-  
սայէլեանի, Հիպ. Զորխեանի, Պուլանդզի  
Մուրատի, Շիրինի և 1915-ի եղեռնին ու անկէ-  
հաջ, Հայաստանի կամ տարագրութեան մէջ  
նահատակած ու մեռած ընկերներու նկարնե-  
րը:

Խմբագրութիւնը կը խնդրէ բոլոր ընկեր-  
ներէն, որոնք ունեն յիշեալ ընկերներէն ունէ  
մէկի լուսանկարը, զրկել մեզ օգուելու և  
վերադարձնելու պայմանով:

Խմբագրութիւնս շնորհակալ կը լինի, եթէ  
զրկելիք նկարները ներկեն Հ. Յ. Գ. կենտրո-  
նական արխիւին:

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2Փր. 50 սանտ.

Մի շարք քիւրիմացութիւնների վերջ տալու

համար, խնդրում ենք մեր գործակալներին և բաժա-  
նորդներին, նամակներ գրելու և, մանաւանդ,  
դրամական առաւումների ժամանակ (մանտա-  
փոստեր) հասցէն գրել լրիւ ու անպայման ամբողջութեամբ  
դնել Mademoiselle բառը S. Agopian-ից առաջ:

«ԳՐՕՇԱԿ»-Ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

**Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի**

Գ. ԳԻՒԶԱԼՆԱՆԻ

Հայ քաղաքական մտքի զարգացումը և

Հ. Յ. Գաշնակցութիւնը

Հրատարակութիւն

Մատենաշար «ԳՐՕՇԱԿ»-Ի № 1

Գին՝ Յրանսա և Միւրիա 8 Փր. Ամերիկա, Եգիպ-  
տոս, Պարսկաստան և Անգլիա 50 սէնտ. ուրիշ  
երկրներ՝ 9 Փր.

Ստանալու համար դիմել՝ H. Kintouni,

36 av. Chevreul, Asnieres (Seine)

Հեռաձայն՝ Courbevoi 505.

«Հայրենիք»-ի խմբագրատուն, 13-15 Shawmut St,  
Boston Mass.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

«ԳՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեկիցն է Յրանսայի,  
Յուճաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Երպա-  
կան այլ երկիրների, Սիւրիայի և Պարսկական Ատր-  
պատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարստիկի,  
Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած  
բոլոր երկիրների համար՝ երկու դալար:

Բաժանորդադրել կարելի է էւրաքանչէր ամսի  
սկզբից:

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M<sup>re</sup> S. AGOPIAN.

5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)